



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ASU THE MELIKIAN CENTER:
Russian, Eurasian & East European Studies
ARIZONA STATE UNIVERSITY



ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ Գործընթացն ու արդյունքը

Լիլիթ Գարգրեյան
Ինգա Հարությունյան

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները (կամ նյութի բովանդակությունը) միմիայն հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Շնորհակալություն ենք հայտնում ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնին այս հետազոտության իրականացմանը և գրքի տպագրությանն աջակցելու համար:

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 316.346.2

ԳՄԴ 60.54

Գ 347

*Հրապարակության և երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Խմբագիրներ՝ Խ.Գ.Պ., պրոֆեսոր Ս. Հարությունյան
սոց.գ.թ., դոցենտ Գ. Շահնազարյան

Գարգրցյան Լ. Ա. , Հարությունյան Ի. Կ.

Գ 347 Գենդերային սոցիալականացում. գործընթացն ու արդյունքը/ Լ. Ա.
Գարգրցյան, Ի. Կ. Հարությունյան.-Եր., ԵՊՀ հրատ., 2016 , 94 էջ:

Գրքում վերլուծված են հայաստանյան հասարակությունում գենդերային սոցիալականացման գործընթացի տարբեր եզրաչեռտերը, այդ գործընթացի վրա ազդող և դրա միջոցով փոխանցվող հիմնական գենդերային պատկերացումներն ու կարծրատիպերը, այդ գործընթացի արդյունքում ձևավորվող գենդերային կարգավիճակները: Գրքում շարադրված գենդերային կարգավիճակների և գենդերային սոցիալականացման հիմնախնդիրների տեսական վերլուծությունը, ներկայացված հետազոտության արդյունքները կհետաքրքրեն սոցիոլոգներին, հոգեբաններին, մանկավարժներին, հարակից մասնագետներին և ուսանողներին:

ՀՏԴ 316.346.2

ԳՄԴ 60.54

ISBN 978-5-8084-2069-4

© ԵՊՀ հրատ., 2016

© Գարգրցյան Լ.Ա., 2016

© Հարությունյան Ի. Կ., 2016

Բովանդակություն

Նախաբան.....	5
1. Գենդերային կարգավիճակների վերարտադրությունը գենդերային սոցիալականացման գործընթացում.....	8
1.1. Կանանց և տղամարդկանց կարգավիճակները հասարակությունում	8
1.2. Կանանց նկատմամբ բռնությունը և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները որպես անհավասար գենդերային կարգավիճակների հետևանքներ	14
1.3. Գենդերային կարգավիճակները, նախապատվությունները և նորմերը հայկական ընտանիքում: Պատմաագագրական ակնարկ	17
1.4. Գենդերային պատկերացումների փոխանցումը սերնդեսերունդ. գենդերային սոցիալականացում	22
2. Գենդերային սոցիալականացման գործընթացի վերլուծություն	33
2.1. Հետազոտության մեթոդաբանությունը.....	33
2.1.1. Հետազոտության իրականացման մեթոդները	35
2.1.2. Հետազոտության ընտրանքը	35
2.2. Հետազոտության արդյունքները	37
2.2.1. Գենդերային պատերազումներ, կարծրատիպեր և տարբերակված վերաբերմունք. «Աղջիկը գնացող ա...», «Տղեն տան սյունն ա...»	39
2.2.2. Խրախուսվող, պարտադիր համարվող որակներ	50
2.2.3. Կնոջ և տղամարդու վերաբերյալ կրոնական պատկերացումներ «Տեր ու հնազանդ»	61
2.2.4. Դաստիարակչական պրակտիկաներ	66
2.2.5. Վարքի և դրսևորումների սահմանափակումներ	71
2.2.6. Սեռատիպիկ վարքի մոդելավորում	79
2.2.7. Ապագայի ակնկալիքներ.....	81
Վերջաբան	84
Gender socialization. The Process and Result (Research summary).....	87
Գրականության ցանկ	91

Նախաբան

Մարդու վարքի և բնավորության գենդերային առանձնահատկությունները ձևավորվում են հասարակությունում գերիշխող սեռադերային սպասումների, սեռային դերերի մոդելների ազդեցությամբ, որոնք, բեկվելով անձի հոգեկանում, ներքնայնացվում և դրսևորվում են անհատական մակարդակում: Սոցիալական ազդեցություններով պայմանավորված սեռային դերերի և սեռատիպիկ վարքաձևերի ու առանձնահատկությունների ներքնայնացման գործընթացը գենդերային սոցիալականացումն է կամ սեռադերային սոցիալականացումը: Եթե սոցիալականացումը մարդու կողմից սոցիալական փորձի, դերերի, հարաբերությունների համակարգի, հասարակայնորեն ընդունելի վարքի նորմերի, ստանդարտների յուրացման գործընթաց է, ապա գենդերային սոցիալականացումը դրա այն մասն է, որի ընթացքում մարդը յուրացնում է տղամարդկայնության և կանացիության սոցիալ-մշակութային պատկերացումները և ձևերը: Գենդերային սոցիալականացման արդյունքում են ձևավորվում կնոջը և տղամարդուն բնորոշ հակազդման ձևերը, հասարակությունում սեփական տեղի և դերի մասին պատկերացումները, համապատասխանաբար՝ կյանքի պլանավորումը և ապագայի հեռանկարները: Գենդերային սոցիալականացումն այն գործընթացն է, որի արդյունքում ձևավորվում է կնոջ և տղամարդու այն տիպը, որն ամենատարածվածն է տվյալ հասարակությունում և հանդիսանում է այդ հասարակության պահանջարկը և արդյունքը:

Երբ քննարկում ենք կնոջ և տղամարդու գենդերային կարգավիճակները, նրանց ձեռքբերումներն ու ներգրավվածությունը հասարակական գործընթացներում, հարկ է հաշվի առնել ոչ միայն այն, թե որքանով է տվյալ հասարակությունն աջակցում կամ խոչընդոտում կանանց առաջխաղացմանը, այլ նաև այն, թե ինչպիսի որակներով և մոտիվացիայով անձ է հասարակությունը ստեղծում կնոջից և տղամարդուց:

Հասարակությունը երկու տարբեր ուղղություններով իրականացնում է գենդերային կարգավիճակների սերնդեսերունդ վերարտադրության գործընթացը: Մի կողմից, այն շարունակաբար նպաստում կամ խոչընդոտում է կնոջ և տղամարդու ինքնիրականացմանը, ձեռքբերումներին ու ներգրավվածությանը հասարակական գործընթացներում՝ հստակ սահմանելով յուրաքանչյուրի սոցիալական տեղայնացումն ու գործառույթը: Մյուս կողմից, տվյալ հասարակությունում իրականացվող գենդերային սոցիալականացու-

մը, սնվելով առկա գենդերային կարծրատիպերից և գենդերային դերերի վերաբերյալ պահպանողական պատկերացումներից, նպաստում է կանանց ավելի համեստ հավակնությունների ձևավորմանը և սեփական սեռադերային գործառնություններում այնպիսի առաջնությունների հաստատմանը, որոնք չեն ենթադրում բարձր հասարակական դիրք կամ մասնագիտական ձեռքբերումներ: Գենդերային սոցիալականացման ընթացքում վաղ մանկությունից երեխային փոխանցվող կարծրատիպերը, պատկերացումները ստեղծում են գենդերային դերերի, կարգավիճակների բնականոն տրվածության պատրանք թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց շրջանում, ինչն առաջացնում է դրանց հետ համակերպվելու անհրաժեշտություն և բացառում է իրերի դրությունը փոխելու որևէ հնարավորություն:

Այդ պատճառով կարևոր է հասկանալ, թե գենդերային սոցիալականացման ընթացքում ինչ ձևերով և ուղիներով են փոխանցվում այն գենդերային դիրքորոշումներն ու կարծրատիպերը, որոնք նպաստում են ընտանիքում և հասարակությունում կանանց և աղջիկների թերաթվորմանը, անհավասար գենդերային կարգավիճակների ձևավորմանը և ամրապնդմանը:

Այս հետազոտությամբ փորձ է արվել բացահայտել Հայաստանում գենդերային սոցիալականացման հիմնական առանձնահատկությունները, այդուհանդերձ, հետազոտությունը չի ներառել գենդերային սոցիալականացման գործընթացի բոլոր կողմերը: Հետազոտության նպատակն է եղել բացահայտել գենդերային սոցիալականացման՝ հասարակությունում տղամարդկանց և կանանց անհավասար դիրքերի ձևավորմանը և ամրապնդմանը նպաստող առանձնահատկությունները: Հետազոտությունը հիմնականում անդրադարձել է գենդերային սոցիալականացման այն կողմերը, որոնք կապված են ընտանիքում և կրթական համակարգում առկա գենդերային կարծրատիպերի և դաստիարակչական գործընթացների, ինչպես նաև կնոջ և տղամարդու վերաբերյալ եկեղեցական գաղափարների ընկալման հետ:

Գրքում ամփոփված են ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի 2014 թ. փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացված «Գենդերային սոցիալականացման գործընթացի վերլուծություն. կանանց և աղջիկների կարգավիճակն ու հեռանկարները հայկական ընտանիքներում» հետազոտական ծրագրի, ինչպես նաև գենդերային կարգավիճակների և գենդերային սոցիալականացման վերաբերյալ տեսական աղբյուրների վերլուծության արդյունքները: Գրքի տեսական մասը ներկայացված է մեկ գլխով՝ «Գենդերային կարգավիճակների վերաբնակությունը գենդերային սոցիալականացման գործընթացում», որտեղ քննարկվում են գենդերային կարգավիճակների ձևավորման վերաբերյալ մոտեցումները, տղամարդկանց դոմինանտման պատճառները, այդ կարգավիճակների սերնդեսերունդ փոխանցման մեխանիզմները: Տեսա-

կան վերլուծությամբ բացահայտվում են գեոդերային սոցիալականացման էությունը, դրանում ներգրավված գործիչների շրջանակը, ցույց են տրվում տղաների և աղջիկների սոցիալականացման տարբերությունները: Գլխում մասն անդրադարձ է կատարվում Հայաստանում պատմական տարբեր ժամանակահատվածներում կանանց և տղամարդկանց նկատմամբ վերաբերմունքի, գեոդերային նորմերի և նախապատվությունների հարցերին:

Գրքի երկրորդ՝ «Գեոդերային սոցիալականացման գործընթացի վերլուծություն» գլխում ներկայացված են հետազոտության մեթոդաբանությունը և արդյունքները: Հետազոտության արդյունքներում նշանակալի տեղ է հատկացվել դուրս բերված գեոդերային կարծրատիպերի (որպես գեոդերային սոցիալականացման վրա ազդող հիմնական գործոն) ու գեոդերային կարգավիճակների վրա դրանց ազդեցության քննարկմանը: Բացի գեոդերային կարծրատիպերից, հետազոտության արդյունքները ներառում են մասն դաստիարակչական պրակտիկաների, վարքի և դրսևորումների սահմանափակումների, խրախուսվող որակների և ապագայի սպասելիքների գեոդերային տարբերությունների քննարկումը: Գիրքն ամփոփվում է վերջաբանով, որտեղ շարադրված են հետազոտության արդյունքներից արված եզրակացությունները, շեշտադրված են գեոդերային սոցիալականացման այն հիմնական առանձնահատկությունները, որոնք պայմանավորում են գեոդերային կարծրատիպերի վերարտադրությանը և գեոդերային անհավասար կարգավիճակների ձևավորմանը:

Այս գրքում շարադրված գեոդերային կարգավիճակների և գեոդերային սոցիալականացման հիմնախնդիրների վերլուծությունը, ներկայացված հետազոտության արդյունքները կհետաքրքրեն սոցիոլոգներին, հոգեբաններին, մանկավարժներին, հարակից մասնագետներին և ուսանողներին:

1. Գենդերային կարգավիճակների վերարտադրությունը գենդերային սոցիալականացման գործընթացում

1.2. Կանանց և տղամարդկանց կարգավիճակները հասարակությունում

Հասարակության մեջ կնոջ և տղամարդու կարգավիճակների հարցը, որպես սեռերի միջև հիերարխիայի երևույթ, եղել և մնում է գենդերային հետազոտությունների ուշադրության կենտրոնում: Գենդերային հիերարխիան հաճախ կապում են գենդերային դերերի հետ: Գենդերային դերերը տվյալ հասարակության մեջ կնոջը և տղամարդուն ներկայացվող մշակութային սպասումներն ու վերագրումներն են, իսկ գենդերային հիերարխիան պայմանավորված է նրանով, թե այդ հասարակության մեջ նշյալ վերագրումները որքանով են արժևորվում և որքանով են ազդում իշխանության, ռեսուրսների, հեղինակության բաշխման վրա: Գենդերային կարգավիճակների վերաբերյալ քննարկումները հիմնականում վերաբերում են տղամարդկանց գերակայությանը և դրա պատճառների պարզաբանմանը:

Տղամարդկանց գերակայությունը մեկնաբանող «մասնավորի և հանրայինի» դիխոտոմիայի տեսությունում որպես տղամարդկանց գերակայության պատճառ դիտարկվում է կնոջ մայրական և տնային տնտեսուհու դերը, որը պակաս իշխանություն և հեղինակություն պարունակող դեր է, քան տղամարդու ապրուստ վաստակողի դերը¹: Ի հակադրություն այս տեսության, Էռնեստին Ֆրիդլը համարում է, որ գենդերային կարգավիճակների ձևավորման հիմնական գործոնը տնտեսականն է. կանանց և տղամարդկանց իշխանությունը կախված է ռեսուրսների բաշխումից, ավելի շատ իշխանություն ունի այն սեռը, որը վերահսկում է տնտեսական ռեսուրսները²:

Սեռերի փոխընդհանուր բնույթի տեսանկյունից են գենդերային կարգավիճակներն ու դերերը մեկնաբանել կառուցվածքային ֆունկցիոնալիստները: Ըստ Թ. Պարսոնսի, սոցիալական դերերը բնական անհրաժեշտություն են, որոնք բխում են օրգանիզմների սեռական երկձևությունից և ունեն փոխընդհանուր բնույթ: Ընտանիքում կա երկու հիմնական դեր՝ էքսպրեսիվ,

¹ Armstrong C., Squires J., (2002). Beyond the Public/Private Dichotomy // Contemporary Political Theory N1, (pp. 261-283).

² Friedl E., (1978). Society and Sex Roles.// Human Nature. April (pp.149-158).

որի գործառույթը ներընտանեկան հարաբերությունների կարգավորումն է, և ինստրումենտալ, որի գործառույթն ընտանիքի և հասարակության միջև հարաբերությունների կարգավորումն է: Մանկածնության և խնամքի կնոջ կենսաբանական հնարավորությունը նրան դարձնում է ավելի հարմար էքսպրեսիվ դերի կատարման համար, իսկ ինստրումենտալ դերը բաժին է ընկնում տղամարդուն³:

Գենդերային (սեռագենդերային) համակարգերի տեսանկյունից է փորձել մեկնաբանել սեռերի հիերարխիայի երևույթը Գեյլ Ռուբինը, որն իր գաղափարները կառուցել է Ջ. Ֆրոյդի հոգեվերլուծական և Կ. Լևի-Ստրասը ստրուկտուրալիստական մարդաբանության տեսությունների համադրմամբ: Ռուբինի կարծիքով, յուրաքանչյուր հասարակությունում առկա սեռ/գենդեր համակարգի միջոցով վերարտադրության կենսաբանական առանձնահատկությունները, վերափոխվելով սոցիալական համակարգի ազդեցությամբ, դառնում են մարդկային հարաբերությունների կարգավորման միջոցներ: Կանանց և տղամարդկանց անհավասար կարգավիճակները պայմանավորված են ոչ թե ուղղակիորեն սեռի կենսաբանական առանձնահատկություններով, այլ այդ առանձնահատկությունների հետ զուգորդվող սոցիալական իմաստներով: Այդպիսով, արական սեռական առանձնահատկությունները (ֆալոսը) դառնում են իշխանության և հասարակական ակտիվության խորհրդանիշ, իսկ կանայք, որպես այդ խորհրդանիշից զրկված էակներ, հանդես են գալիս դրա փոխանցողների դերում: Ռուբինի տեսությունում նաև ընդգծված է ազգակցական համակարգում սեռական-ամուսնական հարաբերությունների կարգավորման մեխանիզմների հետևանքով առաջացած տղամարդկանց կողմից կանանց «տիրապետելու» և փոխանակելու երևույթի ազդեցությունը կանանց ստորադաս կարգավիճակի ձևավորման վրա⁴:

Համանման գաղափարի է հանգում նաև Մ. Գոդիլիերը, որը գենդերային անհավասար կարգավիճակների գլխավոր պատճառներից մեկը համարում է այն, որ տղամարդիկ վերահսկում են ոչ միայն արտադրության նյութական գործընթացը, այլ նաև կանանց վերարտադրողականությունը⁵:

Գենդերի սոցիալական կառուցակցման տեսությունում (Կ. Ուեսթ և Դ. Ջիմերման) գենդերը վերլուծվում և մեկնաբանվում է առօրյա հարաբերություններում իրականացվող գործողությունների և պրակտիկաների համատեքստում: Գենդերի կառուցակցման գործընթացը հասկանալու համար տարբերակում են կենսաբանական սեռը (կենսաբանական հատկանիշների

³ Parsons T., (1964) Social Structure and Personality. New York: Free Press.

⁴ Рубин Г. 2000. Обмен женщинами: заметки о “политической экономии” пола // Хрестоматия феминистских текстов. Переводы / Под ред. Е. Здравомысловой и А. Темкиной. СПб.: Д. Буланин. (стр. 89-139).

⁵ Godelier M., (1981). The origins of male domination. – New Left Review, 127, 17.

համակցությունը, որը սոսկ նախադրյալ է անհատին այս կամ այն սեռի համարելու համար), սեռի վերագրումը (սոցիալական կատեգորիզացիան ըստ սեռի) և գենդերը (ձեռքբերովի կարգավիճակ, որն ամենօրյա փոխազդեցությունների հետևանք է): Գենդերը չի ձևավորվում մեկընդմիջտ, այլ մշտապես զարգանում և վերարտադրվում է հաղորդակցական իրադրություններում: Գենդերը միջանձնային փոխազդեցության համակարգ է, որի միջոցով կառուցվում, ամրապնդվում, հաստատվում և վերարտադրվում են տղամարդկային և կանացիի վերաբերյալ պատկերացումները՝ որպես սոցիալական կարգի հիմնարար կատեգորիաներ: Գենդերի կառուցակցումը տեղի է ունենում անընդհատ միկրոմակարդակի բոլոր հաղորդակցական իրավիճակներում՝ ամենօրյա «այստեղ և հիմա» փոխազդեցություններում ձևավորելով և վերարտադրելով սեռերի անհավասար կարգավիճակները: Ըստ որում, անհատներին ըստ սեռի այս կամ այն կատեգորիայի դասելը համարվում է կարևոր պայման սոցիալապես կոմպետենտ վարքի և հաջող հաղորդակցման համար: Վերագրումը որևէ սեռի տեղի է ունենում տվյալ հասարակությունում ընդունված գենդերի կառուցակցման կանոնների հիման վրա և պայմանավորված է գենդերային դիսփիլեյով⁶:

Գենդերային դիսփիլեյ հասկացությունը ներմուծել է Ի. Հոֆմանը, որը ևս դիտարկում էր սեռային տարբերությունները սոցիալական փոխազդեցության տեսանկյունից: Գենդերային դիսփիլեյը սեռական պատկանելության սոցիալապես պայմանավորված դրսևորումների բազմազանությունն է դեմառդեն հաղորդակցական իրավիճակներում. այն հանդիսանում է գենդերի ստեղծման մեխանիզմը: Միջանձնային հաղորդակցումը կոնկրետ իրավիճակում ուղեկցվում է գրուցակցին կանանց կամ տղամարդկանց կատեգորիային դասելու չգիտակցված գործընթացով, ինչը տեղի է ունենում ստացվող բազմաբնույթ ինֆորմացիան (մարմնական տեսք, սիմվոլիկա, ձայն, հաղորդակցման ոճ, բովանդակություն և այլն) ավանդական «իգական» կամ «արական» ստանդարտներով տարբերակելու միջոցով: Քանի որ սեռի վերագրումը հաղորդակցման անխուսափելի հիմնարար պրակտիկան է հանդիսանում, գենդերային դիսփիլեյը որոշիչ նշանակություն է ունենում միջանձնային հաղորդակցման հաջողվածության համար: Գենդերային դիսփիլեյը համընդհանուր չէ, այլ պայմանավորված է մշակույթով և իշխանական հարաբերություններով⁷: Այսպիսով, գենդերի սոցիալական կառուցակցումը միջանձնային հաղորդակցման ամենօրյա պրակտիկաներում գենդերային առանձնահատկությունների ստեղծման, պահպանման և դրսևորման երևույթն է, որը ենթադրում է նաև անհավասար կարգավիճակների ստեղ-

⁶ Уэст К., Зиммерман Д., (1997). Создание гендера // Гендерные тетради. Труды СПб филиала ИС РАН (с. 94 – 124).

⁷ Goffman E. (1979). Gender Advertisements. New York: Harper and Row.

ծումն ու վերարտադրումը:

Առավել ամբողջական է Ռ. Քոնելի «գենդերային կոմպոզիցիայի» մոտեցումը, որի շրջանակներում գենդերային հարաբերությունների հիմնահարցը դիտարկվում է որպես գենդերային պրակտիկաների և սոցիալական կառուցվածքների փոխազդեցության գործընթաց: Ամենօրյա պրակտիկաները կառուցում են սոցիալական փոխհարաբերությունները (միկրոմակարդակ), իսկ սոցիալական կառուցվածքները սահմանափակում և կարգավորում են այդ պրակտիկաները (մակրոմակարդակ): Այստեղ կարևոր է այն, որ պրակտիկաների սուբյեկտը համարվում է այնպիսի գործիչ, որը սահմանափակվում է կառուցվածքների կողմից, սակայն միաժամանակ կարող է ազդել դրանց վրա և փոփոխել⁸: Ռ. Քոնելը գենդերը համարում է հարաբերական հասկացություն, կանացիությունը և տղամարդկայնությունը պրակտիկաների համախումբ են, որոնք սահմանվում, ոչ թե ամբողջությամբ պարտադրվում են սոցիալական հարաբերությունների կառուցվածքի կողմից: Կանացիությունը և տղամարդկայնությունը հանդես են գալիս ոչ թե որպես մեկընդմիջ տրված, այլ որպես մշտապես ստեղծվող նույնականություններ: Գենդերային կոմպոզիցիան սոցիալական իրականություն է, հին և նոր գենդերային պրակտիկաների կառուցվածքային հնարավորությունների համակարգ, որն ընդգրկում է երեք հիմնական ոլորտ՝ աշխատանք և տնտեսություն, քաղաքականություն և հուզական հարաբերություններ: Կառուցվածքային հնարավորությունների այս երեք ոլորտները սահմանում են կոնկրետ սոցիալական ինստիտուտում (ընտանիք, պետություն, կազմակերպություն և այլն) գենդերային փոխազդեցությունների «խաղի կանոնները»⁹:

Ռ. Քոնելը պնդում է, որ հասարակությունը տղամարդկանց ներկայացնում է ագրեսիվ, ռիսկային, հուզականորեն սառը և կանանց հանդեպ դոմինանտ լինելու պահանջներ, և տղամարդկության այս տեսակն անվանում է «հեգեմոնիկ տղամարդկություն»: Տղամարդկանց սոցիալական դիրքը մասամբ կախված է նրանից, թե որքանով նրանք կհամապատասխանեն տղամարդկայնության այս ստանդարտին: Եվ չնայած տղամարդկանց մեծամասնությունը չի կարող լիարժեք համապատասխանել «հեգեմոնիկ տղամարդու» կերպարին, այս ստանդարտը շարունակում է գոյություն ունենալ, քանի որ տղամարդկանց համար շահեկան է կանանց նկատմամբ իշխանական և դիրքային առավելություն ունենալը¹⁰:

Այսպիսով, գենդերային կարգավիճակների պատճառները տարբեր կերպ են մեկնաբանվել՝ կենսաբանական նախադրյալներով պայմանավոր-


⁸ Connell R. (1987). Gender and Power: Society, the Person, and Sexual Politics, Satnford, Stanford University Press.

⁹ Connell, R. (2002). Gender. Cambridge, U.K.: Polity Press, p. 10.

¹⁰ Connell, R. (2005). Masculinities (2nd ed.). Sydney: Allen & Unwin Australia.

վածությունից մինչև զուտ մշակութային, սոցիալական կառուցակցման արդյունք: Պետք է նաև նշել, որ գենդերային կարգավիճակները շատ տարբերվում են տարբեր մշակույթներում և նույն մշակույթում տարբեր պատմական ժամանակահատվածներում: Դժվար է գնահատել որևէ կոնկրետ հասարակությունում կնոջ և տղամարդու կարգավիճակների հավասարությունը/անհավասարությունը, քանի որ չկա միանշանակ կարծիք այն չափանիշների վերաբերյալ, որոնցով պետք է գնահատվեն և համեմատվեն այդ կարգավիճակները:

Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի կողմից մշակված գենդերային հավասարության ինդեքսում (ԳՀԻ) առանձնացված են գենդերային հավասարության/անհավասարության դրսևորման հետևյալ հիմնական բնագավառները՝ աշխատանք, փող, գիտելիք, ժամանակ, իշխանություն, առողջություն: Իսկ բռնությունը համարվում է գենդերային հավասարության արբանյակային բնագավառ: Արբանյակային բնագավառ է համարվում նաև «համակցված անհավասարությունը», որը ցույց է տալիս սեռի և այլ զուգակցվող գործոնների (օրինակ, ազգություն, տարիք, ռասա, կրոն և այլն) համակցված ազդեցությունը գենդերային հավասարության վրա:



Նկ. 1. Գենդերային հավասարության ինդեքսի բաղադրիչները¹¹

¹¹ The European Institute for Gender Equality (EIGE)., (2013). Gender Equality Index Report.

Գենդերային հավասարության ինդեքսի առաջին բաղադրիչը՝ աշխատանքը, վերաբերում է աշխատաշուկայում (վճարվող աշխատանքում) կանանց և տղամարդկանց կարգավիճակների տարբերությանը:

Երկրորդ բաղադրիչը՝ փողը, վերաբերում է կանանց և տղամարդկանց ֆինանսական ռեսուրսների և տնտեսական իրադրության տարբերություններին. կանայք սովորաբար ֆինանսապես ավելի անբարենպաստ վիճակում են լինում, ինչը մեծացնում է նրանց սոցիալական մեկուսացման վտանգը:

Երրորդ բաղադրիչը՝ գիտելիքը, առնչվում է կրթության համակարգում և գործընթացում կանանց և տղամարդկանց տարբերություններին: Եթե ասիական և աֆրիկյան երկրներում անհավասարությունը դրսևորվում է կանանց և տղամարդկանց կրթական մակարդակում, ապա եվրոպական այն երկրներում, որտեղ կրթությունը հավասարապես հասանելի է երկու սեռին, գենդերային տարբերությունները դրսևորվում են առարկաների, մասնագիտությունների ընտրության և ուսումնառության, ինչպես նաև կանանց ակադեմիական կարիերայի և առաջխաղացման մեջ:

Չորրորդ բաղադրիչը ժամանակն է, ոլորտ, որում չափազանց արտահայտված է գենդերային անհավասարությունը, քանի որ կանայք անհամամասնորեն շատ ժամանակ են հատկացնում խնամակալության գործունեությանը, քան տղամարդիկ: Գործունեությունների բաժանումը արդյունավետի (նյութական ռեսուրսների հայթայթում) և վերարտադրողականի (խնամք), ինչպես նաև վերջինիս արժեզրկումն առաջինի համեմատ, գենդերային անհավասարության հիմք է ստեղծում:

Հինգերորդ բաղադրիչը՝ իշխանությունը, վերաբերում է քաղաքական, սոցիալական և տնտեսական ոլորտներում որոշումներ ընդունող մարմիններում կանանց և տղամարդկանց ներկայացվածության տարբերություններին:

Վեցերորդ բաղադրիչը՝ առողջությունը, ներառում է, առողջության կենսաբանական տարբերություններից զատ, առողջության վրա ազդող այն գործոնները, որոնք ունեն գենդերային պայմանավորվածություն՝ առողջապահական ծառայությունների հասանելիություն, առողջության պահպանմանն ուղղված վարք և առողջական վիճակ¹²:

Այսպիսով, գենդերային կարգավիճակները ձևավորվել են դերերի և աշխատանքի սեռային բաշխման, ռեսուրսների և իշխանության անհավասար տիրապետման հետևանքով: Չնայած գենդերային պատկերացումների մի շարք փոփոխություններին և որոշ երկրներում առկա հարաբերական հա-

Italy, p. 19.

¹²The European Institute for Gender Equality (EIGE)., (2013). Gender Equality Index Report. Italy, p. 18-33.

վասարությանը, մշակույթների մեծամասնությունում կնոջ և տղամարդու անհավասար կարգավիճակները շարունակում են մնալ որպես ընդունված կարգ և վերարտադրվում են յուրաքանչյուր հաջորդ սերնդում: Գենդերային անհավասարության հարցը հատկապես հրատապ է համարվում, քանի որ հասարակությունում կնոջ հարաբերականորեն ցածր կարգավիճակն ունենում է մի շարք անցանկալի հետևանքներ, այդ թվում գենդերով պայմանավորված բռնությունն ու սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները:

1.2. Կանանց նկատմամբ բռնությունը և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները որպես անհավասար գենդերային կարգավիճակների հետևանքներ

Գենդերային հավասարության ինդեքսում գենդերով պայմանավորված բռնությունը (կանանց նկատմամբ բռնություն) դիտարկվում է որպես կանանց նկատմամբ մասքուլին իշխանության դրսևորում¹³: Գենդերով պայմանավորված բռնությունը (ԳՊԲ) տարածված երևույթ է, որը բազմազան դրսևորումներ ունի՝ սեռական, ֆիզիկական և տնտեսական բռնություն, աշխատանքային ոտնձգություններ, արժանապատվության ոտնահարում, մանկամուսնություն, կանացի սեռական օրգանների անդամահատում և այլն: Համաշխարհային առողջապահական կազմակերպության 2013 թ. հետազոտությունում բացահայտվել է, որ ողջ աշխարհում 35 տոկոսից ավելի կանայք ենթարկվել են գուգրնկերոջ կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության կամ սեռական բռնության իրենց գուգրնկերը չհանդիսացող անձի կողմից¹⁴:

Գենդերով պայմանավորված բռնությունը հիմնված է իշխանության անհավասար գենդերային բաշխումից սկիզբ առնող գենդերային դերերի և նորմերի վրա, հետևաբար, կանայք ավելի հաճախ են ենթարկվում ԳՊԲ-ն¹⁵: Ըստ որում, դեպքերի մեծամասնությունում կանանց նկատմամբ բռնությունը կատարվում է ընտանիքի անդամի կամ գուգրնկերոջ կողմից: «Տղամարդկանց և գենդերային հավասարության միջազգային հետազոտության»

¹³ The European Institute for Gender Equality (EIGE)., (2013). Gender Equality Index Report. Italy, p. 31.

¹⁴ Garcia-Moreno, C., Pallitto, C., Devries, K., Stockl, H., Watts, C., & Abrahams, N. (2013). Global and regional estimates of violence against women: prevalence and health effects of intimate partner violence and non-partner sexual violence. Geneva: World Health Organization.

¹⁵ Corman W.C., (2013). Sexual and Gender-Based Violence: What is the World Bank Doing, and What have We Learned? A Strategic Review. World Bank: SocialDevelopment. Washington, p. 7.

(IMAGES) տվյալներով՝ զուգընկերոջ կողմից կատարված բռնության տարածվածությունը տատանվում է 25-ից 40 տոկոսի սահմաններում տարբեր երկրների տվյալներով: Ըստ որում, գենդերային անհավասար դիրքորոշումներ ունեցող տղամարդկանց շրջանում մեծ է զուգընկերուհիների նկատմամբ կատարված բռնության հաճախականությունը հետազոտության մեջ ներգրավված բոլոր երկրներում¹⁶:

Այսինքն՝ գենդերով պայմանավորված բռնության պատճառականության մեջ նշանակալի դեր ունեն գենդերային հավասարության վերաբերյալ պատկերացումները: Այս փաստն ապացուցվում է նաև նրանով, որ գենդերի և գենդերային հարաբերությունների վերաբերյալ դիրքորոշումների փոփոխությունը հանդիսանում է գենդերով պայմանավորված բռնության կանխարգելման որոշիչ գործոն^{17,18}:

Գենդերով պայմանավորված բռնության յուրատեսակ դրսևորում է սեռով պայմանավորված հղիության ընդհատումը, որի հետևանքով շատ երկրներում արհեստականորեն խախտվել է սեռերի համամասնությունը¹⁹:

Հայաստանում 2011 թ. ՄԱԿ բնակչության հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ մեր երկրում նորածինների սեռերի համամասնությունը կազմում է 100 աղջիկ/114-115 տղա, որն աշխարհում երրորդ տեղում է արական սեռի նորածինների գերակշռման առումով և զիջում է միայն Չինաստանին (100/118) և Ադրբեջանին (100/116)²⁰:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ հղիության ընտրողական ընդհատումների աճը պայմանավորված է երեք հիմնական պատճառներով.

1. Հայրիշխանական մշակույթներում, որտեղ կանայք ունեն մարզինալ սոցիալական և տնտեսական կարգավիճակ և սահմանափակ իրավունքներ, արու զավակը համարվում է ավելի նախընտրելի, քան իգական սեռի զավակը:

2. Պրենատալ ախտորոշման տեխնոլոգիաների զարգացումը, որոնք

¹⁶ Barker, G., Contreras, J.M., Heilman, B., Singh, A.K., Verma, R.K., and Nascimento, M., (2011). *Evolving Men: Initial Results from the International Men and Gender Equality Survey (IMAGES)*. Washington, D.C.: International Center for Research on Women (ICRW) and Rio de Janeiro: Instituto Promundo. p. 44-45.

¹⁷ Heise, L. (2011). *What works to prevent partner violence? An Evidence Overview*: London: London School of Hygiene and Tropical Medicine.

¹⁸ Ricardo, C., Eads, M., & Barker, G. (2011). *Engaging boys and young men in the prevention of sexual violence: A systematic and global review of evaluated interventions*. Pretoria: South Africa: Oak Foundation.

¹⁹ UNFPA. (2012). *Sex Imbalances at Birth. Current Trends, Consequences and Policy Implications*. – Bangkok.

²⁰ **Գիմնոտ Բ. Ջ.**, Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. Ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն: - Երևան, 2013, էջ 9:

թույլ են տալիս ծնողներին իմանալ իրենց չծնված երեխայի սեռը և դիմել հղիության օրինական կամ անօրինական ընդհատման:

3. Ցածր ծնելիությունը. երեխաների քվի սահմանափակումը և պարտադիր տղա ունենալու ցանկությունը բերում են ընտանիքին հղիության արհեստական ընդհատման որոշման, եթե պտղի սեռն անցանկալի է նրանց համար²¹:

Այս երեք գործոններից առանցքային է արական սեռի երեխա ունենալու ձգտման ուժգնությունը, քանի որ, օրինակ, Արևմտյան Եվրոպայի մեծ մասում ցածր ծնելիությունն ու արդիական վերարտադրողական տեխնոլոգիաների հասանելիությունը չեն հանգեցրել սեռերի հարաբերակցության շեղումների այն պատճառով, որ բացակայում են նշանակալի գենդերային նախապատվությունները²²:

ՄԱԿ բնակչության հիմնադրամի հետազոտությունների, ինչպես նաև Վորլդ Վիթն Հայաստան կազմակերպության հետ համատեղ անցկացրած մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հայաստանյան ընտանիքներում արու զավակի նախապատվության հիմքում ընկած են հետևյալ հիմնական պատճառները.

1. Տղաները համարվում են գերդաստանի շարունակողներ:
2. Տղաները դիտարկվում են որպես ընտանեկան ունեցվածքի ժառանգորդներ:
3. Տղաներն ընտանիքի ֆինանսական բարեկեցության ապահովողներն են:
4. Տղաները թե՛ սեփական տան, թե՛ հայրենիքի պաշտպանն են:
5. Տղաները շարունակում են ապրել հայրական ընտանիքում, իսկ աղջիկներն ամուսնությունից հետո լքում են հայրական տունը և դադարում են պատկանել հայրական ընտանիքին (պատրիլոկալ ընտանիքի մոդել):
6. Աղջիկների/կանանց հոգաշատությունը և ծնողների մտահոգվածությունը նրանց ճակատագրով, քանի որ նա «ուրիշի ձեռքում» է^{23,24}:

²¹ UNFPA. (2012). Sex Imbalances at Birth. Current Trends, Consequences and Policy Implications. - Bangkok, p. 10.

²² **Գլխուտո Ք. Ջ.**, Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. Ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն: - Երևան, 2013, 1, էջ 24:

²³ UNFPA Հայաստան. Մեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում, Զեկույց. Երևան: UNFPA, Առողջապահության նախարարություն, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ, Երևան, 2011, էջ 32-33:

²⁴ **Գարգրյան Լ.**, Հայաստանում արու զավակի նախապատվության պատճառները: - Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ:

Այսպիսով, պարզ է դառնում, որ տղամարդկանց գերակայությամբ մշակույթներում գենդերային անհավասար կարգավիճակները զուգակցվում են կանանց և իգական սեռի զավակների պակաս արժևորմամբ, ինչն էլ հանգեցնում է նրանց նկատմամբ բռնության դրսևորումների մույնիսկ մինչև լույս աշխարհ գալը:

1.3. Գենդերային կարգավիճակները, նախապայությունները և նորմերը հայկական ընտանիքում: Պատմաազգագրական ակնարկ

Հայաստանում գենդերային կարգավիճակները տարբեր պատմական ժամանակահատվածներում բավական տարբերվել են՝ կնոջ ակտիվ և տղամարդուն գրեթե իրավահավասար կարգավիճակից մինչև կնոջ խիստ սահմանափակումներ ու կախյալ կարգավիճակ: Տարբերվել են նաև տարբեր գավառների կամ լեռնային ու դաշտային շրջանների կանանց կարգավիճակները՝ պայմանավորված տնտեսության ձևով և ռազմաքաղաքական իրադրությամբ: Գենդերային կարգավիճակների և նորմերի վրա ազդեցություն են թողել նաև այն երկրների մշակութային առանձնահատկությունները, որոնց տիրապետության տակ գտնվել է Հայաստանը: Շարունակաբար սպառնացող վտանգները, կանանց օտարների գերեվարումից պաշտպանելու և հայկական գենը մաքուր պահելու անհրաժեշտությունը հանգեցրել են մի շարք սովորույթների առաջացման, որոնք իրենց ժամանակին ունեցել են ազգապահպանման գործառույթ: Պատմամշակութային որոշակի նախապայմանների հետևանքով ստեղծված ավանդույթներն ու սովորույթներն իրենց հետքն են թողել ներկայիս գենդերային դիրքորոշումների ձևավորման վրա: Դիտարկենք այդ նախապայմաններից գլխավորները:

Հայրական գծով ազգի՝ գերդաստանի կառուցումը: «Ազգը (այստեղ՝ գերդաստան իմաստով) հայրական գծով հիմնադիր նահապետից սերված վարընթաց և շեղակի կամ հորիզոնական ճյուղավորումներով մերձավոր արյունակից ընտանիքների միավորում է, որի մեջ ընդգրկված են սովորաբար վեցից յոթ, երբեմն էլ ավելի սերունդներ»²⁵: Հայրական գծով գերդաստանը շարունակելու կարգը կոչվում է պատրիլինեալություն (լատ. pater հայր + linea գիծ): Ազգի սերնդային հաշվարկը կատարվում է արական գծով, իսկ ազգում տղաների բացակայության դեպքում այն համարվում է անհետացող: Պատմաազգագրական տվյալներով՝ Հայաստանում XIX դ. երկրորդ կեսից XX դ. սկիզբը արյունակիցներից զատ տվյալ ազգի անդամ էին համարվում

Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. - Եր.: ԵՊՀ հրատ., 2014, էջ 255-258:

²⁵ Նահապետյան Ռ. Ա., Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ): Պատմաազգագրական ուսումնասիրություն. - Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 21:

նաև տվյալ ազգի հարսները, իսկ այն բոլոր աղջիկներն ու կանայք, որոնք ամուսնանալով՝ թողնում էին իրենց հայրական տունը, ազգի շրջանակներից դուրս էին համարվում: Այսպիսով, հարսն իր հայրական ազգի համար դառնում էր լոկ «ցեղակից», իսկ սկեսրայրենց համար՝ ազգագրված ազգակից²⁶: Սկեսրայրենց ընտանիքի հանդեպ ունեցած պարտականություններից մեկն ամուսնու տոհմանունն ընդունելն էր, որն ուներ անգիր օրենքի կամ սովորութաիրավական պարտականության ուժ²⁷: Այդպիսով, ամուսնացած աղջիկը դադարում է իր հայրական ընտանիքի, իր ազգի ներկայացուցիչը համարվել, ինչը տարածվում է նաև նրա սերունդների վրա. աղջկա երեխաները հայրական ազգի համար համարվում են արյունակից, բայց ոչ ազգակից:

Ընդլայնված ընտանիքը և դրա պատրիլոկալ (լատ. *pater* հայր + *locus* տեղ) բնույթը: Հայկական մահապետական ընտանիքը ներառում էր հոր՝ մահապետի որդիներին և նրանց ընտանիքները: Գերդաստանային, մահապետական ընտանիքին բնորոշ էր ոչ միայն համատեղ բնակությունը, այլ նաև համատեղ տնտեսությունն ու աշխատանքը^{28,29}: Ընդունված կարգ էր, որ հայրական ընտանիքում ապրել շարունակում էին որդին կամ որդիները (թե՛ ամուսնացած, թե՛ չամուսնացած), իսկ հակառակ երևույթը՝ ամուսնացած աղջկա ընտանիքի բնակությունը հոր տանը («տնփեսայությունը»), հազվադեպ էր պատահում, այն էլ միայն տղա չունեցող ընտանիքներում³⁰: Մինչ այժմ հայկական ընդլայնված ընտանիքը ներառում է ծնողներին և նրանց որդու ընտանիքը (տարբերությունը գերդաստանային ընտանիքից այն է, որ հիմնականում ծնողների հետ շարունակում է ապրել որդիներից մեկը, ոչ թե բոլորը):

Ընտանիքում և հասարակությունում հայրիշխանական (հուն. *pater* – հայր, -*arch* առաջնորդ, ղեկավար) կարգը: Հայաստանում հասարակական կյանքում առաջնակարգ դերը հիմնականում տղամարդուն էր պատկանում, նա էր մասնակցում հասարակական ժողովների և կարգավորում տանից դուրս կատարվող գործերը, իսկ կինը գլխավորապես տան ներքին գործառնություններն էր կարգավորում: Այս բաժանումն արտացոլված է «տղամարդը տան դրսի պատն ա, կինը՝ ներսի» ասացվածքում: Նույնիսկ այրի կինն ամուսնու մահից հետո չէր մասնակցում հասարակական ժողովներին, նրա

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նահապետյան Ռ. Ա., Կինը հայոց ավանդական ընտանիքում (ըստ սասունցիների ազգագրական սովորույթների), ՊԲՀ, 2009, 1(180), էջ 71-87:

²⁸ Թեմուրճյան Վ. Ս., Գամիլիքի հայերը, ՀԱԲ, Հ. 1.- Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 110:

²⁹ Լիսիցյան Ստ., Ձանգեզուրի հայերը.- Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 184:

³⁰ Նահապետյան Ռ. Ա., Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ): Պատմաազգագրական ուսումնասիրություն. - Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 35:

փոխարեն հանդես էին գալիս խնամակալը, հոգաբարձուն: Ինչպես հարսանիքի արարողության ժամանակ նորահարսը, այնպես էլ հետագա ողջ կյանքում նույնիսկ հասակն առած կինը փողոցով քայլելիս, որևէ տուն հյուր գնալիս պետք է գնար ամուսնու հետևից³¹: Գերդաստանի, ընտանիքի ղեկավարումն իրականացնում էր հայրը, նրա մահից հետո՝ ավագ որդին: Հայրը տան ներկայացուցիչն էր համայնքում, նա էր վարում ֆինանսական և տրնտեսական գործերը, իսկ կինը (նահապետի կինը կամ տանտիկինը) ղեկավարում և կարգավորում էր տան ներսի գործերը, ինչպես նաև որոշիչ դեր ուներ երեխաների ամուսնության պարագայում, հատկապես հարս ընտրելիս³²: Չնայած տան գլխավորը համարվում էր տղամարդը, կինը հայկական ընտանիքում հարգանք և հեղինակություն էր վայելում: Կնոջ հեղինակությունը մեծանում էր տարիքին զուգընթաց, տան մեծ տիկինը նահապետից հետո ամենահեղինակավոր մարդն էր ընտանիքում, նույնիսկ տարիքն առած որդիները կարևոր որոշումներ կայացնելիս հաշվի էին առնում մոր կարծիքը³³: Քիչ չեն նաև հայ կանանց հասարակական մասնակցության վերաբերյալ վկայությունները: Միջնադարում հայ կանայք երկու ընտրական ինստիտուտների՝ վանքերի և մենաստանների հոգաբարձուների խորհրդի և գյուղական համայնքի ավագանու անդամ են հանդիսացել³⁴: Այնուամենայնիվ, համընդհանուր ընդունված կարգը հայրիշխանական էր, ինչը ենթադրում էր մի կողմից տղամարդու գերակա դիրքը հասարակությունում, մյուս կողմից՝ հոր գերակա դիրքն ընտանիքում:

Շարունակական պատերազմական իրավիճակը, այլ ազգերի տիրապետության տակ գտնվելը, անկախության և պետականության համար մղվող դարավոր պայքարը մեծացնում էին տղաներ՝ զինվորներ, մարտիկներ ունենալու անհրաժեշտությունը: Համարվում էր, որ ազգն ուժեղ է այնքան, որքան արու զավակներ ունի, ուստի տղաների ծնունդն ավելի մեծ խանդավառությամբ էր ընդունվում³⁵: Այս գաղափարները պահպանվել են մինչև մեր օրերը և շարունակում են սնել ցանկացած պայմանով տղա ունենալու ձգտումը:

Հողագործական և անասնապահական զբաղմունքների գերակշռման պայմաններում ընտանիքը կայուն աշխատուժով ապահովելու անհրաժեշ-

³¹ Լիսիցյան Ստ., Չանգեզուրի հայերը.- Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 221:

³² Թեմուրճյան Վ. Ս., Գամիրքի հայերը, ՀԱԲ, Հ. 1.- Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 112:

³³ Նահապետյան Ռ. Ա., Կինը հայոց ավանդական ընտանիքում (ըստ սասունցիների ազգագրական սովորույթների), ՊԲՀ, 2009, 1(180), էջ 71-78:

³⁴ Բարխուդարյան Ս. Գ., Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում.- ՊԲՀ, N 2, 1966, էջ 25-40:

³⁵ Նահապետյան Ռ. Ա., Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ): Պատմաազգագրական ուսումնասիրություն. - Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 59:

տությունը: Ընտանիքի անդամների ավելացումը դիտարկվում է տվյալ ընտանիքի հաստատումն աշխատուժի ավելացման կամ նվազման տեսանկյունից, իսկ աղջիկը որպես աշխատուժ օգտագործվելու էր ոչ թե հայրական, այլ սկեսրայինաց տանը³⁶:

Այսպիսով, հայրական գծով գերդաստանի շարունակությունը, ամուսնությունից հետո որդիների բնակությունը հայրական տանը և ազգի ինքնապաշտպանության անհրաժեշտությունը հանգեցրել են հասարակական գիտակցության մեջ տղամարդու գերադասության ամրագրմանը: Այդ պատճառով տղա երեխայի ծնունդը շատ ավելի մեծ ուրախություն էր պատճառում ծնողներին, քան աղջկա ծնունդը^{37,38}: Տղայի ծնունդն ընդունվում էր համընդհանուր շնորհավորանքներով, իսկ աղջկա ծնունդը (հատկապես միայն աղջիկներ ունեցող ընտանիքներում) գրեթե դժբախտություն էր համարվում, ինչպես նաև միայն աղջիկներ կամ մեծ մասամբ աղջիկներ ծնած կինն ընտանիքում հարգանք չէր վայելում³⁹: Միայն աղջիկների տեր ընտանիքները գրեթե հավասարազոր էին համարվում անգավակ ընտանիքներին⁴⁰:

Ինչ վերաբերում է գենդերային նորմերին, ապա դրանք հստակ սահմանված էին և սկսում էին գործել մանկության տարիներից: Մինչև 6-7 տարեկան հասակը երեխաները խաղում էին միասին, ունեին միատեսակ հետաքրքրություններ, իսկ դրանից հետո տեղի էր ունենում նրանց աստիճանական ներգրավում կանանց և տղամարդկանց զբաղմունքներում: Այս տարիքից սկսած՝ երեխաների դաստիարակությունը կտրուկ տարբերվում էր ըստ սեռի, նրանք սկսում էին նախապատրաստվել իրենց ապագա գործունեությանը, յուրացնել դրա համար անհրաժեշտ հմտություններ և աջակցել ընտանիքի մյուս անդամներին կենցաղային և տնտեսական աշխատանքներում:

Աղջիկներն ավելի վաղ տարիքից էին մասնակցություն ունենում տան կենցաղային գործերին, քան տղաները: Սկսած 4-5 տարեկանից՝ աղջիկները մասնակցում էին տան ու բակի մաքրության, կրտսեր սիբլինգների խնամքի գործողություններին, ջուր էին բերում, տան մեծերին և հյուրերին սպասարկում, մեծերի հանձնարարականները կատարում, իսկ 8-12 տարեկան աղջիկները սովորում էին բուրդ գգել, ճախարակ պտտել, իլիկ մանել, խմոր հունցել, հաց թխել, այժ ու ոչխար կթել, պանիր մակարդել, լվացք անել, գուլ-

³⁶ **Լիսիցյան Սո.**, Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, Հ. 12.- Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1981, էջ 40:

³⁷ **Գևորգյան Գ. Գ.**, Ղզլար, ՀԱԲ, Հ. 10.- Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1980, էջ 46-47:

³⁸ **Լիսիցյան Սո.**, Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, Հ. 12.- Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1981, էջ 40:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ **Նահապետյան Ռ. Ա.**, Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ): Պատմաազգագրական ուսումնասիրություն. - Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 58:

պա, կարպետ, գորգ գործել, շոր կարել, կարկատել, ասեղնագործել և կատարել այն ամենը, ինչ հետագայում նրանց պետք էր լինելու ամուսնությունից հետո^{41, 42}։ Տղաները մոտավորապես 8-12 տարեկանից համալրում էին ընտանիքի աշխատավորների շարքերը՝ մասնակցելով անասնապահական, հողագործական աշխատանքներին^{43, 44}։

Իգական սեռի նկատմամբ գործում էր սահմանափակումների խիստ վերահսկվող կարգ, որը վերաբերում էր թե՛ չամուսնացած աղջիկներին, թե՛ ամուսնացած հասուն կանանց։ Վերահսկվում էին կանանց տեղաշարժման, արտաքին տեսքի, խոսքի դրսևորումները։ Եթե աղջիկ երեխաների նկատմամբ կիրառվող սահմանափակումները բավական մեղմ էին, ապա սկսած սեռահասունացման տարիքից (որը հիմնականում համընկնում էր ամուսնության տարիքին)՝ դրանք խստացնում էին։ Ամենախիստ սահմանափակումներին ենթարկվում էր նորահարսը, ինչը տևում էր մինչև նրա մի քանի զավակ ունենալը, այնուհետ սահմանափակումներն աստիճանաբար նվազում էին, իսկ ամենաազատն այս առումով տան «մեծ մայրն» էր։ Կնոջ այս սահմանափակ վիճակը հիմնականում հետևանք էր պատմական այն իրադարձությունների, որոնց ընթացքում հայ կինը ստիպված էր հեռու մնալ հասարակական կյանքից։ Նա հաճախ ստիպված է եղել թաքնվել, ծպտվել՝ նույնիսկ տղամարդու կերպարանք ընդունելով։ Սրանք երիտասարդ կանանց և աղջիկներին բարբարոսների գերեվարումից և բռնությունից պաշտպանելու անհրաժեշտությունից առաջացած նորմեր էին⁴⁵։ Քանզի, ինչպես արդեն նշվեց, միջնադարյան աղբյուրներում արձանագրված են հայ կնոջ նկատելիորեն ավելի ազատ ու ակտիվ և իրավահավասար դիրքերը տղամարդու հետ^{46, 47}։

Կնոջ սահմանափակումները տարբերվում էին ոչ միայն տարիքային, այլ նաև բնակավայրային առումով։ Դաշտային շրջանների կանանց իրավունքները, լեռնային շրջանների կանանց համեմատ, բավական սահմանափակ էին, վերջիններս համեմատաբար ազատ էին մասնակցելու ընտանեկան և հասարակական բնույթի խորհուրդներին։ Լեռնային շրջաններում կանանց

⁴¹ **Նահապետյան Ռ. Ա.**, Կինը հայոց ավանդական ընտանիքում (ըստ սասունցիների ազգագրական սովորույթների), ՊԲՀ, 2009, 1(180), էջ 71-78։

⁴² **Լիսիցյան Սո.**, Ձանգեգուրի հայերը.- Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 218։

⁴³ Նույն տեղում։

⁴⁴ **Վարդանյան Լ. Մ.**, Տղամարդկանց տարիքային խմբերի ավանդույթները հայերի մեջ, ՀԱԲ, Հ. 12.- Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 96-97։

⁴⁵ **Սեդրոսյան Կ. Վ.**, Արիեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լեռնականցիների կենցաղում. ՀԱԲ, Հ. 6 - Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 236-237։

⁴⁶ **Բարխուդարյան Ս. Գ.**, Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում.- ՊԲՀ, N 2, 1966, էջ 25-40։

⁴⁷ **Գոշ Մխիթար**, Դատաստանագիրք, թարգմ. Մաքսիմ Ոսկանյանի.- Երևան, 2001։

ընտանեկան ու հասարակական ակտիվությունը պայմանավորված էր, մի կողմից, տղամարդկաց տնական բացակայության պայմաններում ինքնուրույն խնդիրների լուծման և որոշումների ընդունման անհրաժեշտությամբ, մյուս կողմից՝ նաև ռազմաքաղաքական հանգամանքներով. կանայք, տղամարդկանց ուժերը համալրելու նպատակով, ակտիվորեն մասնակցում էին քրդական և թուրքական հարձակումներից ու կողոպուտներից ինքնապաշտպանության գործին⁴⁸:

Այսպիսով, պատմական իրավիճակի և մշակութային առանձնահատկությունների ազդեցությամբ հասարակական գիտակցության մեջ խորն արմատավորվել են տղամարդու գերադասության պատկերացումը, տղա ունենալու և աղջկան սահմանափակելու ձգտումները, որոնք էլ, որոշակի վերափոխումներով հասնելով մինչև մեր օրերը, պայմանավորում են այսօր կնոջ ու տղամարդու վերաբերյալ դիրքորոշումները և գենդերային նորմերը հայաստանյան ընտանիքներում:

1.4. Գենդերային պատկերացումների փոխանցումը սերնդեսերունդ, գենդերային սոցիալականացում

Հաշվի առնելով այն, որ գենդերային պատկերացումները, դիրքորոշումներն ու նորմերը սահմանում են հասարակությունում կնոջ և տղամարդու տեղն ու դիրքը, դիտարկենք այդ պատկերացումների և նորմերի միջսերնդային փոխանցման գործընթացը: Գենդերային սոցիալականացումն այն գործընթացն է, որի միջոցով տղան կամ աղջիկը յուրացնում են տղամարդկային և կանացի լինելու հասարակայնորեն ամրագրված ձևերը և կառուցում են իրենց գենդերային նույնականությունը, այսինքն՝ սովորում են լինել կին կամ տղամարդ:

Ջ. Վուդը համարում է, որ գենդերը ձևավորվում է անգիտակցական և գիտակցական գործընթացների միջոցով. անգիտակցական գործընթացներն են նույնականացումը, ներքնայնացումը և Ես-ի սահմանների ձևավորումը, իսկ գիտակցական մակարդակում սեռի մասին գիտելիքների ձեռքբերումը տեղի է ունենում ծնողների, այլ մեծահասակների և հասակակիցների հետ շփման ընթացքում: Գենդերի ձևավորման անգիտակցական գործընթացները հիմնականում քննարկվում են հոգեվերլուծական տեսություններում, որոնցում բացահայտվում են նույն սեռի ծնողի հետ երեխայի նույնականանալու և նրա սեռատիպիկ վարքաձևերն ու որակները ներքնայնացնելու մեխանիզմները: Գիտակցական մակարդակում գենդերային սոցիալականա-

⁴⁸ **Ռ. Նահապետյան**, Կինը հայոց ավանդական ընտանիքում (ըստ սասունցիների ազգագրական սովորույթների), ՊԲՀ, 2009, 1(180), էջ 71-78:

ցումը տեղի է ունենում դաստիարակության մեջ ծնողների, ուսուցիչների և այլ մեծահասակների անմիջական ցուցումների, խրախուսանքի և պատժի միջոցով, հաղորդակցման գործընթացում՝ վարքային մոդելների դիտման և ընդօրինակման, դիրքորոշումների անուղղակի փոխանցման միջոցով⁴⁹:

Սեռային կարծրատիպերի անուղղակի փոխանցումը տեղի է ունենում երեխաների համար գնվող խաղալիքների, հագուստի և տանը հանձնարարվող պարտականությունների միջոցով: Շատ ծնողներ ակտիվորեն հետ են պահում իրենց երեխաներին հակառակ սեռին բնորոշ խաղալիքներով կամ հակառակ սեռին բնորոշ խաղեր խաղալու ձգտումից: Օրինակ, տղաներին կարող են պարսավել տիկնիկներով խաղալու կամ կերակուր պատրաստելու համար, իսկ աղջիկների՝ ակտիվ, մրցակցային խաղեր խաղալը կարող է հավանության չարժանանալ: Ծնողները նաև հաղորդում են գենդերային սպասումներն այն տնային հանձնարարությունների միջոցով, որ նրանք տալիս են որդիներին և դուստրերին: Մոտավորապես 6 տարեկանից սկսած շատ երեխաների տրվում են պարտականություններ, որոնք արտացոլում են նրանց ծնողների սպասումները սեռի նկատմամբ: Տան մաքրության և սննդի պատրաստման հետ կապված հանձնարարություններ տրվում են դուստրերին, իսկ տղաներին կարող են հանձնարարել, օրինակ, պարտեզի խնամքը, մեքենան լվանալիս հայրիկին օգնելը և այլն⁵⁰:

Գենդերային սոցիալականացումը փորձել են մեկնաբանել մի շարք տեսաբաններ: Գենդերային սոցիալականացման այսպես կոչված իդենտիֆիկացիոն տեսություններում բացահայտվում և բացատրվում են գենդերային նույնականության ձևավորման մեխանիզմները:

Չ. Ֆրոյդը գենդերային նույնականացման գործընթացը բացատրում է «Էդիպի» և «Էլեկտրայի» բարդությներով: Այս բարդությները դրսևորվում են հակառակ սեռի ծնողի նկատմամբ անգիտակցական սեռական ցանկությանը և նույն սեռի ծնողի նկատմամբ խանդի զգացմամբ ու նրան ֆիզիկապես հեռացնելու ձգտմամբ: Այս ցանկությունները երեխայի մեջ առաջացնում են մեղքի զգացում և պատժվելու վախ, առաջանում է անգիտակցական կոնֆլիկտ, որի հանգուցալուծումը կայանում է նույն սեռի ծնողի հետ նույնականացման մեջ: Այդպիսով ձևավորվում է նորմալ գենդերային նույնականությունը⁵¹:

Գենդերային նույնականացման կարևոր առանձնահատկություններն ընդգծված են հոգեվերլուծող, ֆեմինիստ Ն. Չոդորոուի տեսությունում: Փոր-

⁴⁹ Wood J., (2015). Gendered Lives: Communication, Gender and Culture. 11th ed., Cengage Learning.

⁵⁰ Wood J., (2015). Gendered Lives: Communication, Gender and Culture. 11th ed., Cengage Learning.

⁵¹ Фрейд З., Введение в психоанализ. Лекции. М., Наука, 1989.

ծելով բացահայտել յուրաքանչյուր սերնդում որոշակի ընդհանուր և գրեթե համընդհանուր տարբերությունների վերաբերությունները, որոնք բնութագրում են արական և իգական անձնավորությունները և դերերը, Չոդորոուն վերագրում է այս տարբերությունները ոչ թե անատոմիական առանձնահատկություններին, այլ այն փաստին, որ կանայք ամենուր ավելի շատ են պատասխանատու երեխայի խնամքի համար: Քանի որ երեխայի առաջին խնամակալը միշտ իգական սեռի անձնավորությունն է, առաջնային նույնականացումը տեղի է ունենում իգական սեռի հետ: Ավելի ուշ, երբ տղա երեխան գիտակցում է, որ ինքն ու մայրը նույն սեռի չեն, նա ստիպված է լինում խարխլել այդ առաջնային նույնականությունը և ձևավորել այլ՝ արական նույնականություն: Սակայն, քանի որ հայրը միշտ հասանելի կամ ներկա չէ ինչպես մայրը, այս նույնականացումն ավելի շուտ դիրքային է, քան անձնային: Այսինքն՝ տղան նույնականացում է կատարում սոցիալական դերի հետ կամ նույնիսկ կոնցեպցիայի, ոչ թե այն անձի, որի հետ նա կապված է առաջնային հուզական փոխհարաբերությամբ: Ըստ Ն. Չոդորոուի, հոր հարաբերական բացակայությունը և վերացական երևույթի հետ նույնականացվելու բարդությունը բացատրում են թե՛ կանանց թերագնահատումը, թե՛ ստորակարգությունը: Սա ի հայտ է գալիս, քանի որ բախվելով տղամարդ լինելու սպասումների և պահանջների հետ, բայց չունենալով որևէ մեկը, ումից կարելի է առնականություն սովորել՝ տղաներն այն սահմանում են բացասական չափանիշներով. այսինքն՝ առնականությունն այն է, ինչ կանացի չէ, կամ ինչում որ կին չկա: Հետևաբար, նրանք մերժում են այն ամենը, ինչ թվում է կանացի կամ իգական, և դա անում են թե՛ ներքին, թե՛ արտաքին մակարդակներում: Ներքնապես նրանք մերժում են մորը՝ ժխտելով նրա նկատմամբ զգացած կապվածությունը և ճնշելով իրենց կանացի մասը: Արտաքնապես նրանք թերագնահատում են այն, ինչ կանացի է այս աշխարհում: Այս ճանապարհով տղամարդկայնությունը դառնում և մնում է արդյունք տղաների համար՝ ներառելով մոր հետ կապվածության ամբողջական կամ մասնակի մերժումը, կանացիության ճնշումն ու թերագնահատումը⁵²:

Ըստ Է. Բադենտերի, տղամարդկային նույնականությունը ձևավորվում է կանացիության ժխտման, ոչ թե առնականության կայացման հիման վրա⁵³, քանի որ վաղ մանկությունից տղաներին ոչ այնքան սովորեցնում են «լինել տղամարդկային», որքան սովորեցնում են «չլինել կանացի»: Արական նույնականության ձևավորումը կանացիության (մոր հետ կապվածության) ժխտման միջոցով հանգեցնում է կանացիության արտամղման ու թերագնա-

⁵² Chodorow N., (1978). Reproduction of Mothering. Psychoanalysis and the sociology of gender. Berkeley, University of California Press, p. 169-175.

⁵³ Бадентэр Э., Мужская сущность. — М.: АО «Изд-во «Новости»», 1995.

հատման խոր հոգեբանական և մշակութային մակարդակներում⁵⁴, ինչը հիմք է ստեղծում կանանց ստորադասման և գենդերային անհավասարության համար:

Սոցիալական ուսուցման կամ սոցիալ-կոգնիտիվ տեսության շրջանակներում ավելի շատ մեկնաբանվում են գենդերային դերերի և գենդերային կարծրատիպերի յուրացման մեխանիզմները, առանձնացվում է այդպիսի երեք հիմնական մեխանիզմ՝ ուսուցում, ամրապնդում և մոդելավորում: Մոդելավորումը, Ա. Բանդուրայի համաձայն, անհատների կողմից սոցիալական վարքի յուրացումն է նշանակալի ուրիշների վարքի դիտման և ընդօրինակման միջոցով⁵⁵: Այս դիտարկումներն ու ընդօրինակումները տեղի են ունենում ողջ կյանքի ընթացքում, սակայն առավել կարևոր են երեխաների և դեռահասների զարգացման համար: Սկսած վաղ մանկությունից՝ երեխաներն իրենց ծնողներից սովորում են տղաներին և աղջիկներին համապատասխանող վարքաձևերը, իսկ այդ տարիքում ձևավորված պատկերացումները (այդ թվում և գենդերային) կարող են ազդել մարդու դիրքորոշումների և վարքի վրա ողջ հետագա կյանքի ընթացքում: Բացի ծնողներից, սեռատիպիկ վարքի ձևավորման վրա էականորեն ազդում են նաև այլ նշանակալի անձինք՝ հասակակիցները, ուսուցիչները և այլք, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցներով մատուցվող վարքի մոդելները: Մոդելավորումն ունի երկու փուլ՝ յուրացում և կատարում: Յուրացման փուլում երեխաները յուրացնում են արական և իգական դերերի բովանդակությունը, սակայն կրկնում կամ իրականացնում են (կատարման փուլ) միայն վարքի այն նմուշները, որոնց մոդելների գործողություններն ունեցել են դրական հետևանքներ: Համաձայն այս տեսության, որքան ավելի հստակ է որոշակի վարք կարծրատիպացվում մի սեռի համար, այնքան ավելի հավանական է, որ այդ սեռի երեխան կընդօրինակի այդ վարքը⁵⁶:

Կոգնիտիվ զարգացման տեսությունը գենդերային սոցիալականացման գործընթացը դիտարկելիս շեշտը դնում է երեխայի կոգնիտիվ ակտիվության, աշխարհը և իրեն ճանաչելու օրինաչափությունների վրա: Այս տեսության ներկայացուցիչ Լորենս Կուլբերգը պնդում էր, որ իրենց սեռը յուրացնելու համար երեխաները կախված չեն ո՛չ մեծահասակներից՝ որպես մոդելներ, ո՛չ նրանց խրախուսանքից ու պատժից, փոխարենը նրանք ակտիվորեն

⁵⁴ **Чодорой Н.**, Воспроизводство материнства: Психоанализ и социология гендера.-М., РОССПЭН, 2006, стр. 225.

⁵⁵ **Bandura, A.** (2001). Social Cognitive Theory: An Agentic Perspective. Annual Review of Psychology, 52, 1-26.

⁵⁶ **Bandura, A.** (1989). Social cognitive theory. In R. Vasta (Ed.), Annals of child development. Vol. 6. Six theories of child development (pp. 1-60). Greenwich, CT: JAI Press.

դասակարգում են իրենց և ուրիշներին որպես իգական կամ արական սեռի ներկայացուցիչներ և հետո կազմակերպում իրենց վարքը սեռին համապատասխան⁵⁷:

Գենդերի սխեմայի տեսությունում (Սանդրա Բեմ) միավորված են սոցիալական ազդեցությունների և կոգնիտիվ զարգացման մեխանիզմները: Ըստ Ս. Բեմի, սեռի սխեմատիկ մշակումը, որը բնորոշվում է որպես երեխայի ընդհանրացված պատրաստակամություն՝ ընդունել և կազմակերպել ինֆորմացիան (ներառյալ Ես-ի մասին ինֆորմացիան) համաձայն տղամարդկայնության և կանացիության մշակութային բնորոշումների, հանգեցնում է գենդերի տիպականացման: Գենդերային տիպականացումը միջնորդավորված է երեխայի սեփական կոգնիտիվ վերամշակմամբ, իսկ այս վերամշակումը սկիզբ է առնում հասարակության կողմից սահմանվող գենդերային տարբերակումներից. երեխայից դուրս գտնվող աշխարհը տարբերակում է սեռերը և դրանց տարբեր ձևով է վերաբերվում: Աշխարհը բաժանված է կանացի և տղամարդկային կատեգորիաների, այն ի սկզբանե երեխային տալիս է դիտարկել տեղեկատվություն, և երեխան յուրացնում է այս կատեգորիաները՝ առանձնացնելով իր սեռին վերաբերող տեղեկատվությունն իր սեռին չվերաբերող տեղեկատվությունից⁵⁸:

Այս տեսանկյունից, հասարակությունում առկա կանանց և տղամարդկանց վերաբերյալ գերակշռող կարծրատիպերը և սպասումները մարդկանց տրամադրում են կոգնիտիվ քարտեզներ և տալիս են որոշակիության և օնթոլոգիական ապահովության զգացում, այդ պատճառով դրանք լայնորեն տարածված են⁵⁹:

Գենդերային սոցիալականացումը որպես սեռային դերերի յուրացում է մեկնաբանել Թալկոտ Փարսոնսը, ըստ որի, էական են կնոջ և տղամարդու միջև առկա տարբերությունները որպես սոցիալական գործիչներ, և այդ տարբերություններն ունեն փոխլրացնող բնույթ: Գենդերային դերերի տարբերակումն անհրաժեշտություն է, այն գործառության մշակություն ունի, իսկ ընտանիքում աշխատանքի բաժանումն «ինստրումենտալ» տղամարդկանց և «էքսպրեսիվ» կանանց միջև անհրաժեշտ է երեխայի համարժեք սոցիալականացումն ապահովելու համար: Ընտանիքում, հասակակիցների խմբերում, դպրոցում, սոցիալական խմբերում և հաստատություններում երեխաները տեսնում են արական և իգական սեռի վարքաձևերի և հատկանիշ-

⁵⁷ **Kohlberg L., & Ullian D.Z.**, (1974). Stages in the development of psychosexual concepts and attitudes. In R.C. Friendman, R.M. Richart, R.L. Vande Wiele (Eds.), *Sex differences in behavior*, New York. Wiley. (pp. 249-261).

⁵⁸ **Bem S.**, (1981). Gender Schema Theory: A Cognitive Account of Sex Typing. *Psychological Review* N88, (pp.354-364).

⁵⁹ **Howard J. A., Jocelyn H. A.** (1997). *Gendered Situations, Gendered Selves*. Thousand Oaks, CA: Sage, p. 88.

ների բազմաթիվ օրինակներ: Արդյունքում՝ տղաներն ու աղջիկները ներքնայնացնում են սեռատիպիկ անձնային գծեր և վարքաձևեր, ձևավորում են գենդերային նույնականություն, որը համապատասխանում է սոցիալական կառուցվածքում կնոջ կամ տղամարդու դիրքին ու դերին⁶⁰:

Գենդերի կառուցակցման տեսակետից գենդերային սոցիալականացումը մեկնաբանել են Պ. Բերգերը և Թ. Լուկմանը: Համաձայն այս մոտեցման, տղամարդիկ և կանայք հասարակության մեջ տարբեր սոցիալական աշխարհներ են «գրադեցնում», երեխայի առաջնային սոցիալականացման գործընթացում նշանակալի ուրիշների դեր կատարելով՝ տղամարդիկ և կանայք այդ տարբերվող իրականությունները փոխանցում են նրան: Իրականության տղամարդկային և կանացի տարբերակները սոցիալականացնելու ընդունված են, և այդ ընդունվածությունը հաղորդվում է առաջնային սոցիալականացման միջոցով: Տղայի համար կանխորոշված է տղամարդկային տարբերակի գերակշռումը, իսկ աղջկա համար՝ կանացի: Երեխան տեղեկանում է մյուս սեռին պատկանող տարբերակի մասին այն չափով, որքան այն միջնորդավորված է հակառակ սեռի նշանակալի ուրիշներով, սակայն նա չի նույնականացնում այն իր տարբերակի հետ: Սովորաբար հակառակ սեռի իրականությունը երեխայի կողմից ներքնայնացվում է, բայց նա «համապատասխանաբար» նույնականացվում է իրեն կանխորոշված իրականության հետ⁶¹:

Ա. Ռեպինան միավորել է գենդերային նույնականությունը և սոցիալականացումը մեկ գործընթացի մեջ՝ դիտարկելով առաջինը որպես երկրորդի մի փուլ: Համաձայն Ա. Ռեպինայի, գենդերային սոցիալականացումն ընթանում է երեք փուլով: Առաջին փուլում տեղի է ունենում գենդերային նույնականացումը, երբ երեխան, սովորելով տարբերակել կանանց և տղամարդկանց, տղաներին և աղջիկներին ու նրանց բնորոշ վարքաձևերը, իրեն դասում է տղաների կամ աղջիկների խմբին: Երկրորդ փուլում տեղի է ունենում գործունեության և կյանքի տարբեր ոլորտներում գենդերային նախընտրությունների ձևավորում: Այս փուլը սերտորեն կապված է նախորդի հետ, քանի որ նախընտրություններ ձևավորելու համար երեխան պետք է իմանա, թե որոնք են տարբեր սեռի մարդկանց վարքի տարբերությունները: Երրորդ փուլում տեղի է ունենում գենդերային ստանդարտներին համապատասխանող վարքաձևերի յուրացում և որոշ հոգեբանական գենդերային առանձնահատկությունների ձևավորում⁶²:

⁶⁰ **Parsons T.** (1964). Social Structure and Personality. New York: Free Press.

⁶¹ **Бергер П., Лукман Т., Идентичность.** В кн. Психология самосознания. /Под ред. Д. Я. Райгородского. Самара, БАХРАХ-М, 2000, с. 567-588.

⁶² **Репина Т. А.,** Проблема полоролевой социализации детей / Т. А. Репина. Москва – Воронеж, 2004.

Գենդերային սոցիալականացման գործընթացը գերազանցապես հասարակությունում առկա սոցիալական սպասումների միջոցով են մեկնաբանում «սեռի նոր հոգեբանության» կողմնակիցները: Ջ. Ստոքկարդը և Մ. Ջոնսոնը պնդում են, որ կենսաբանական (բնածին) սեռը կարող է միայն օգնել սահմանել մարդու պոտենցիալ վարքը, իսկ հոգեբանական, սոցիալական սեռը յուրացվում է կյանքի ընթացքում, և դրա ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունենում գենդերային դերերի դասակարգային, էթիկական, ռասայական տարբերությունները և դրանց համապատասխանող սոցիալական սպասումները⁶³: Ըստ Ռ. Անգերի, գենդերային առանձնահատկությունների գլխավոր դետերմինանտները սոցիալական սպասումներն են, դերերը և վարքի սեռային համապատասխանության ավանդական պահանջները: Այն սոցիալական պահանջները, որոնց պետք է համապատասխանի անհատի վարքը, հանդիսանում են «ինքնիրականացվող կանխատեսումներ», դրանք այնքան խիստ են սահմանում գենդերային հակազդումների սխեմաները, որ շարունակում են գործել նույնիսկ այն դեպքերում, երբ մարդը մենակ է մնում կամ հայտնվում է այնպիսի իրավիճակներում, երբ անձի սեռական պատկանելությունն էական չէ: Անգերի կարծիքով, գենդերի սոցիալական կառուցակցման հիմքն ամենօրյա սոցիալական ինտերակցիաներն են, իսկ տևական գենդերային սոցիալականացման ընթացքում ձեռքբերված անձնային գծերն ունեն երկրորդական նշանակություն⁶⁴:

Ի. Կլեյնման գտնում է, որ հասարակությունում գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերը (արական և իգական վարքի մոդելների և բնավորության գծերի մասին ստանդարտացված պատկերացումները) էականորեն ազդում են երեխաների գենդերային սոցիալականացման վրա՝ կանխորոշելով դրա ուղղվածությունը: Այդ կարծրատիպերը բաժանվում են երեք հիմնական խմբի.

Մասքուլինության-ֆեմինինության կարծրատիպեր. վերաբերում են անձի հոգեբանական հատկանիշներին և որակներին, հոգեբանական և վարքային առանձնահատկություններին: Սրանք հանդիսանում են սեռերի հոգեֆիզիոլոգիական և սոցիալական տարբերությունների բացարձակացման և ընդհանրացման արդյունք, որի հետևանքով մասքուլինությունը նույնացվում է ակտիվ-ստեղծագործական, մշակութային, ֆեմինինությունը՝ պասիվ-վերարտադրական, բնական նախասկզբի հետ: Այդ նորմատիվ պատկերացումները հակադրում են կանանց և տղամարդկանց՝ նրանց տալով

⁶³ Stockard J., Johnson M., (1980). Sex Roles: Sex Inequality and Sex Role Development, Prentice Hall.

⁶⁴ Unger R. K., (1990). Imperfect reflections of reality: Psychology and the construction of gender. In R. Hare-Mustin & J. Marecek (Eds.). Making a difference: Representations of gender in psychology. New Haven: Yale University Press, (pp. 102 - 149).

բևեռային հատկանիշներ և դնելով նրանց հիերարխիկ հարաբերակցության մեջ. տղամարդկանց համարում են դոմինանտ, անկախ, կոմպետենտ, ինքնավստահ, ագրեսիվ և տրամաբանող, իսկ կանանց՝ ենթարկվող, կախյալ, հուզական, կոնֆորմ ու նուրբ:

Գենդերային կարծրատիպերի երկրորդ խումբը վերաբերում է ընտանեկան և մասնագիտական դերերի գենդերային տարբերակմանը: Կանանց համար առաջնային սոցիալական դերերն ընտանեկան դերերն են, իսկ տղամարդու համար՝ մասնագիտականը: Այդ դերերի լավագույն իրականացման համար կանանցից ակնկալվում է միջանձնային հարաբերություններ հաստատելու ընդունակություն, իսկ տղամարդկանցից՝ նպատակասլացություն, ձեռքբերումների ձգտում:

Գենդերային կարծրատիպերի երրորդ խումբը կապված է աշխատանքի բովանդակային տարբերությունների հետ: Կանանց վերագրվում է գործունեության էքսպրեսիվ ոլորտը՝ սպասարկման և կատարողական բնույթի աշխատանքը, իսկ տղամարդկանց ինստրումենտալ ոլորտը՝ ստեղծագործական, արտադրական, ղեկավարման բնույթի աշխատանքը⁶⁵:

Գենդերային նույնականության և գենդերային սոցիալականացման տեսությունները բացահայտում են «արական» և «իգական» անձի կայացման կարևոր մեխանիզմները, իսկ միջմշակութային հետազոտությունները ցույց են տալիս, որ տարբեր հասարակություններում տղաների և աղջիկների մեջ փոքրձում են ձևավորել տարբեր որակներ: Ընդհանրապես, տղաներին ավելի կոպիտ են վերաբերվում և խրախուսում են լինել ավելի ագրեսիվ, իսկ աղջիկներին ավելի նուրբ են վերաբերվում և խրախուսում լինել հուզական և ֆիզիկապես զուսպ:

Ուսումնասիրելով 110 տարբեր մշակույթներում գենդերային սոցիալականացման առանձնահատկությունները՝ Հ. Բարի 3-րդը, Մ. Բեկոնը և Ի. Չայլդը բացահայտել են, որ այդ մշակույթների մեծամասնությունում աղջիկների մեջ ձգտում են ձևավորել հոգատարություն, ենթարկվողություն և պատասխանատվություն, իսկ տղաների մեջ՝ ձեռքբերումների ձգտում և սեփական ուժերին ապավինելու ունակություն⁶⁶:

Սկսած նորածնությունից՝ երեխաները ստանում են գենդերացված ուղերձներ հագուստի և սպիտակեղենի գունային տարբերակման, հետագայում՝ սեռատիպիկ խաղալիքների, պարագաների գնման, ինչպես նաև տարբերակված ծնողական ինտերակցիաների միջոցով: Ողջ հետագա հաղոր-

⁶⁵ Клецина И., Гендерная социализация. Учебное пособие.- СПб.: Издательство РГПУ им. А. И. Герцена, 1998.

⁶⁶ Barry H. III, Bacon M., Child I., (1962). A Cross-Cultural Survey of Some Sex Differences in Socialization. In J.F. Rosenblith and W. Allinsmith (Eds.). The Causes of Behavior: Reading in Child Development and Educational Psychology. Boston MA, Allyn and Bacon Inc., (pp.253-258).

դակցումը վերբալ և ոչ վերբալ ուղիներով փոխանցում է տարբերակված գենդերային ինֆորմացիա: Կյանքի առաջին տարիներին այդ ինֆորմացիայի հիմնական փոխանցողները ծնողներն են, ապա երեխայի կյանք են մտնում գենդերացված ուղերձների այլ աղբյուրներ՝ հեռուստատեսությունը, զանգվածային լրատվամիջոցների ուրիշ աղբյուրներ, հասակակիցները, մանկավարժները և այլ մեծահասակներ: Հեռուստատեսությունը տրամադրում է սեռատիպիկ մոդելներ՝ տղաների ակտիվության, ագրեսիվության, դոմինանտության և աղջիկների հուզականության, կախյալության շեշտադրմամբ^{67,68}: Մանկական գրականությունը և նույնիսկ դպրոցական դասագրքերը պարունակում են գենդերային կարծրատիպերի բազմաթիվ դրսևորումներ^{69,70}: Հասակակիցների խմբերը նույնպես կարևոր գործիչներ են գենդերային սոցիալականացման գործընթացում. նրանք ակտիվորեն խրախուսում են միմյանց սեռատիպիկ վարքը, ըստ որում, տղաներն ավելի անհանդուրժող են իրենց ընկերների սեռին ոչ տիպիկ վարքաձևերի հանդեպ, քան աղջիկները^{71,72}: Գենդերային դիրքորոշումների և կարծրատիպերի ևս մեկ աղբյուր է դպրոցը: Հայտնի է, որ ուսուցիչները տարբերակված ուշադրություն են դրսևորում տղաների և աղջիկների նկատմամբ, խրախուսում են տարբեր դրսևորումներ և ավելի են արժևորում տղաների ջանքերը⁷³:

Սոցիալականացման այս բոլոր գործիչների կողմից վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման միջոցով գենդերային դիրքորոշումները փոխանցվում են սերնդեսերունդ՝ երեխաների մեջ ձևավորելով մասքուլին և ֆեմինին որակներ: Աղջիկներին քույլատրում և նույնիսկ խրախուսում են լինել կախյալ, նրանց փոխանցվում է սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը, ուրիշների աջակցության անհրաժեշտությունը, միջանձնային հարաբերու-

⁶⁷ **Smith S., Cook C.**, (2008). Gender Stereotypes: An Analysis of Popular films and TV, Conference 2008, The Geena Davis Institute on Gender in Media, http://seejane.org/wp-content/uploads/GDIGM_Gender_Stereotypes.pdf

⁶⁸ **Կոչոյան Ա., Գևորգյան Ա.**, Առնականությունն ու գենդերային բռնությունը հայկական հեռուստատեսիվներում, Երևան, 2014, <http://www.ysu.am/files/Reserch%20paper%2003.09.2014..pdf>

⁶⁹ **Попова Л. В.**, Проблемы самореализации одаренных женщин // Вопросы психологии. 1996. № 2., стр. 31-39.

⁷⁰ **Ծառուբյան Ռ.**, Գենդերային դերերը ՀՀ տարրական դպրոցի դասագրքերում, Երևան, 2014 http://www.osf.am/wp-content/uploads/2014/01/Gender_roles_in_primary_school_textbooks-2012.pdf

⁷¹ **Кон И. С.**, Ребенок и общество. М., «Академия», 2003.

⁷² **Wood J.**, (2015). Gendered Lives: Communication, Gender and Culture. 11th ed., Cengage Learning.

⁷³ **Golombok S., Fivush R.**, (1994). Gender Development, Cambridge University Press, New York & Cambridge.

թյունների կարևորումը, իսկ տղաներին նույն միջոցներով ներշնչվում է սեփական ուժերին ապավինելու, ինքնուրույնության և արդյունավետության անհրաժեշտությունը: Ինչպես նաև գենդերային սոցիալականացման ընթացքում վաղ մանկությունից աղջիկների համար շեշտադրվում է արտաքին գրավչության, իսկ տղաների համար՝ ուժի և իշխանության կարևորությունը^{74,75}:

Հասարակությունների մեծ մասում գենդերային նորմերը ճնշում են կանանց ինքնադրսևորումը և խրախուսում տղամարդկանց ցուցաբերել այնպիսի վարքաձևեր, ինչպիսիք են ագրեսիվությունը, դոմինանտությունը, ինչը մեծացնում է կանանց ինքնադրսևորման ճնշումը: Գենդերային նորմերը խստորեն վերահսկում են կանանց և տղամարդկանց վարքը, իսկ դրանց խախտումը պատժի է արժանանում: Միջմշակութային հետազոտությունները ցույց են տալիս, որ գենդերային առումով առավել անհավասար հասարակություններում կանանց մեծ մասը գրեթե հնարավորություն չունի շեղվելու գենդերային նորմերից առանց լուրջ հետևանքների⁷⁶:

Սակայն, սխալ կլինի եզրակացնել, որ գենդերային սոցիալականացման նորմատիվ ճնշումը հիմնականում կանանց է վերաբերում: Ավանդական հասարակությունում տղամարդկանց ներկայացվող առնականության պահանջները ևս բավական խիստ են, իսկ շեղումը դրանցից կարող է բերել մերժման, ծաղրի կամ մեկուսացման: Թե՛ ծնողները, թե՛ հասակակիցները, թե՛ այլ մեծահասակները հիմնականում ավելի անհանգստացած են տղաների «ճիշտ» գենդերային սոցիալականացմամբ, քան աղջիկների. տղայի կախյալ, հուզական վարքը ծնողների մեջ ավելի խիստ բացասական հակազդում է առաջացնում, քան աղջիկների «տղայական» ագրեսիվ պահվածքը:

Համաձայն Ռ. Բրեննոնի, ավանդական մասքուլինության հիմնական նորմերը հետևյալն են. տղամարդը պետք է խուսափի ցանկացած կանացի դրսևորումներից, տղամարդը պետք է հասնի հաջողության և առաջ անցնի մյուս տղամարդկանցից, տղամարդը պետք է ուժեղ լինի և թուլություն ցույց չտա, տղամարդը պետք է չվախենա բռնությունից⁷⁷: Ջ. Դոյլը նույնպես պնդում է, որ «տղամարդկանց ներկայացվող ամենահիմնական պահանջը

⁷⁴ **Wood J.**, (2015). *Gendered Lives: Communication, Gender and Culture*. 11th ed., Cengage Learning.

⁷⁵ **Клещина И.**, Гендерная социализация. Учебное пособие.- СПб.: Издательство РГПУ им. А.И. Герцена, 1998.

⁷⁶ **Fleming P. Barker G. McCleary-Sills J. Morton M.** (2013). *Engaging men and boys in advancing women's agency: Where we stand and new directions*. Women's Voice, Agency, & Participation Research Series No.1.

⁷⁷ **Brannon R.** (1976). *The Male Sex Role: Our culture's blueprint for manhood, what it's done for us lately // The Forty-Nine Percent Majority: The Male Sex Role Reading / Ed. By D.David, R.Brannon. . MA: Addison-Wesley, (pp. 1-48).*

կանացի չլինելն է»։ Ըստ Ջ. Դոյլի, տղամարդկանց նաև ներկայացվում են հաջողակ, ազդեցիկ, սեքսուալ լինելու և սեփական ուժերի վրա հույս դնելու պահանջները⁷⁸։ Մասքուլինության ավանդական սահմանումը, ներառելով կանանց նման չլինելու պարտադիր պայմանը, տղամարդկանց մեջ առաջացնում է դիսֆունկցիոնալ լարվածություն, դրանից շեղումները պատժվում են մերժմամբ, առաջացնում են ամոթի և անհամապատասխանության զգացում⁷⁹։

Այսպիսով, թե՛ տղաների, թե՛ աղջիկների գենդերային սոցիալականացումը սահմանափակում է նրանց որոշ դրսևորումներ և ակտիվորեն խրախուսում այլ դրսևորումներ։ Տղաների/տղամարդկանց սոցիալականացումը ճնշում է նրանց էքսպրեսիվ-հուզական կողմը՝ զրկելով հարաբերություններում լիարժեք դրսևորվելու հնարավորությունից, աղջիկների/կանանց սոցիալականացումը ճնշում է նրանց ինստրումենտալ-ստեղծագործական կողմը՝ նվազեցնելով գործունեության մեջ հաջողության հասնելու նրանց հնարավորությունները։

⁷⁸ **Doyle J. A.**, (1989). The male Experience (2nd ed.) Dubuque, IA, William C. Brown Co., p. 150-155.

⁷⁹ **Кон И. С.**, Гегемонная маскулинность как фактор мужского (не)здоровья /Социология: теория, методы, маркетинг, 2008, 4, (стр. 5-16).

2. Գենդերային սոցիալականացման գործընթացի վերլուծություն

2.1. Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունը հիմնականում անդրադարձել է գենդերային սոցիալականացման այն կողմերին, որոնք կապված են հայաստանյան ընտանիքներում և կրթական համակարգում առկա գենդերային կարծրատիպերի և դաստիարակչական գործընթացների, ինչպես նաև կնոջ և տղամարդու վերաբերյալ եկեղեցական գաղափարների ընկալման հետ:

Հետազոտությունը նպատակ ուներ բացահայտել գենդերային սոցիալականացման այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են հասարակությունում տղամարդկանց և կանանց անհավասար դիրքերի ձևավորմանը և ամրապնդմանը:

Հետազոտության խնդիրներն էին.

- պարզել գենդերային սոցիալականացման գործիչների՝ ծնողների, մանկավարժների, հոգևորականների հիմնական գենդերային պատկերացումներն ու կարծրատիպերը,
- պարզել երիտասարդ սերնդի՝ պատանիների և երիտասարդների գենդերային պատկերացումներն ու կարծրատիպերը (վերջիններս, իրենց հերթին, հանդիսանում են գենդերային սոցիալականացման գործիչներ հասակակիցների համար),
- համեմատության միջոցով պարզել ավագ սերնդի գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը կրտսեր սերնդում,
- պարզել գենդերային պատկերացումների և կարծրատիպերի փոխանցման ուղիներն ու առանձնահատկությունները,
- ցույց տալ սոցիալականացման ընթացքում փոխանցվող գենդերային պատկերացումների և տարբերակված դաստիարակչական պրակտիկաների ազդեցությունն ընտանիքում և հասարակությունում կնոջ և տղամարդու կարգավիճակների վրա:

Վերոհիշյալ նպատակին հասնելու համար տեսականորեն վերլուծել ենք այն ուղիները, որոնցով իրականացվում է գենդերային սոցիալականացումը, և այն գործիչներին, որոնք ազդում են այդ գործընթացի վրա: Սոցիալականացման (այդ թվում և գենդերային) գործընթացներից են դաստիարակությունը, ուսուցումը, միջանձնային շփումը, որոնց շրջանակներում տեղի է ունենում գենդերային կարծրատիպերի, դիրքորոշումների, նորմերի ու սպա-

սումների փոխանցումը: Հիշյալ գործընթացները պայմանավորում են տարբերակված սոցիալականացումը՝ աղջիկներին այլ դաստիարակություն, տղաներին՝ այլ, ինչն էլ պայմանավորում է երեխաների մեջ գենդերային դիրքորոշումների և գենդերային նույնականության ձևավորումը, իսկ ավելի հեռահար շրջանում՝ կանանց և տղամարդկանց սոցիալ-հոգեբանական կարգավիճակները հասարակության մեջ: Այդ գործընթացներում ներգրավված են, առաջին հերթին, ընտանիքի անդամները, ապա՝ կրթական համակարգի աշխատողները (նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատությունների մանկավարժները), հասակակիցները, զանգվածային մշակույթը (գրականություն, հեռուստատեսություն, կինո և այլն), ազգային մշակույթը (ավանդույթները, սովորույթները, նորմերը), եկեղեցին (հոգևորականները և կրոնական պատկերացումները) և այլն:

Մեր կարծիքով, հիմնական ուղիները, որոնց միջոցով դաստիարակության և շփման ընթացքում փոխանցվում են գենդերային սպասումները, դիրքորոշումները և ձևավորվում են գենդերային կարծրատիպերը հետևյալն են.

- Դաստիարակության տարբերակված պրակտիկաներ՝ սեռատիպիկ վարքաձևերի անմիջական խրախուսում և ատիպիկ վարքաձևերի համար պատիժ կամ նախատինք, տարբերակված չափանիշներ վարքի, վարվելակերպի և խոսքի համար, արտոնությունների և սահմանափակումների «տարբերակված ցուցակներ», որոնք գործում են աղջիկների և տղաների համար:
- «Գենդերացված»⁸⁰ հաղորդակցում. 1) դիրքորոշումների և կարծրատիպերի ուղղակի փոխանցում ցուցումների, խրատների, ուղերձների ձևով, օրինակ. «Տղաները չեն լացում» և այլն, 2) դիրքորոշումների և կարծրատիպերի անուղղակի փոխանցում՝ հանձնարարվող առաջադրանքների, երեխայի համար գնվող իրերի, մեծահասակի գործերի մեջ երեխայի ներգրավման, այլ մարդկանց վարքի մասին արվող արտահայտությունների և այլնի միջոցով:
- Երեխայի վարքի և նրա ապագայի վերաբերյալ սպասելիքների արտահայտում, կյանքի սցենարի կազմավորում (տղային՝ «պիտի բիզնեսմեն դառնաս», աղջկան՝ «պիտի համեստ հարս դառնաս... մեզ ամոթով չանես»):
- Սեռատիպիկ վարքային մոդելներ (սկսած ծնողներից մինչև սերիալների, մուլտֆիլմերի և համակարգչային խաղերի հերոսներ):

Վերոհիշյալ ուղիներով գենդերային ինֆորմացիան փոխանցում են գենդերային սոցիալականացման գործիչները, որոնցից հետևյալ խմբերը՝ ծնողներ, հասակակիցներ, մանկավարժներ, հոգևորականներ, ուսումնասիրվել են այս հետազոտության շրջանակներում:

⁸⁰ Տերմինը ըստ **Ջ. Վուդի**, տե՛ս **Wood J., (2015). Gendered Lives: Communication, Gender and Culture. 11th ed., Cengage Learning.**

2.1.1. Հեղափոխության իրականացման մեթոդները

Հետազոտությունն իրականացվել է որակական մեթոդաբանությամբ՝ ֆոկլուս խմբային քննարկումների և խորացված հարցազրույցների միջոցով: Իրականացվել են 4 ֆոկլուս խմբային քննարկում և 23 խորացված հարցազրույց:

Ֆոկլուս խմբային քննարկումները և հարցազրույցներն իրականացվել են համապատասխան հարցաշարերի օգնությամբ, որոնք ուղղված էին պարզելու հետազոտության մասնակիցների գեոդերային դիրքորոշումները, կարծրատիպերը և դրանց փոխանցման ուղիները: Հոգևորականների հետ հարցազրույցի հարցաշարի հարցերը, սոցիալականացման գործընթացից զատ, ներառում էին նաև հարցեր Աստվածաշնչի մեկնության ժամանակ գեոդերային դիրքորոշումների մատուցման, պսակի խորհրդի բացատրության, պսակի ժամանակ տղամարդու և կնոջ կողմից տրվող խոստումների մեկնաբանության, ընտանիքներում կոնֆլիկտների պատճառների վերաբերյալ:

Ֆոկլուս խմբային քննարկումների և խորացված հարցազրույցների վերլուծությունն իրականացվել է հետևյալ մեթոդներով.

1. որակական բովանդակային վերլուծություն,
2. իմաստի խտացում:

Վերլուծությունների ընթացքում հաշվի է առնվել նաև խմբերում որևէ առանձնահատկության կամ օրինաչափության դրսևորման հաճախականությունը: Արդյունքների շարադրման մեջ տեղ են գտել այն փաստերը, որոնք դիտարկվել են մի քանի խմբերում, առավել շեշտադրվել և մեկնաբանվել այն փաստերը, որոնք դիտարկվել են բոլոր հետազոտվող խմբերում:

2.1.2. Հեղափոխության ընդլայնումը

Ելնելով գեոդերային սոցիալականացման գործիչների սահմանումից՝ ձևավորվեց հետևյալ հետազոտական ընտրակազմը. տղամարդիկ (հայրեր), կանայք (մայրեր), պատանիներ, երիտասարդներ, նախադպրոցական հաստատություններում աշխատող մանկավարժներ՝ դաստիարակներ, դպրոցի ուսուցիչներ, հոգևորականներ (կուսակրոն հոգևորականներ և քահանաներ):

Ընդհանուր առմամբ, հետազոտության մեջ ներգրավվել է 63 մասնակից՝ 10-ական մասնակից յուրաքանչյուր ֆոկլուս խմբում (տղամարդիկ, կանայք, երիտասարդներ, պատանիներ) և 23 հարցազրույցի մասնակից (8 ուսուցիչ, 8 մանկապարտեզի դաստիարակ, 2 կուսակրոն և 5 ամուսնած հոգևորական): Ընտրանքի սոցիալ-դեմոգրաֆիական տվյալները ներկայացված են ստորև, աղյուսակներ 1-ում, 2-ում և 3-ում:

Աղյուսակ 1. Կանանց և տղամարդկանց խմբերի սոցիալ-դեմոգրաֆիական ցուցանիշները (յուրաքանչյուր խմբում 10 մասնակից)

	Մասնակիցների տարիքը	Կրթությունը		Երեխաների քանակը		
		Բարձրագույն	Միջնակարգ և միջին մասնագիտ.	1	2	3 և ավելի
Տղամարդիկ	28-45	5	5	-	7	3
Կանայք	22-45	4	6	2	7	1

Աղյուսակ 2. Երիտասարդների և պատանիների խմբերի սոցիալ-դեմոգրաֆիական ցուցանիշները (յուրաքանչյուր խմբում 10 մասնակից)


	Սեռ		Տարիք	Կրթությունը		Ներկայիս զբաղվածությունը		
	Իգ.	Ար.		Բարձրագույն	Միջնակարգ/միջին մասնագ.	Ուսանող	Աշխատող	Գործազուրկ
Երիտասարդներ	5	5	18-25	8	2	7	2	1
Պատանիներ	5	5	14-16	Ավագ դպրոցի աշակերտ				
				10				

Աղյուսակ 3. Ուսուցիչների և դաստիարակների խմբերի սոցիալ-դեմոգրաֆիական ցուցանիշները

	Տարիք	Աշխատանքային պաշտոն			Աշխատանքային ստաժ (տարի)		
		Դասավար	Միջին դպրոցի ուսուցիչ	Ավագ դպրոցի ուսուցիչ	5-10	10-20	20-ից ավելի
Ուսուցիչներ	33-57	3	3	2	1	2	5
Դաստիարակներ	35-64	կրտսեր խմբի դաստիարակ	միջին խմբի դաստիարակ	ավագ խմբի դաստիարակ	-	3	5
		2	3	3			

2.2. Հեղափոխության արդյունքները

Ֆոկուս խմբերի և հարցազրույցների տվյալների վերլուծության հիման վրա առանձնացրեցինք այն հիմնական գեոդերային պատկերացումները և կարծրատիպերը, որոնք առկա են գեոդերային սոցիալականացման գործիչների՝ ծնողների, մանկավարժների, հոգևորականների, ինչպես նաև պատանիների և երիտասարդների շրջանում: Քանի որ վերջիններս, իրենց հերթին, հանդիսանում են գեոդերային սոցիալականացման գործիչներ հասակակիցների համար, նրանց գեոդերային պատկերացումները կարևոր էին ինչպես հասակակիցների կողմից կատարվող գեոդերային սոցիալականացման առանձնահատկությունները, այնպես էլ սերունդների միջև գեոդերային պատկերացումների նմանությունները և տարբերությունները հասկանալու համար: Երկու սերունդների տվյալների համեմատության միջոցով պարզեցինք, որ պատանիների և երիտասարդների գեոդերային պատկերացումները համարժեք էին ծնողների, մանկավարժների, հոգևորականների շրջանում առկա գեոդերային պատկերացումներին և կրում էին կարծրատիպային բնույթ: Այդ պատճառով արդյունքների շարադրման մեջ չենք առանձնացրել ավագ և երիտասարդ սերնդի գեոդերային պատկերացումներն ու կարծրատիպերը, այլ քննարկել ենք դրանցից ամենաարտահայտվածները և գեոդերային սոցիալականացման գործընթացի վրա նշանակալի ազդեցություն ունեցողները (անհրաժեշտության դեպքում շեշտադրելով, թե որ սերնդում կամ որ խմբում է առավել ընդգծվել տվյալ կարծրատիպը): Գեոդերային սոցիալականացման միջոցով գեոդերային կարծրատիպերի, պատկերացումների, դիրքորոշումների միջսերնդային փոխանցման ուղիները ներկայացված են նկար 2-ում:



Նկար 2. Գենդերային պատկերացումների, դիրքորոշումների և կարծրատիպերի միջսերնդային փոխանցման ուղիները

2.2.1. Գենդերային պատկերացումներ, կարծրատիպեր և տարբերակված վերաբերմունք.

«Աղջիկը գնացող ա...» «Տղեն տան սյունն ա...»

Գենդերային պատկերացումները և դրանց կարծրատիպացված դրսևորումները՝ գենդերային կարծրատիպերը, պայմանավորում են երեխաների նկատմամբ համապատասխան վերաբերմունքն ու դաստիարակության պրակտիկաները, ինչպես նաև փոխանցվում են սերնդեսերունդ՝ դառնալով գենդերային սոցիալականացման կարևոր բաղադրիչներ: Վերլուծելով ավագ սերնդի և երիտասարդ սերնդի ներկայացուցիչների շրջանում առկա գենդերային պատկերացումները՝ պարզ դարձավ, որ նույնիսկ երիտասարդների և պատանիների խմբերում դրանք հիմնականում կարծրատիպային բնույթ են կրում: Այդ կարծրատիպային պատկերացումները մասնավորապես վերաբերում են ընդունակություններին, անձնային որակներին և հատկապես սոցիալական դերերին և դրանցից բխող վարքի նորմերին ու իշխանության բաշխմանը: Գենդերային կարծրատիպերն արտահայտվում են փոխհարաբերությունների տարբեր մակարդակներում և անդրադառնում են երեխաների նկատմամբ վերաբերմունքի վրա՝ սկսած այն պահից, երբ նրա սեռը հայտնի է դառնում (հիմնականում մինչև երեխայի ծնվելը), և հետագայում էլ ուղեկցում են մարդուն մինչև կյանքի վերջ: Եթե դաստիարակչական պրակտիկաներն ուղղակիորեն են ազդում գենդերային սոցիալականացման վրա, ապա ծնողական վերաբերմունքն անուղղակի ազդեցություն ունի: Այսպես, տարբերակված վերաբերմունքն ընտանիքում և հասարակության մեջ աղջիկների ու տղաների տարբեր կարգավիճակներ է առաջացնում, խթանում կամ արգելակում է տարբեր տիպի վարքաձևեր և դրսևորումներ, տալիս է վերագրումներ, որոնք հիմնականում չեն արտացոլում երեխայի անձնական արժանիքները, այլ հիմնված են զուտ նրա սեռադերային կարծրատիպին համապատասխանության վրա: Դիտարկենք հասարակական գիտակցության մեջ ամենաարմատավորված և գենդերային անհավասարությունը խթանող կարծրատիպերը և դրանցից բխող տարբերակված վերաբերմունքի առանձնահատկությունները:

1. Աղջիկն ընկալվում է որպես հեռացող, գնացող, ընտանիքի «ժամանակավոր» անդամ, ի հակադրություն տղայի, որը համարվում է ընտանիքի հիմնական անդամ և դրա «բարգավաճման երաշխիք»: Հայկական մշակույթում ընդունված գերդաստանի պատրիլինիալ և ընտանիքի պատրիլոկալ ձևը փոխում է ծնողի կողմից սեփական զավակների ընկալման տեսանկյունը՝ ստեղծելով գենդերային անհավասարության պայման հանդիսացող «աղջիկը գնացող ա», «տղեն տան սյունն ա» հզոր կարծրատիպը: Այս կարծրատիպը հստակ արտացոլվում է խոսակցական լեզվում տարածված և հաճախ կիրառվող փոխաբերություններում և արտահայտություններում. «աղջիկը

ուրիշի տան պատ ա», «տղան օջախի ծուխը վառ ա պահում», «եթե տղա ունես, տանդ ծուխը չի մարում», «տանը մնացած աղջիկ» և այլն: Տարբեր սեռի զավակների նմանատիպ ընկալումները գենդերային անհավասարության են ստեղծում ընտանիքի կեցության գրեթե բոլոր ոլորտներում՝ ժառանգության փոխանցման մեջ. **«*տղեն ա ծնողների ունեցվածքի ժառանգորդը*»** (չնայած իրավական տեսակետից ժառանգներն ունեն հավասար իրավունքներ), ծնողներին սատարելու հարցում. **«*ծնողին պահողը տղեն ա*»**, **«*տղան ծնողին քե ու քիկունք ա*»**, երեխաների սերունդների նկատմամբ վերաբերմունքում. **«*տղու բոռը քո սեփական բոռն ա համարվում*»**, տվյալ տոհմի շարունակականության մեջ. **«*տղեն ցեղի շարունակողն ա*»** և այլն: Աղջկա դաստիարակությունն ամբողջությամբ կառուցված է «աղջիկը գնացող ա» գաղափարի շուրջ և ուղղված է իգական դերին ներկայացվող հասարակական սպասելիքներին համապատասխանությանը: Սա ստեղծում է, մի կողմից, աղջկա ավելի խիստ վերահսկման, սահմանափակման անհրաժեշտություն. **«*աղջիկը ընտանիքի դեմքն ա ներկայացնում*»**, մյուս կողմից՝ նրանից ապագայում ավելի համեստ ձեռքբերումների ակնկալում, քան տղայից, որի ձեռքբերումները կլինեն ընտանիքի բարեկեցության գրավականը:

Այս կարծրատիպը հիմնաքարային է գենդերային սոցիալականացման բոլոր եզրաշերտերի համար, քանի որ ընկած է թե՛ գենդերային առումով տարբերակված վերաբերմունքի, թե՛ դաստիարակության պրակտիկաներում հիմնական գենդերային շեշտադրումների, թե՛ տարբեր սեռի երեխաների մեջ տարբեր անձնային որակներ սերմանելու ձգտման, թե՛ նրանց ապագայի վերաբերյալ պատկերացումների ձևավորման հիմքում:

Որպես տվյալ կարծրատիպի ամենացավալի հետևանք՝ ընտանիքում ի հայտ է գալիս ***տղա երեխայի ավելի բարձր ցանկալիության և տղայապաշտության երևույթ***: Քանի որ աղջիկը համարվում է ընտանիքի ժամանակավոր անդամ, ծնողներն ավելի նախընտրում են տղա ունենալ: Տղայի առկայությունը պարտադիր է համարվում հայկական ընտանիքում, որպեսզի ծնողները հետագայում մենակ չմնան, որպեսզի «տան ծուխը չմարի»: Ծնողների խմբում ակնհայտ է տղա երեխայի նախապատվությունը, հատկապես շեշտվում է դրա կարևորությունը տղամարդկանց համար: Նույնիսկ մայրերը գերադասում են արու զավակ ունենալ, որպեսզի գոհացնեն իրենց ամուսիններին. **«*Որովհետև ես գիտեի, որ ամուսինս էլ էր տղա ուզում*»** (կանանց ֆոկլուս խումբ), **«*Ընտանիքում կիսուր, կեսարա, ամուսինս, բնականաբար, առաջինը տղա կուզենային*»** (կանանց ֆոկլուս խումբ), **«*Տղեն ցանկալի ա միանշանակ*»** (տղամարդկանց ֆոկլուս խումբ):

Այս կարծրատիպի հետևանք են նաև աղջիկների և տղաների վարքի տարբերակված սահմանափակումները, դաստիարակության առանձնա-

հատկությունները, նրանց համար պարտադիր համարվող որակները, ինչ-պես նաև ակնհայտորեն տարբերվող ակնկալիքները նրանց ապագայից (ավելի մանրամասն տե՛ս «Վարքի և դրսևորումների սահմանափակումներ» և «Ապագայի ակնկալիքներ»):

2. Դերերի գեներային բաշխման վերաբերյալ գերիշխում է պահպանողական կարծրատիպը բոլոր խմբերում. կլինը՝ տան կենցաղային հարցերով զբաղվող, տղամարդը՝ ընտանիքի հիմնական ֆինանսական ռեսուրսներ հայթայթող. **«Էդ սեղան դնե՛ք հավաքելը, դա բնորոշ ա աղջկան, որովհետև դա համապատասխանում ա իր հնարավորություններին...»** (երիտասարդների խառը ֆոկլուս խումբ): Սա համարում են բնականոն տրվածություն, որին դեմ գնալը կամ փոփոխությունը չի ողջունվում: Տղաների կողմից որոշակի (բայց ոչ այն ամենը, ինչ աղջկանից է պահանջվում) կենցաղային գործեր կատարելու իրողությունն ընդունվում է միայն ընտանիքում քրոջ կամ իգական սեռի ներկայացուցչի բացակայության պայմաններում. **«Ես մորքուրի պղաներ ունեմ, որ իրենցից ոչ մեկը քույրիկ չունի... միշտ իրանք դնում, իրանք ուրում են ու դրա մեջ վատ բան չեն տեսնում: Ես էդ մի բանն էլ եմ սիրում պղաների մեջ, որ իրանք դրա մեջ վատ բան չեն տեսնում»** (երիտասարդների խառը ֆոկլուս խումբ): Այս կարծրատիպն իր արտահայտությունն է գտնում դաստիարակության պրակտիկաներում, երբ աղջկա վրա դրվում են անհամեմատ ավելի շատ պարտականություններ, քան տղայի վրա (մանրամասն տե՛ս «Դաստիարակչական պրակտիկաներ»):

Դերերի ավանդական գեներային բաշխումը պայմանավորում է կնոջ և տղամարդու անհավասար կարգավիճակների ձևավորումը, քանի որ մեր հասարակությունում կնոջ ավանդական դերն ընկալվում է որպես պակաս արժեքավոր՝ տղամարդու ավանդական դերի համեմատ, որը կապված է ռեսուրսների հայթայթման և տնօրինման հետ: Ըստ այդմ, տղամարդու կողմից կնոջ դերին բնորոշ գործառույթներ կատարելը որակվում է որպես ոչ պատվաբեր: Այսպիսով, դերերի ավանդական գեներային բաշխումը մեծապես պայմանավորում է իգական գեներային դերի ստորադասումը:

Բացի այդ, դերերի նման խիստ տարանջատման հետևանքով արական դերը, այդ թվում և հայրական դերը, սահմանափակվում է «ապրուստի միջոցներ հայթայթողի», պրոդուկտիվ գործունեություն իրականացնողի, իսկ իգական դերը՝ «խնամատարի», վերարտադրական գործունեություն իրականացնողի գործառույթներով: Արական սոցիալական դերի ճնշման տակ տղամարդիկ սկսում են իրենց դիտարկել ընտանիքից դուրս, միայն ընտանիքի վաստակն ապահովողի դերում, ավելին՝ առաջանում է ամեն գնով ընտանիքն ընդունելի տնտեսական վիճակում պահելու սոցիալական պահանջը, ընտանիքի տնտեսական բարեկեցությունը «տղամարդու պատվի» խնդիրն է դառնում: Այս պարագայում երեխաների խնամքին և դաստիարակու-

թյանը մասնակցելը, նրանց հետ հուզական հարաբերությունները դառնում են գրեթե անհնար, քանի որ՝ ա. իր ժամանակի գերակա մասը տղամարդն անցկացնում է ընտանիքից դուրս (երբեմն նաև երկրից դուրս՝ արտագնա աշխատանքի հետևանքով), բ. արական դերը չի ենթադրում կամ նույնիսկ բացառում է հուզականության և հոգատարության դրսևորումները:

Իգական սոցիալական դերը, հակառակը, չի ենթադրում ընտանիքի ֆինանսական բեռը կիսելու պահանջ, այլ ուղղում է կնոջը դեպի վերարտադրական գործունեություն՝ շեշտադրելով հուզականության և հոգատարության կարևորությունը: Արդյունքում՝ նույնիսկ այն կանայք, որոնք մասնակցում են ընտանիքի ֆինանսական ապահովմանը և ունեն մասնագիտական ձեռքբերումներ, ներքնապես անբավարարված են լինում դերային կոնֆլիկտի պատճառով, քանի որ համարվում է, որ աշխատանքը խանգարում է կնոջն իր առաջնային դերը կատարելիս: Այս կոնֆլիկտը մասամբ հետևանք է նաև այն հանգամանքի, որ կինը, վճարվող աշխատանքի անցնելով, կիսում է ընտանիքն ապրուստով ապահովելու ամուսնու դերային գործառույթը, իսկ երեխաների խնամքի գործառույթը շարունակում է մնալ միայն կնոջ ուսերին: Այսպիսով, դերերի ավանդական բաշխումը ճնշում է տղամարդու հուզականությունը և դնում նրա առջև հասարակական, տնտեսական ոլորտում կայանալու խիստ պահանջներ, սահմանափակում է կնոջ արդյունարար գործունեությամբ զբաղվելու ձգտումը և նրան դարձնում է ընտանիքում հոգատարության և խնամքի գործառույթների միանձնյա պատասխանատու:

«Կնոջը բեռնել ինտելեկտուալ, չգիտեմ ընսանեկան, կազմակերպական հարցերով՝ ղեկս չի: Կինը իր դերն ունի, օջախի, էդ սափության, սրբության, էդ ձագուկների, որովհետև գիշերները էդ երեխաները, բառասունքի մեջ մայրը համ կերակրում է, համ բազում է, առավոտն էլ ղեկս է լվանա, ֆանսասիկա է կին առաւածը: Ասված սլել է մի գորություն այդ էակին, որին ուղղակի ղեկս է գնահատել»:

Խոնրագված հարցազրույց հոգևորականի հետ

3. Իշխանության գեղդերային բաշխման վերաբերյալ պահպանողական կարծրատիպային պատկերացումները՝ որպես դերերի ավանդական բաշխման ուղղակի հետևանք, գերակշռում են տղամարդկանց և երիտասարդների խմբում: Նշվում է տղամարդկանց գերակայությունն իշխանության, որոշումներ կայացնելու, դոմինանտության, ֆինանսական ռեսուրսների տիրապետման մեջ, ըստ որում, որքան տղամարդը դոմինանտ է և իշխող, այնքան նա ավելի «ամուսական» է համարվում:

«Իսկ տղաների մեջ մի՞հոս սիրել են իրենց համառությունը, չնայած ասում են, որ ղեկս չի, տղաների բարկությունը, էն որ գոռում

են, էդ բաները սիրուն չի, բայց չգիտես խի մի՞սես ես էդ հավանել եմ տղաների մեջ, որովհետև էդ մի բանն ա, որ տղուն աղջկանից առանձնացնում ա, դե որ իրանք իրանցը լիքի առեն ու աղջիկն էլ լիքի լիքի»:

Երիտասարդների խառը ֆոկլորս խումբ - աղջիկ

Երիտասարդների կողմից կարևորվում է, որ եթե կինը հասարակական կյանքի ոլորտներից որևէ մեկում առավելություն ունի ամուսնու նկատմամբ, ապա դա պետք է մնա միայն ընտանիքի ներսում, և շրջապատը պետք է այդ մասին չիմանա, քանի որ դա «շեղում» է բնական դրվածքից և վտանգ է տղամարդու կարգավիճակի և նույնիսկ ընտանիքի կայունության համար.

«Ինչ կաղված ա կին-տղամարդ հարաբերությանը, եթե նույնիսկ ընսանիքում կինն է լավ բաներ որոշում, ամեն դեպքում հայ իրականության մեջ ընդունված չէ, որ կինը որոշի, բայց, եթե նույնիսկ որոշում է կինը, իմ կարծիքով՝ ընդհանրապես կարիք չկա, որ երրորդ անձ լինի դրանից, էդ դեպքում լավ էլի սահուն ամեն ինչ կլինի, ավելի հարթ, և իրավիճակն այնպիսին կլինի, որ փաստացի տղամարդն է որոշել, և դա լավ էլի ճիշտ կլինի սկսած զույգի համար, և տղամարդու դերը կամ բարձրությունը ընդհանրապես չի ընկնի»:

«Տղան ա հիմնականում էսօրվա մեր հայկական հասարակության մեջ չափ սյունը, ինչն առաջ՝ տունը ղախողը»:

«Կան ընսանիքներ, որ կինը ավելի ոնց որ աղաքավորում ա ընսանիքը՝ ավելի լավ ա աշխատում, սյունն ա, էլի, էդ լավ, բայց ճիշտ ա՝ տղամարդն էլ իրա լավն ունի ընսանիքի մեջ, իրա դիրքում ա»:

«Տղամարդը լավ ա լինի տղամարդ, ով ամեն հարցով լինի առաջինը»:

«Ամեն դեպքում տղամարդը լիքի աշխատի, կնոջից ավելի աշխատի, թեկուզ գումարի առումով էլ, որքանով էլ նույն, եթե ընսանիքում իշխող դերերը, ասենք, ֆինանսից էլ ա կախված, քանի որ էդ իշխելը ֆինանսի հետ էլ ա գալիս, ու կինը կարողանում ա իշխել, ու լավ դեպքերում էլ իշխելը լավ վրա ա անդրադառնում ընսանիքի վրա, քանի որ տղամարդիկ հիմնականում անհնազանդ են լինում և ընսանիքի կորստի է, էլի, բերում դա, դրա համար տղամարդը առաջնահերթ լիքի ա ինքը լավագույնի ընսանիքի թե՛ ֆինանսական, թե՛ յուրաքանչյուր դեպքում առաջնային լիքը գրավի»:

Երիտասարդների խառը ֆոկլորս խումբ

Իշխանության գեներալին բաշխման վերաբերյալ կարծրատիպային դիրքորոշումները, տղամարդկանց դոմինանտության գաղափարներից բացի, ներառում են նաև կանանց ենթարկվողության (հատկապես տղամարդկանց ենթակա լինելու) վերաբերյալ պատկերացումներ: Այս պատկերացումներին համահունչ է ընկալվում պսակադրության եկեղեցական արարողության ժամանակ հնչող «տեր և հնազանդ» պատգամը, որի թերըմբռնման հետևանքներին կանդրադառնա՞նք 2.2.3. *Կնոջ և տղամարդու վերաբերյալ կրոնական պատկերացումներ* ենթագլխում: Աղավաղված ընկալման համաձայն, կինն ընկալվում է որպես տղամարդուն ենթակա անձ, իսկ հավասար կամ հակառակ հարաբերությունը համարվում է բնականոն դրվածքին հակասող բացասական երևույթ: Եթե կինն ինքնուրույն ինչ-որ որոշում է կայացնում, ամեն դեպքում պետք է ձևականորեն ընդունի և բարձրաձայնի ամուսնու կայացրած որոշումը: Այդպիսով, «*տղամարդը գլուխն է, կինը՝ պարանոցը*» արտահայտությունը ցույց է տալիս կանանց ոչ բացահայտ իշխանությունը:

«Չնայած աղջիկը եթե խելացի ա, ասում են՝ աղջիկը տա՛րանոցն ա, որ կողմ ֆռացնի տղայի գլուխը, էն կողմը կգնա, այն-դես որ աղջիկը տի՛սի խելացի լինի... տղան, որ ասում ա, թող մի՛ս ասի հա, բայց ամեն դեղճում ին՛քը իրանը կանի»:

«Կինը ի՛նչու կարող ա լինի, բայց չափի մեջ, ու որ ասում են կանացի որո՛ւակի տեսակով տես՛ ա մոտենաս յուրաքանչյուր հարցին, իմ կարծիքով ճի՛շտ ա, որ դու լինես ին՛քը տեղանով շատ, ավելի ճի՛շտ, մոտեցումներդ ղո տես՛ ա ճի՛շտ լինի, տղամարդուն չբարկացնել կամ ինչ-որ բաներ, նման բաներ տես՛ ա չլինի»:

Երիտասարդների խառը ֆոկլոր խումբ

Կնոջ ոչ բացահայտ իշխանությունը և ենթադրյալ ճկունությունը նշվում են նաև հոգևորականների կողմից.

«Իրականության մեջ կինը մի քիչ եթե իմաստուն եղավ, ամուսինը ինչ՛հաս էլ գոռա, խփի սեղանին բռնո՛ւցքը, կինը իր ուժա՛ծին կհասնի»:

Խորագրված հարցազրույց հոգևորականի հետ

Այս հանգամանքներում կնոջ իշխանությունը հիմնականում տարածվում է իր զավակների վրա, ինչը նրան ամուսնու վրա անուղղակի ազդեցություն գործելու հնարավորություն է ընձեռում: Միևնույն ժամանակ, կնոջ պատասխանատվությունն է՝ ամուսնու հետ ճկուն հարաբերություններ կառուցել, որոնք կնպաստեն իր ցանկությունների կատարմանը:

«Կնոջ առավելությունն էլ այն է, որ զավակների վրա ի՛նչա՛ս

նություն ունի, զավակները իրեն են դասկանում, չան մեջ ըստ էության բոլոր խնդիրների կրողն ինքն է և ինքը կարող է մի վայրկյանում դրանք դարձնել յուրաքանչյուրի ողորկում»:

Խորագրված հարցազրույց հոգևորականի հետ

Հուսադրող է, որ երիտասարդների մի մասը գիտակցում է իշխանության, դերերի հավասար բաշխման անհրաժեշտությունը, բայց միաժամանակ ընդգծում, որ դա հայաստանյան իրականությունում բացակայում է.

«Դերային բաշխումով նրանք ղեկավարում են ինքնին հավասար, բայց բանի ու մեք հասարակության մեջ էդ դերային բաշխումը մի փչ սխալ և ընկալվում, դրա համար անհավասարություն և ճեղի ունենում»:

Երիտասարդների խառը ֆոկլորային խումբ

4. Հաջորդ կարծրատիպը, որը փոխկապակցված է դերերի և իշխանության բաշխման կարծրատիպերի հետ, վերաբերում է ակտիվության/պասիվությանը. կյանքի, ճակատագրի նկատմամբ աղջիկն ընկալվում է որպես պասիվ, տղան՝ ակտիվ դիրք ունեցող: Տղան համարվում է իր ճակատագրի կերտողը, ավելին, իր ընտանիքի կեցությունը որոշողը. **«Տղան ա փունը պահողը»**, իսկ աղջկա ճակատագիրը հիմնականում կախման մեջ է դրվում իր ամուսնական ընտանիքից. **«Աղջիկը ի՞նչ փուն կրնի, ո՞նց կպահեն»**: Այս կարծրատիպի մասնավոր արտահայտումն է «պահող/պահվող» հարաբերակցությունը, երբ տղամարդուն վերագրվում է կնոջ նյութական բարեկեցությունը և անվտանգությունն ապահովողի գործառույթը, իսկ կինը տվյալ հարցերում համարվում է տղամարդուց կախման մեջ գտնվող: Կնոջ խնամատարի դերը, չնայած պարտականությունների լայն շրջանակին և կարևորությանը, չի օժտում նրան ակտիվ դիրքով, կամ տալիս է մասնակիորեն՝ երեխաների նկատմամբ: Կնոջ պասիվության կարծրատիպն իր դրսևորումն է գտնում տղամարդկանց կողմից բերվող համեմատություններում, երբ աղջկան նույնացնում են գեղեցիկ, բայց անշունչ առարկաների հետ. **«Ոնց որ գանձ լինի»**, **«Աղջիկները ոնց որ ...են փափուկ խաղալիքները ոնց են սենց...»**: Հատկանշական է, որ հոգևորականների կողմից աղջիկը կամ ապագա կինը նույնացվում է Մարիամ Աստվածածնի կերպարի հետ, ինչը նրան օժտում է սրբությամբ և մաքրությամբ իբրև ապագա մայր՝ միաժամանակ նրան վերագրելով գերագույն գոհողության պատրաստ լինելու հատկությունը և սահմանելով նրա ակտիվության շրջանակներն ընտանեկան կյանքով: Այսինքն՝ կինը պետք է օժտված լինի առաքինություններով, որոնք լիարժեք կծառայեն ընտանիքի անդամներին լավագույնս խնամելուն և հոգալուն: Սակայն այս գաղափարի համաձայն ևս կինը պասիվ դիրքում է իր կյանքի նկատմամբ, և կնոջ այս կերպարի մեջ դժվար են տեղավորվում հասարակության մեջ բարձր տեղ գրավելու, կարիերա կառուցելու ձգտումները,

քանի որ դրանք շեղում են նրան իր գլխավոր առաքելությունից՝ մայրական ու կանացի պարտականություններից:

Այս կարծրատիպում արտահայտվում է նաև կնոջ և տղամարդու հասարակական ընկալումների տարբերությունն օբյեկտ-սուբյեկտ հարաբերությունում, կնոջ պասիվությունը, կախյալությունը, ենթարկվողությունը ենթադրում են նրա ընկալումն ավելի շատ որպես օբյեկտ, իսկ տղամարդու ակտիվությունը, իշխանությունը տալիս է նրան սուբյեկտի բնութագրեր:

Հենց սրանով էլ հետագայում կարող է պայմանավորված լինել հասարակության մեջ կնոջ նկատմամբ պակաս վստահությունը որպես գիտնականի, ձեռնբեքի, կառավարչի կամ հասարակական գործչի՝ տղամարդկանց համեմատ: Այսպիսով, ծնողներն աղջիկներից հաճախ հասարակական ակտիվություն և նշանակալի ձեռքբերումներ չեն ակնկալում՝ շեշտադրելով արտաքին տեսքի, հուզականության, հոգատարության կարևորությունը: Նման պատկերացումն աղջկա դերի մասին, որն, ըստ էության, գրկում է նրան սուբյեկտ լինելու ձգտումից, հետագայում դրդում է կանանց, որ ունենալով բարձրագույն կրթություն և եռանդ, կամավոր հրաժարվեն իրենց ինքնիրացման իրավունքից և տնտեսական, քաղաքական կամ գիտական դաշտում ինքնադրսևորվելու հնարավորությունից: Ուստի, որպես հետևանք՝ կինն իր ինքնիրացման ամենամեծ դաշտը տեսնում է ընտանիքում, և նրա երազանքներն ու ձգտումներն ամփոփվում են միայն մայրական դերի լավագույն կատարման մեջ: Այսպիսի մոտեցմամբ կնոջ ամենահավակնոտ երազանքը սահմանվում է այսպես. «Ունենալ այնպիսի աշխատանք, որը չի խանգարի ընտանիքին», այսինքն՝ թույլ կտա նրան շարունակել կրել ընտանիքում իր ուսերին դրված բեռն առանց մեծ կորստի՝ միևնույն ժամանակ նրան հնարավորություն տալով ներգրավվել ընտանիքից դուրս հանրային կյանքում և թուլացնել ֆինանսական կախվածությունն ամուսնուց: Այս գեղեցիկ մոտեցումն համապատասխանելու պահանջի պայմաններում հայ կինը հասուն տարիքում անցնում է «ինքնանորմավորման» եղանակին՝ ստանձնելով սեփական վարքն ու ձգտումները սահմանափակողի դերը և ձգտում է լավագույն ձևով իրականացնել այն նեղ սոցիալական դերը, որը նրանից ակնկալում է հասարակությունը:

5. Աղջիկն ընկալվում է որպես հուզական, իսկ տղան՝ գործունյա, վերաբերմունքն աղջկա հանդեպ ավելի զգացմունքային/հուզական է, տղայի նկատմամբ՝ գործընկերային (հատկապես արտահայտված է տղամարդկանց խմբում): Աղջկա նկարագրության մեջ, նրա նկատմամբ վերաբերմունքում գերակշռում է հուզականությունը. **«Աղջիկ երեխա անուշությունը լրիվ ուրիշ ա»**: Աղջկան ընկալում են որպես ջերմ զգացմունքներ, հիացմունք առաջ բերող օբյեկտ, նա նաև ընկալվում է որպես զգացմունքայնության սուբյեկտ, բայց միաժամանակ չի ընկալվում ակտիվության, գործունակու-

թյան տեսակետից, որպես գործունեության սուբյեկտ: Հիշյալ տարբերությունն արտահայտվում է նաև դիմելաձևում, աղջիկներին բաժին են ընկնում ավելի փաղաքշական, հուզականություն արտահայտող բառեր և արտահայտություններ, որոնք ընդգծում են դրական հուզական վերաբերմունքը նրանց նկատմամբ, միաժամանակ նաև աղջկա պասիվ կարգավիճակը. **«Գանչս, քաղցրս»:** Տղաների նկատմամբ դիմելաձևում արտահայտվում են նրանց հետ փոխհարաբերությունների բնույթը և ակտիվությունը. **«Ախպեր, ընգեր, չարաճճի»:** Առկա է նաև կոպիտ դիմալաձև. **«Հմո»**, **«Գյադա»**, **«Կո, այ լակոպ»**, որը, սակայն, միտված է «տղամարդկայնություն սերմանելու» երեխայի մեջ: Իգական հուզականության և արական գործնականության կարծրատիպերն իրենց դրսևորումն են գտնում նաև լայն տարածում գտած հետևյալ արտահայտությունում. **«Աղջիկ ունենամ, որ վրաս լացող լինի, տղա ունենամ, որ ինձ թաղող լինի»:**

6. Մյուս կարծրատիպը, որը վերաբերում է իգական սեռին, այն է, որ աղջիկներն իրենք են պատասխանատու իրենց նկատմամբ տղաների վարվելակերպի համար, ըստ որում, սա ավելի արմատավորված է աղջիկների մտածելակերպում.

«Յուրաֆանչյուր աղջիկ ինքն է սխողում, թե իր հես ոնց վարվի իր դիմացի տղան, այսինքն՝ աղջիկը իր տղաիվածքով տեսք է այնպես անի, թույլ չսա, որ իր դիմացի տղան իրա հես խոսելուց անգամ վաս բառ օգտագործի, իրեն ավելորդ շարժում թույլ տա, էդ աղջիկը տեսք է սխողի իր հես ոնց վարվեն»:

Պատանիների խառնը ֆոկլորս խումբ

Ստացվում է, որ աղջիկը պատասխանատվություն է կրում ոչ միայն իր, այլ նաև դիմացինի վարքի համար, ինչը հետագայում կնոջ նկատմամբ բռնության պարագայում դիտվում է իբրև ամուսնուն բարկացնելու համար բնականոն և արդարացված հետևանք.

«Տնարավոր չի, որ առանց առիթ ամուսինը կնոջ վրա ձեռք բարձրացնի»:

Տղամարդկանց ֆոկլորս խումբ

7. Մտավոր ընդունակությունների և անձնային գծերի վերաբերյալ գենդերային կարծրատիպերը, որոնք ընդգծվել են նախադպրոցական հաստատություններում և դպրոցներում աշխատող մանկավարժների հետ հարցազրույցներում, հիմնականում մատնանշում են, որ տղաներն ընկալվում են իբրև ավելի բարձր մտավոր ունակություններ ունեցողներ, ինչպես նաև ավելի ագրեսիվ, իսկ աղջիկները բնութագրվում են որպես ավելի աշխատասեր և պատասխանատու:

«Տղաների միտքը մի փոքր ավելի ճկուն է, ավելի առագ են

մտածում, ավելի լավ են կողմնորոշվում, լավ է կոորդինացիան, ինչն⁹ է, նաև տրամաբանությունը, աղջիկները մի փոքր ավելի, երևի թե նորություն չեն ասի, աշխատասեր են, ավելի ղարսաճանաչ են, բայց մի փոքր երևի ավելի թույլ ընդունակություններով տրամաբանության մեջ»:

Խորացված հարցազրույց ուսուցչի հետ

«Աղջիկները ավելի հանգիստ են, ասեմք՝ էդ խաղային իրենց բաները կարողանում են կազմակերպել, տղաները ավելի չար են, ավելի ագրեսիվ են, իրար ավելի լուրջ հրում են, խփում են, ավելի ակտիվ են, քան աղջիկները»:

*Խորացված հարցազրույց մանկապարտեզի
ղաստիարակի հետ*

«Որովհետև աղջիկները սովորաբար ավելի հավասարակշռված, հավաքված, չափի մեջ են, քան տղաները»:

*Խորացված հարցազրույց մանկապարտեզի
ղաստիարակի հետ*

Հետաքրքիր է, որ մանկավարժների մեծամասնությունը համարում է, որ վերջին տարիներին (ի տարբերություն իրենց անցյալ տարիների փորձի) իզական սեռի աշակերտներն ավելի ակտիվ ու նախաձեռնող են, ավելի ազատ են կարողանում ինքնադրսևորվել և նույնիսկ երբեմն ավելի անկարգապահ ու ագրեսիվ են, քան տղաները, որոնք ավելի պասիվ ու չնախաձեռնող են. **«Խելքով տղամարդիկ, էն ինքնադրսևոր խավը տղամարդկանց, էնքան խելճ ա բնավորությամբ, մեջտեղ կորում են: Լավ սովորող տղաները էսօր շատ ժամանակ չեն ընդունվում, որովհետև բնավորություն չունեն»** (խորացված հարցազրույց ուսուցիչների հետ): Համարում են, որ շատ կարևոր է, որպեսզի տղաները լինեն ավելի համարձակ, ակտիվ և ինքնավստահ, քան կան. **«Հեղու տղան պիտի ինքնավստահ լինի շատ, հիմա շատ ա պակասում մեր տղաների մեջ: Ընտանիքում էլ տղան պիտի զգա, որ իր խոսքը մի բանի տեղ պիտի անցնի էդ միջավայրում էլի: Ենթադրենք՝ իրա կարծիքն ունի նշանակություն»** (խորացված հարցազրույց ուսուցիչների հետ): **«Առնական տղամարդը, համեմայն դեպս հիմա, ինչ քվում է, դրա կարիքը շատ է զգացվում, շատ»** (խորացված հարցազրույց մանկապարտեզի դաստիարակի հետ): Եվ այս ամենն ամփոփվում է ուսուցչի հոռետեսական արտահայտությամբ. **«Տղա տեսակը կորում ա...»:**

Խնդիրն այն է, որ գոյություն ունի տղաների և աղջիկների անհավասար մրցակցություն. **«Ես նկատեի եմ, որ տղաներին ավելի լավ են վերաբերվում քե՛զնահապախանի, քե՛զ ուշադրության, քե՛զ մյուս-մյուս կողմերով»**, և այն հաճախ մատնանշվում է ուսուցիչների կողմից որպես տղաների ջանքերն

ավելի բարձր գնահատելու ձգտում: Այն, որ ընտանիքում և ուսումնական հաստատությունում աղջիկը պետք է որոշակի դիրք վաստակի, իսկ տղայի դիրքն ամրագրված է իր սեռով, հանգեցնում է մրցակցության մեջ տղաների ձգտման թուլացմանը: Քիչ ջանքերով մեծ ձեռքբերումները դպրոցում, առանց ջանքերի արտոնյալ դիրքն ընտանիքում թուլացնում են տղաների նպատակասլացությունը, նախաձեռնողականությունը, ճկունությունը:

«Աղջիկներն ավելի ակտիվ են հիմա դարձել, քան տղաները, ավելի ըմբոսասացել են, ավելի կամակոր են դարձել, քան տղաները: Նույնիսկ ժառանգում ա լուս հաճախ, որ ձեռք են բարձրացնում տղաների վրա, ամոքակում են, այդդիսի երևույթներ լուս են նկատել, առաջ էդդես չէ»:

Խորացված հարցազրույց ուսուցչի հետ

«Տիմա, ասենք, աղջիկները ավելի համարձակ են, ավելի կայուն բնավորություն ունեն, քան նախկինում են դաստիարակել աղջիկներին, հիմա էդդես չի, էլի... Հանգիստ իրենց կարծիքը կարող են հայտնել աղջիկները, ավելի անկաշկանդ են հիմա, քան տղաները, կարելի ա ասել: ... Տիմա որ նայում ենք, աղջիկներն ավելի կայուն բնավորություն ունեն, համարձակությունն ավելի լուս ա աղջիկներին մոտ»:

Խորացված հարցազրույց մանկապարտեզի դաստիարակի հետ

Մեջբերումներում առկա դիտարկումները, առաջին հերթին, աղջիկների կողմից մրցակցային անհավասար պայմաններում գոյատևելու ձգտման հետևանք են. քանի որ տղաներն ավելի արտոնյալ դիրքում են գտնվում, աղջիկները փորձում են իրենց նախաձեռնողականությամբ և ակտիվությամբ հավասարվել տղաներին. «**Տղաներն իրանց իմացածը, իրանց չգիտումները չեն ցուցադրում, ավելին ամաչում են սովորեն: Իսկ աղջիկները ցուցադրելու խնդիր ունեն, շատ են ուզում իրենց ցուցադրեն, չեղած փեղից էլ մի բան սփռեցնում են**» (խորացված հարցազրույց ուսուցչի հետ): Մյուս կողմից, մենք երիտասարդ մայրերի խմբում աղջիկներին ավելի ազատ ու համարձակ մեծացնելու միտումներ ենք արձանագրել:

Ըստ որում, աղջիկների ակտիվության, լիդերության ձգտումը համարվում է բնական դրվածքին հակասող, անընդունելի, և ուսուցիչներից շատերին զայրացնում կամ մտահոգում է. «**Պիպի հակառակը լինել, պիպի աղջիկները ավելի պատիվ լինելին, այսինքն հնազանդ, փղաները նախաձեռնող: Բայց մեր դասն իրականությունը մութ փարիներից սկսած բերել ա հակառակը: Փաստը ցույց ա փայլա, որ մեր փղաները բացարձակ նախաձեռնող չեն, բացարձակ, էնքան ցավով են դա ասում, ազնիվ խոսք**» (խորացված հարցազրույց ուսուցչի հետ):

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ գենդերային պատկերացումներում գերակշռում են կարծրատիպային ընկալումները դերերի և իշխանության բաշխման, իգականի պասիվության, արականի ակտիվության և մի շարք անձնային որակների և ընդունակությունների վերաբերյալ: Հայաստանյան իրականության համար բնութագրական է աղջկա ընկալումը որպես ընտանիքի «ժամանակավոր», իսկ տղայի՝ որպես հիմնական անդամ, ինչը պայմանավորում է նրանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքը, սպասումները, դաստիարակության հիմնական առանձնահատկությունները: Բացի վերոհիշյալներից, մի շարք կարծրատիպային պատկերացումներ են դուրս բերվել նաև իգական և արական սեռի ցանկալի, պարտադիր համարվող որակների վերաբերյալ, որոնք շարադրված են 2.2.2. «Խրախուսվող, պարտադիր համարվող որակներ» պարագրաֆում:

2.2.2. Խրախուսվող, պարտադիր համարվող որակներ

Գենդերային կարծրատիպերը վերաբերում են նաև կնոջ և տղամարդու ցանկալի կերպարին: Այս կարծրատիպերն անչափ կարևոր են գենդերային սոցիալականացումը հասկանալու համար, քանի որ մեծապես պայմանավորում են երեխաների դաստիարակության շեշտադրումները: Թե՛ ծնողները, թե՛ դաստիարակության գործընթացին մասնակցող մյուս մեծահասակները, թե՛ հասակակիցներն ակտիվորեն խրախուսում են այն որակները, որոնք համարվում են տվյալ սեռի համար պարտադիր: Կարծրատիպերի այս խումբը դուրս բերելու համար մենք վերլուծել ենք ծնողների, մանկավարժների և հասակակիցների կողմից խրախուսվող վարքաձևերը, նրանց կողմից որևէ սեռի համար որպես պարտադիր նշվող հատկանիշները, որակները, ինչպես նաև տարբեր սեռի երեխաներին տրվող հիմնական ուղերձները՝ խրատների, կարգախոսների տեսքով: Այս ամենը մեզ թույլ է տալիս հասկանալ, թե ինչ տիպի անձ է հասարակությունը կերտում տղաներից և աղջիկներից, և ինչ գծեր ու հատկություններ է ձգտում ձևավորել նրանց մեջ:

Աղջիկների համար կարևորվող որակներ

1. Չսպվածություն: Բոլոր խմբերում միանշանակ համարվում է, որ աղջիկը պետք է զուսպ լինի թե՛ հուզականության, թե՛ շարժուձևի, թե՛ խոսքի և թե՛ բարոյականության տեսակետից: Չսպվածությունը հարաբերակցվում է աղջիկների սեռականության սահմանափակման հետ, և դաստիարակության մեջ այս շեշտադրումները զուգահեռաբար են հանդես գալիս: Չսպվածությունը որպես աղջկա պարտադիր որակ կարևորում են թե՛ իգական և թե՛ արական սեռի ներկայացուցիչները: Այսինքն՝ սրանով շեշտադրվում է կնոջ կողմից հասարակական նորմերի տիրապետման, նաև վարքն «ինքնանորմավորելու» կարողության կարևորությունը:

«Ամենաառաջինը երևի բարոյական առումով զուստ լինելը,

համեսությունը, ու չգիտեմ: Երևի աղջիկը ղեժֆ ա լինի էնդիսին, որ արժանի լինի մայր լինելուն»:

Երիտասարդների խառը ֆոկլորս խումբ

«Աղջիկներն ավելի իրենց զտված ղախեն»:

*Խորացված հարցազրույց մանկապարտեզի
դասխարակի հետ*

«Աղջիկներին էլ միժս ասում եմ, որ ղեժֆ է լինել զուտդ, ցանկացած ղախի չբռնկվել, չարսահայտել այն ամենը, ինչ ուզում են այդ ղախին ասել»:

Խորացված հարցազրույց ուսուցչի հետ

«Ես սիրում եմ, որ աղջիկը զտված է լինում, այ, իմ աղջկա մեջ հենց դա սերմանում եմ հիմիկվանից»:

Կանանց ֆոկլորս խումբ

2. Համեսություն: Համարվում է, որ աղջիկը պետք է համեսա լինի, սա կարևորվել է բոլոր խմբերում, երկու սեռի ներկայացուցիչների կողմից, միայն մայրերի խմբում չի արձանագրվել:

«Աղջիկը ինչֆան համես, էնֆան լավ»:

Տղամարդկանց ֆոկլորս խումբ

«Դե, հայ ընսանիֆի մեջ ընդհանրադես միժս համեսն ա լինում, էլի, իմ կարծիքով... Աղջիկը ղեժֆ ա հեզ լինի, չէ՞, վայո, դրանով ամեն ինչ ասված ա»:

Տղամարդկանց ֆոկլորս խումբ

«Համեսություն, ինչը բնորոշ ա աղջկան»:

Երիտասարդների խառը ֆոկլորս խումբ

«Աղջկա համար, ղեժֆ է ավելի կանացի լինել, ավելի համես, ավելի բարեհամբույր»:

*Խորացված հարցազրույց մանկապարտեզի
դասխարակի հետ*

3. Չափի զգացում: Գրեթե բոլոր խմբերում բառացիորեն կամ նկարագրությամբ ընդգծվում է այդ որակի կարևորությունը, այսինքն՝ կարևորություն է տրվում ինքնակարգավորման կարողությանը կամ, այլ կերպ ասած՝ ինքնանորմավորման ձգտմանը: Ըստ էության, չափի զգացումը, զսպվածությունն ու համեսությունը կազմում են պարտադիր որակների համախումբ, որը բնորոշում է աղջկա/կնոջ ինքնասահմանափակող, հարմարվող էությունը:

«Չափի մեջ, հավաք, համես»:

Խորացված հարցազրույց մանկապարտեզի

«Աղջիկը համես լինի, այսինքն չափավոր լինի, զուտ լինի»:
Պասանիների խառը ֆոկլոր խումբ

«Աղջկա համար կարևոր են համեսությունը, խելքը, չափի
զգացումը»:

Պասանիների խառը ֆոկլոր խումբ

4. Աղջիկների պարտադիր որակների թվում են մաքրասիրությունը, կոկիկությունը. «**Ես կուզեմ աղջիկս մաքրասեր լինի, կոկիկ լինի, իր արգասքին պեսքին միշտ հեզակի, դրանից էլ բխող՝ ինքը կանացի կլինի**» (կանանց ֆոկլոր խումբ), կենցաղային գործերում հմուտ լինելը. «**Ավելի շատ երևի պնարաբ լինի աղջիկը**» (տղամարդկանց ֆոկլոր խումբ): Ըստ որում, աղջկա մաքրասիրությունը վերաբերում է ոչ միայն սեփական մարմնի և հագուստի, այլ նաև շրջապատի, տան, դպրոցի մաքրությանը հետևելուն: Այս որակը կարևորվել է բոլոր խմբերում, միայն երիտասարդների խմբում դրսևորվել է ոչ թե ուղղակի, այլ անուղղակի ձևով՝ աղջկան տան մաքրությանը հետևելու գործառույթի վերագրումով: Այս որակի կարևորումն ուղղակիորեն արտացոլում է աղջկա՝ իր ապագա դերի համար պատրաստվածության անհրաժեշտությունը և հատակ մատնանշում է կնոջ տեղն ու դերը հասարակությունում:

5. Աղջիկների համար պարտադիր են համարվում նաև ենթարկվողությունը, հնազանդությունը, զիջողականությունը (կարևորվել է հայրերի, երիտասարդների, պատանիների, մանկապարտեզների դաստիարակների և ուսուցիչների խմբում): Եթե սեփական ծնողներին ենթարկվելը կարևոր է համարվում երկու սեռի երեխաների համար, ապա աղջկա դեպքում նա նաև պետք է ենթարկվի տղամարդու՝ իր ընկերոջ կամ ամուսնու, նաև ամուսնու ծնողների որոշումներին: Նույնիսկ համարվում է, որ եթե աղջիկը զիջող և ենթարկվող չլինի, նա ապագայում խնդիրներ կունենա: Հետաքրքիր է, որ երիտասարդ աղջիկներն արդեն ընդունել են այս հանգամանքը որպես փաստ, և իրենք էլ կարևորում են կնոջ հնազանդությունը և ենթարկվողությունը տղամարդու որոշումներին:

«Մի՞հաս ես էդ հավանել եմ տղաների մեջ, որովհետև էդ մի բանն ա, որ տղան աղջկանից առանձնացնում ա, դե, որ իրանք իրանցը լիքն ա, սեն ու աղջիկն էլ լիքն լիքն»:

Երիտասարդների խառը ֆոկլոր խումբ (աղջիկ)

«Աղջկա համար կարևոր ա լսելու ունակությունը, որովհետև յուրաքանչյուր տղա ցանկանում ա, որ իրա կողքի աղջիկը լիքն իրեն»:

Երիտասարդների խառը ֆոկլոր խումբ (աղջիկ)

«Աղջիկն էլ տեսք է մի քիչ տղային լսող լինի, եթե տղան մի բան ասում է, ես ասում եմ՝ հետք կռվի մեջ մի մտի, դու զիջիր, դու աղջիկ ես, հեգ ավելի հանգիստ տալիս, ոչ թե հետք մտի կռվի մեջ, ավելի իրենց զստված տալեն: Աղջիկը եթե զիջող չեղավ, իր համար հետ վաս կլինի, թող հիմիկվանից սովորեն...»:

*Խորացված հարցազրույց մանկապարտեզի
ղաստիարակի հետ*

«Ղե, էլի ջղայնանում եմ, ասում եմ. «դու աղջիկ ես, հեգ տեսք է ավելի համեստ տալեն, հնազանդ, թեկուզ, որ տղան մի բան է իրենից ուզում, աղջիկը չի տալիս, ես ասում եմ՝ չի կարելի, նա տղա է, եթե ասում է, ոչինչ, զիջիր նրան, ես սովորացնում եմ, որ աղջիկները զիջեն տղաներին, չգիտեմ դա ճիշտ է, թե չէ»:

*Խորացված հարցազրույց մանկապարտեզի
ղաստիարակի հետ*

Որպես հակազդում սեփական ճնշված կարգավիճակին՝ մայրերը փորձում են զերծ պահել իրենց դուստրերին այդ վիճակում հայտնվելուց, այդ պատճառով կարևորում են աղջկա չենթարկվողությունը, ինչը նույնպես համարվում է աղջկա հետագա բարօրության նախապայման. **«Ուրախանում եմ, որ աղջիկս թեկուզ հոր բնավորության այդ գծերից վերցնում է, թող մեկ-մեկ, ոչինչ, թող ինչ հակառակվի, բայց հետո կյանքում դա իրեն պետք է գալու»:**

Ըստ որում, այս հարցում երիտասարդ մայրերը ձգտում են փոխել պահպանողական մոտեցումները և իրենց ծնողներից ստացած դաստիարակության իգական մոդելները. **«Ես մեծացել եմ ու հասկացել եմ որդեղ եմ ինչ իմ ծնողները խեղճացրել, որ ես ինչ-որ մի տեղ եղել եմ խեղճ, քաշվող, բայց ես հիմա ինքս եմ ինչ ուղղում ու աշխատում եմ այդ սխալները չկրկնել իմ աղջկա հարցում»:**

6. Գեղեցկությունը: Աղջկա համար պարտադիր են համարվում արտաքին գրավչությունը, գեղեցկությունը (կարևորվել է տղամարդկանց, կանանց, երիտասարդների և դաստիարակների խմբում): Եթե հայրերի և երիտասարդ տղաների կողմից կարևորվում է գեղեցկության մարմնական կողմը (**«Համեստությունը, խելացիությունը, գեղեցկությունը, ինչո՞ւ չէ»** (տղամարդկանց ֆոկլոր խումբ)), **«Մեկ էլ գեղեցկություն, բայց գեղեցկության վրա ավելի շարք եմ ուշադրություն դարձնում, էդ իմ համար շարք կարևոր ա, մնացածն էլ էլի չափի մեջ էլի»** (երիտասարդների խառը ֆոկլոր խումբ)), ապա մայրերի և դաստիարակների կողմից ավելի կարևորվում են աղջկա հագուստի, սանրվածքի կոկիկությունը, խնամվածությունը. **«Սա գեղեցիկ է, ակուրատնի հագնված է, ճաշակով, ես միշտ դա նշում եմ իրենց մոտ, միշտ խրախուսում եմ»** (խորացված հարցազրույց մանկապարտեզի դաստիարա-

կի հետ), **«Ես կուզեմ աղջիկս մաքրասեր լինի, կոկիկ լինի, իր արտաքին տեսքին միշտ հեղինակ, դրանից էլ բխող՝ ինքը կանացի կլինի»** (կանանց ֆոկլոր խումբ): Աղջկա արտաքին տեսքի շեշտադրումը և տղայի մտավոր հնարավորությունների կարևորումը արտահայտվում են անգամ ծնողների մինչծննդյան պատկերացումներում: Դեռևս մինչև ծնվելը, իգական և արական սեռի երեխաների վերաբերյալ պատկերացումները տարբերվում են ոչ միայն բովանդակությամբ, այլ նաև ուղղվածությամբ. աղջիկների վերաբերյալ պատկերացումները հիմնականում կապված են նրանց արտաքին տեսքի, իսկ տղաներինը՝ նրանց մտավոր ունակությունների, անձնային հատկանիշների և անգամ ապագայի ձեռքբերումների հետ:

«Աղջկաս դեմքը բեհեմ գծել էի, հա՛, ու ասում էի նույնիսկ եղունգներդ ղեժ ա երկար-երկար լինեն, փթդ փոքր, աչուկներդ սիրուն, մեծ-մեծ, նուրբ ղեժ է լինես, ղեժ է երգես, ղարես»:

«(աղջիկը) սոյիսկամազ, գանգուր մազերով, շիկահեր, կաղույս կամ կանաչ աչքերով»:

«(տղան) խորը մարդ լինի, լավ մարդ մեծանա, ռաս ուժեղ մաթնասիկա իմանա»:

Կանանց ֆոկլոր խումբ

Սա նաև կնոջ նկատմամբ որպես սպառնալից օբյեկտ դիրքորոշման դրսևորումներից է. կնոջ գեղեցկությունը կարևորվում է, քանի որ նա պետք է գրավիչ լինի հակառակ սեռի համար՝ ընտանիք կազմելու, «հայրական տնից գնալու» իր պարտականությունը կատարելու և հետագայում ամուսնու բարեհաճությունը վայելելու համար:

7. Բնախոսություն (կարևորվել է ուսուցիչների և երիտասարդների կողմից): Երիտասարդների խմբում թե՛ տղաները, թե՛ աղջիկները կարևորում են այս որակն աղջիկների համար. **«Զապվածությունն ու դրա առանձին մի հատկանիշ՝ քախտությունը»** (երիտասարդների խառը ֆոկլոր խումբ): Բանի որ աղջիկներին ներկայացվող սահմանափակումներում մանրամասն քննարկել ենք խոսքի սահմանափակումները, այստեղ ներկայացնում ենք միայն «քախտություն» որակը: Այն բնութագրում է աղջկա չհակաճառող, խոսքի իրավունքի չհավակնող կողմը, այդ պատճառով պարտադիր է համարվում:

8. Ուժեղ կամ թույլ բնավորություն: Աղջկա բնավորության վերաբերյալ կանանց խմբում արձանագրվել են հակասական կարծիքներ: Կանանց մի մասը համարում է, որ աղջիկը պետք է թույլ լինի, ինչն ընկալվում է որպես հակառակ սեռի հետ հաջողակ հարաբերությունների գրավական. **«աղջիկը ոնց է, ինքը ինչ-որ նրբությունով, թուլությունով է, չէ, որ հեղափոխում կյանքում պետք է իրեն այդ թույլ լինելը: Ցավոք սրտի, երբ որ դու ուժեղ**

ես լինում, կին տեսակը, տղամարդը անտեսում է, ես իմ փորձից եմ առում, իսկ եթե դու թույլ ես լինում, ինքը անընդհատ ուզում է քեզ պաշտպանել, ու դու քեզ լավ ես զգում: Ես կուզենայի թույլ լինեի մի քիչ, աղջիկը իսկակահից պետք է թույլ լինի, անգամ եթե ինքը ուժեղ մարդ է, ինքը տղամարդու կողքը պետք է թույլ լինի»: Մյուս մասը հակառակ տեսակետն ունի, համարում է, որ կինը պետք է ուժեղ լինի, քանի որ ընտանիքում պատասխանատվության մեծ չափաբաժին է կրում. **«Ես չեմ գրկում, որ աղջիկը պետք է անպաշտպան, թույլ, անողնաշար էակ լինի, երկուսն էլ մարդ են, ինչ պարբերություն: Որ ուզում եք իմանաք, մեր հայ իրականության մեջ ընտանիքի հիմքը կինն է, ինչի պետք է թույլ լինի, ողնաշարը կինն է»:** Մի դեպքում շեշտադրվում է կնոջ կախյալ կարգավիճակը, որն, ի դեպ, դրական է գնահատվում կանանց կողմից, մյուս դեպքում շեշտադրվում են կնոջ պարտականությունների լայն շրջանակը և ընտանիքի «ծանր բեռը» կնոջ ուսերին, որը կրելու համար նա պետք է ուժեղ լինի: Երկու կարծիքներն էլ արտացոլում են ընտանիքում կնոջ կարգավիճակի անբարենպաստ էությունը:

Մեկ անգամ ևս շեշտենք, որ վերոհիշյալ բոլոր որակները համարվում են անհրաժեշտ աղջիկների ապագա կարևորագույն դերի՝ մայրության, ինչպես նաև «հարսնության» համար.

«Դուք ո՞նց եք տասկերացնում, եթե իմ աղջիկը գնացել և հարս, կեսրաը աշխատանքից կամ հոգնած, կամ գիտված եկել և, ասել և՛ աղջի, քո սիրոջ մերը կամ չգիտեմ ինչ, ինքն էլ սկսել և լեզվին տալը, ընդ, չէ՞ որ խոսքից խոսք և բացվում: Ինքը էդ տախը կարա կուլ տա ու ընդունի, ասի՝ «դադ ջան, ցավդ էլ տանեմ, այ մեռնեմ քեզ, էս ինչ լավն ես, տանի տառեկացնի, ասա, ինչքան գեղեցիկ կլինի, ինքը՝ էդ հարսը, ինչքան սիրուն կլինի, հարգված բոլորի կողմից, որ լեզվին չտա, բան չանի»:

«Որ ծնողներին չի հարգում, իրա կեսուր-կեսարին նկատի ունեմ, իրա ամուսնու, կեսուր-կեսարի առաջ հաց ու ջուր չի դնում, իսկ դա գալիս և ումի՞ց: Ինձանից, մյուսից, մյուսից, որ չենք դաստիարակել, որ ինքը հնազանդ չի: Չէ՞ որ ինչքան հնազանդ եղավ, էնքան հարգանք, իրան էլ կհարգեն, իրան էլ կբարձրացնեն, իրան էլ կողախեն»:

Տղամարդկանց ֆոկլորային խոսք

Ինչպես երևում է, աղջկա ակտուալ ու ցանկալի հատկանիշների նկարագրության մեջ ավելի շատ գերակշռում են ընտանիքի անդամների նկատմամբ նրա պարտավորություններից բխող հատկանիշները, քան այլ անձնային հատկանիշներ, որոնք նրան թույլ կտան ինքնադրսևորվել նաև մասնագիտական և հասարակական գործունեության մեջ:

Տղաների համար կարևորվող որակներ

Ի տարբերություն աղջիկների՝ տղաների հատկանիշների նկարագրության մեջ հստակ երևում է սոցիալական ակտիվության, ընտանիքից դուրս հասարակական կյանքում մասնակցության, կյանքում տեղ գտնելու կարողության կարևորումը, ինչպես նաև գերդաստանը շարունակողի կարգավիճակի ամրագրումը:

«Տղայի ծնունդը ընսանիքում կրկնակի ուրախություն է, քանի որ հենց նա է դառնում սան, օջախի լույսը, վառ ղափող ճրագը և տոնի անունը շարունակող ժառանգը: Նա հոր կողմից դասփարակվում է որդես ավանդությունների կրող, ղափողանող ու զարգացնող: Տղան ղեֆ է հնազանդվի ծնողներին, ուսանի, գճնի իր Տեղը կյանքում և հասարակության մեջ, դառնա լավ ամուսին ու լավ հայր»:

Խոնրագված հարցազրույց հոգևորականի հետ

Տղաների մեջ խրախուսվող որակներում չկար որևէ որակ, որն ընդգրկվում էր բոլոր խմբերում, տարբեր խմբերում տարբեր որակներ էին կարևորվում, տարբեր տիպի վարք էր խրախուսվում: Այդուհանդերձ, թվարկենք այն որակները, որոնք առավել շատ են նշվել.

1. Համարձակություն (կարևորվել է ուսուցիչների, կանանց, տղամարդկանց, դաստիարակների կողմից): Այս հատկանիշը նշվել է նաև այլ հոմանիշներով, մասնավորապես առօրյա խոսակցական լեզվում ընդունված «դուխով» եզրույթով:

«Դուխ» ղիսի ունենա տղան անդայման, չգիտեմ դրան հայերեն ոնց կարելի ա ասել, իրանց հենց Տենց էլ ասում եմ՝ դուխ ունեցի, տղա ես, եթե անգամ կցավացնեն, կծեծեն, մի Տեղը կցավի, ոչինչ, բայց դուխդ Տեղը ղափի, դուխը գործի կեսն ա, ցանկացած հարցերի լուծման մեջ: Ոխկը, համարձակությունը»:

Խոնրագված հարցազրույց ուսուցիչների հետ

«Կուզեմ տղաս ավելի համարձակ լինի, սիրում եմ, գնահատում եմ համարձակ մարդկանց»:

Կանանց ֆոկլոր խումբ

Երբեմն համարձակությունը և նախաձեռնողականությունը նույնացվում են ագրեսիվության հետ, որի բացակայությունը համարվում է «աղջկական»՝ տղայի համար անցանկալի վարքաձև.

«Ծեծող, կռվարար, ագրեսիվ, եթե այդդես չէ, երեխաները ճնշում են նրան, այլ տղաները իրենց ծնողների դրոմամբ: «Քո տղեն ղղիկ ա, դրա համար էլ ծեծում են, լավ են անում», այ էս մոտեցումն ա, էլի»:

Խորագրված հարցազրույց հոգևորականի հետ

2. Հարգանքն իզական սեռի հանդեպ (կարևորվել է կանանց, տղամարդկանց, ուսուցիչների, դաստիարակների, պատանիների կողմից): Հատկանշական է, որ այս կարևոր որակը նշվում է դաստիարակություն իրականացնող բոլոր նշանակալի անձանց կողմից: Այն շատ ընդգծված է հատկապես նախադպրոցական հաստատություններում ու դպրոցում և ներառում է աղջիկների նկատմամբ բռնություն չկիրառելը, նրանց նկատմամբ ուշադիր և բարեկիրթ վերաբերմունքը:

«Երբ հարգում են աղջիկներին, երբ սիրում են, երբ զիջում են, երբ օգնում են»:

Խորագրված հարցազրույց ուսուցչի հետ

«Տղան տեսե՞ք է հարգալից լինի աղջկա հանդեպ, երկրորդ, որ չվիրավորի աղջկան, ձեռք չբարձրացնի, երրորդն էլ, որ ձեռք չառնի աղջկան, աղջկա տախիվը չգցի»:

Պատանիների խառը ֆոկլոր խումբ

3. Կամքի ուժը (կարևորվել է տղամարդկանց, կանանց, ուսուցիչների, պատանիների կողմից): Համարվում է, որ տղայի համար կարևոր է ուժեղ կամք ունենալ կյանքում նշանակալի ձեռքբերումներ ունենալու, խոչընդոտներ հաղթահարելու համար: Կանայք համարում են, որ կամքի ուժը հավասարաչափ կարևոր է երկու սեռի համար, սակայն աղջիկներին այն անհրաժեշտ է հասուն կյանքի դժվարություններին դիմակայելու, ընտանիքում մոր դերը լավագույն ձևով կատարելու համար:

«Կամքը, կամային հասկությունները, որ ավելի ամուր կամք ունենա»:

Խորագրված հարցազրույց ուսուցչի հետ

«Էդ կամքի ուժը ամենավեհն ա, որ երեխու մոտ ձևավորվում ա, կա ու ինքը իրա ուզածին ցանկացած տախիվ կարողանում ա հասնի»:

Տղամարդկանց ֆոկլոր խումբ

4. Նպատակասլացություն (կարևորվել է երիտասարդների, կանանց, տղամարդկանց կողմից): Ծնողները կարևորում են իրենց տղաների նպատակներին հասնելու ընդունակությունը, ձեռքբերումների ձգտումը. **«Որ ինքը համոզիչ կարողանում ա իրա ուզածին հասնի, ...նպատակասլաց լինի»** (տղամարդկանց ֆոկլոր խումբ): Այս որակի շեշտադրումը, նշանակալիությունը հատկապես ակներև է տղաների և ոչ թե աղջիկների համար, քանի որ տղան է ընկալվում որպես ձեռքբերումներ ունեցող, ինքնակերտող, իր ճակատագիրը կառուցող անձ: Այս տարբերությունն այնքան խորն է, որ ծնողը նույնիսկ ցանկանում է, որ իր աղջկա նպատակասլացությունը պատ-

կաներ իր տղային. **«Աղջիկս ուղիղ գնում ա իրա նպատակին, կուզենայի քղաս այդպիսին լինել...»** (կանանց ֆոկլորս խումբ):

5. Արժանապատիվ («թասիբով»), իր խոսքի, խոստումների, արարքների համար պատասխանատու (կարևորվել է ուսուցիչների, մայրերի, երիտասարդների կողմից):

«Տղաների մեջ, երբ որ տղան արժանապատիվ է, քեսեֆ՝ շաս ենք ասում թասիբով տղա...»:

Խորացված հարցազրույց ուսուցչի հետ

«Իրենց ասածի քեր, այ, իմ տղային հենց այդպես էլ դաս-րասվում են դասփարակել»:

Կանանց ֆոկլորս խումբ

«Դե, տղայի համար, ասենք, կարևոր հասկանալի՞ք նա ա, որ ... ասում ա՝ տղա ես, քո ասածին քեր կանգնի: Ասենք, տղամարդը դեֆ ա իրա տղամարդկությունը հենց առաջին հերթին դրանով ցույց տա»:

Երիտասարդների խառը ֆոկլորս խումբ

6. Ընկերասիրություն (կարևորվել է կանանց, տղամարդկանց, երիտասարդների կողմից): Համարվում է, որ տղամարդիկ ավելի լավ են կարողանում ընկերություն անել, քան կանայք, և ընկերների նկատմամբ նվիրվածությունը տղայի, տղամարդու կարևոր հատկանիշ է համարվում. **«Այ, քղու մեջ նաև ընկերասիրություն: Դա շատ կարևոր ա քղու մեջ»** (տղամարդկանց ֆոկլորս խումբ):

7. Հայրենասիրություն (կարևորվել է տղամարդկանց, ուսուցիչների, մանկապարտեզի դաստիարակների կողմից). **«Հայրենասիրությունը պար-պաղիր»** (խորացված հարցազրույց ուսուցչի հետ), **«Հայրենապաշտպան լինի ու ցանկացած պահի պատրաստ լինի իրա ընտանիքը պաշտպանե-լու»** (տղամարդկանց ֆոկլորս խումբ):

Մի շարք որակներ ևս նշվել են, սակայն ավելի պակաս հաճախականու-թյամբ՝ մեկ կամ երկու խմբում: Դրանք են՝ նախաձեռնողականությունը (ու-սուցիչներ, դաստիարակներ), ինքնավստահությունը (ուսուցիչներ), գաղտ-նապահությունը (երիտասարդներ), լրջությունը (երիտասարդներ), աշխա-տասիրությունը (երիտասարդներ), խստությունը (պատանիներ), հանդուր-ժողականությունը (դաստիարակներ):

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ տղաների համար պարտադիր համար-վող որակները, ի տարբերություն աղջիկների մեջ սերմանվող որակների, հիմնականում ինքնիրացմանը, ձեռքբերումներ ունենալուն, ակտիվ և հաջո-ղակ գործունեություն ծավալելուն նպաստող որակներ են: Նույնիսկ ընկե-րասիրությունն ավելի կարևոր է համարվում տղաների համար, քանի որ աղ-

ջիկն ամուսնությունից հետո ստիպված է լինում իր ընկերական շրջապատը նեղացնել և հնարավորինս նվազեցնել շփումն ընկերների հետ՝ ավելի շատ ժամանակ ընտանիքին նվիրելու համար: Այսպիսով, վաղ մանկությունից տղաներին մեծացնում են հասարակությունում բարձր դիրք գրավելու, իր նպատակներին հասնելու, դոմինանտ լինելու, իսկ աղջիկներին՝ գիշող, ենթարկվող և ինքնագոհաբերությանը պատրաստ լինելու ուղերձներով:

Երկու սեռերի համար կարևորվող որակներ

Կան որակներ, որ պարտադիր են համարվում երկու սեռերի համար և արձանագրվել են գրեթե բոլոր խմբերում: Սակայն այստեղ տարբերությունը դրսևորվում է տվյալ որակի բովանդակային ընկալման և նպատակային կիրառականության մեջ: Սինույն որակը, օրինակ՝ նվիրվածությունը, այլ բովանդակային նշանակություն է ստանում կնոջ և տղամարդու դեպքում, իսկ կրթվածությունը տարբեր նպատակների է ծառայում՝ կախված այն կրողի սեռից: Նման երկակիություն կրող որակները երեքն են՝ կրթվածությունը, խելացիությունը և նվիրվածությունն ընտանիքին.

1. Կրթված լինելը, բարձրագույն կրթությունը, բարձր առաջադիմությունը: Ծնողները, ուսուցիչները երիտասարդներն ու պատանիներն առաջնահերթ կարևորում են մարդու կրթվածությունը, պատանիներն ու երիտասարդները նշում են նաև դրա կարևորումն իրենց ծնողների կողմից: Այստեղ տարբերություն չի դրսևորվում և թե՛ տղայից ու թե՛ աղջկանից պահանջում են ուսման հանդեպ լուրջ վերաբերմունք, բարձր առաջադիմություն. **«Երկուսն էլ ունենան բարչրագույն կրթություն անպայման»** (կանանց ֆոկլուս խումբ), **«Լավ սովորի, սովորելու վրա եմ շեշտը դնում»** (տղամարդկանց ֆոկլուս խումբ), **«Ընդհանրում միշտ ասել են սովորի, կարգա, որ ինչ-որ մի բանի հասնես, դժվարություններ հաղթահարես, որովհետև էս կյանքում յուրաքանչյուր մարդ մենակ ա..»** (երիտասարդների խառը ֆոկլուս խումբ):

Սակայն տարբերություն դրսևորվում է այդ կրթվածության նպատակում: Հաճախ տղամարդու կրթվածությունը կարևորվում է ապագայում եկամտաբեր աշխատանք ունենալու, ընտանիքը ֆինանսապես ապահովելու տեսակետից. **«Տղայի համար երևի ուսումը, որովհետև տղան է ընդհանրի գլուխը, տղան է իր ընդհանրը պահում, եթե տղան տղեկ լինի, ինքը իր ընդհանրը չի կարող պահել, դրա համար իմ համար ամենաառաջնահերթը, որ կրթված լինի»** (պատանիների խառը ֆոկլուս խումբ): Կնոջ կրթվածությունն ավելի շատ կարևորվում է երեխաների դաստիարակության, նրանց ուսմանը հետևելու, աջակցելու տեսակետից. **«Ընդհանրում ամենակրթվածը պետք է լինի կինը, որովհետև կինը ապագա մայր է, ու ինքը պետք է դաստիարակի իր երեխաներին»** (պատանիների խառը ֆոկլուս խումբ):

2. Խելացիություն: Այս որակի տակ հասկացվում են կշռադատված որո-

շումների կայացումը, վարքի ծրագրավորումն ու վերահսկումը: Տարբերությունն այն է, որ աղջիկների խելացիությունը հիմնականում վերաբերում է միջանձնային հարաբերություններում կշռադատված քայլերին, սեփական վարքի գիտակցական վերահսկմանը. *«...սիտի իմանա, որտեղ, ոնց պահի իրեն»* (տղամարդկանց ֆոկլոր խումբ), *«Խելացի վարքագիծ հանդես բերելու, որ խառնակչություն չունենան, բարի լինեն իրենց ընկերուհիների, ընկերների նկատմամբ, օգնեն միմյանց...»* (խորացված հարցազրույց մանկապարտեզի դաստիարակի հետ), իսկ տղաների դեպքում՝ ինտելեկտուալ ընդունակություններին և որոշումների կայացմանը. *«Խելացի լինի, ճիշտ կարողանա դասի տվյալ պահին»* (տղամարդկանց ֆոկլոր խումբ): Կրկին տեսնում ենք, որ նույնիսկ աղջկա խելացիությունը կարևորվում է ոչ թե նրա հասարակական գործունեության, մասնագիտական ձեռքբերումների, կայացման տեսակետից, այլ մտերիմների հետ փոխհարաբերությունների պահպանման, ընտանեկան, մայրական ֆունկցիան կատարելու տեսակետից. *«Որ աղջիկը լինի աղջիկ, և՛ արտաքուստ, և՛ ներքուստ, դրա համար ինքը պետք ա լինի և՛ խելացի, և՛ գրագետ, և՛ մայր ապագա, չգիտեմ, ամեն ինչով ինքը լինի առանձին...»* (երիտասարդների խառը ֆոկլոր խումբ):

3. Նվիրվածություն ընտանիքին: Տղամարդու՝ ընտանիքին նվիրվածությունն ասելով, առաջին հերթին, նկատի են առնվում ընտանիքի կարիքները հոգալը, ընտանիքը անհրաժեշտ ռեսուրսներով ապահովելը. *«Եթե տղամարդն ընտանիք կազմած ա, պետք ա առաջնահերթ հոգ տանի իր ընտանիքի մասին ու հեղափոխ մյուս գործերը, իրա համար մյուս քայլերը պետք ա երկրորդական քվան»* (երիտասարդների խառը ֆոկլոր խումբ): Կնոջ նվիրվածությունը, առաջին հերթին, ենթադրում է հավատարմություն ամուսնուն, ընտանիքին, նրանց հանդեպ հոգատար և ուշադիր վերաբերմունքի դրսևորում. *«(աղջկա համար) Հիմնական կարևոր գծեր են առանձնացնում հավատարմությունը, նվիրվածությունը, նաև, խելացիությունը, իր սիրող լինելը, նամանավանդ իր կողակցին»* (երիտասարդների խառը ֆոկլոր խումբ): Տղամարդկանց պարագայում նվիրվածությունը չի ենթադրում հավատարմություն. *«Ցավոք սրտի, մեր հասարակությունում տղամարդը իրավունք ունի սիրուհի պահելու, տուն չգալու, իրավունք ունի ընկերների հետ գնա խմելու, կնոջը չտանի իր հետ»* (խորացված հարցազրույց հոգևորականի հետ), *«Տղու մի ոտը տունն ա, մի ոտը՝ դուրսը»* (տղամարդկանց ֆոկլոր խումբ): Հատկանշական է, որ աղջիկների համար նվիրվածությունը համարվում է շատ ավելի կարևոր որակ, քան տղաների:

Երկու սեռերի համար կարևորվել են նաև մի քանի այլ որակներ, որոնք միանշանակ բնույթ են կրում, ի տարբերություն նախորդների, և ավելի համարվել են արժևորվող հատկանիշներ են: Դրանք են.

1. «Մարդկայնությունը», որի մեջ միավորվում են բարությունը, կամե-

ցողությունը, մարդասիրական վերաբերմունքը, հիմնականում ձևակերպվում են «լավ մարդ», «մարդկային լինի» արտահայտություններով, հավասարաչափ կարևորվում է երկու սեռերի համար գրեթե բոլոր խմբերում:

2. Մեծերի հանդեպ հարգալից վերաբերմունքը: Կարևորվել է գրեթե բոլոր խմբերում, ինչպես նաև հաճախ նույնացվում է ծնողներին ենթարկվելու, նրանց որոշումներով շարժվելու հետ:
3. Ազնվությունը: Կարևորվել է ուսուցիչների, մանկապարտեզի դաստիարակների և հոգևորականների խմբերում:

Ընդհանրական որակների թվին են պատկանում նաև սթրեսակայունությունը, համբերատարությունը, պատասխանատվությունը, կայունությունը, երախտագետ լինելը, բարությունը, ներողամտությունը և այլն: Այս որակները կարևորվել են առանձին խմբերում, այդ պատճառով սակավ նշանակալի են:

Այսպիսով, ամփոփելով սոցիալականացման ընթացքում տղաների և աղջիկների մեջ խրախուսվող որակները՝ կարող ենք փտահոսությամբ ասել, որ դրանց միջև գոյություն ունի շեշտադրված գենդերային տարբերակվածություն՝ որպես հասարակական գիտակցությունում ամրագրված հիմնական գենդերային կարծրարիպերի դրսևորում: «Աղջիկը գնացող ա» և «աղջիկը ապագա մայր ա» գաղափարներն առաջացնում են աղջիկների մեջ զիջողականության, ենթարկվողության, զսպվածության, ինքնասահմանափակման որակների ձևավորման անհրաժեշտությունը, որոնք նրանց դարձնում են «հարմար» ուրիշ ընտանիքում ապրելու և պատասխանատու՝ կրտսեր սերունդ դաստիարակելու համար, այսինքն՝ կնոջն ուղղում են դեպի ընտանիք: Իսկ «տղան տան սյունն ա» և «տղամարդը տան գլուխն ա» գաղափարները տղաների մեջ նպատակասլացություն, համարձակություն, հաջողության հասնելու չգրում սերմանելու անհրաժեշտություն են առաջացնում, ինչի հետևանքով նրանք հասարակական գործունեության մեջ ինքնադրսևորվելու հնարավորություն են ստանում:

2.2.3. Կնոջ և տղամարդու վերաբերյալ կրոնական պատկերացումներ «Տեր ու հնազանդ»

Ընտանիքում տղամարդու և կնոջ դերերի բաշխման, կնոջ դերի նվազման կամ նրա նկատմամբ բռնությունների առաջացման պատճառները հասկանալու համար փորձել ենք ուսումնասիրել «Տեր ու հնազանդ» գաղափարի ընկալումը հոգևորականների կողմից, նաև պարզել դրա տարրնթեցումների պատճառներն ու հետևանքները, քանզի ակնհայտ էին տվյալ գաղափարի խեղաթյուրված ընկալումը և շահարկումը որպես կանանց ենթարկվող կար-

գավիճակի ամրագրման գործիք. *«Եկեղեցում ասվում ա, չէ՛ աղջիկը հնազանդ ա, տղեն տեր: Էդ իզուր ասված չի, դա բխում ա Էդ Չեր ասած, որ մենք պետք ա քվարկեինք, այ էդ կեպերն ա բերում դրան հասցնում, աղջիկը պետք ա խող լինի»* (տղամարդկանց ֆոկլոր խումբ): Հոգևորականներից ստացված տեղեկություններն ընտանիքում կնոջ ու տղամարդու կարգավիճակների մասին, ըստ Աստվածաշնչի ճշմարիտ մեկնաբանության, կարող ենք ձևակերպել հետևյալ կերպ. «Տեր» լինելու գաղափարի մարմնացումը, առաջին հերթին, ենթադրում է պատասխանատվություն միմյանց նկատմամբ:

«Կնոջ սիրելն է սեր լինելու ժայման, կնոջը խնամելը, կնոջը մեծարելը»:

*«Կինը կասարյալ կլինի, եթե լինի հոգեղես առողջ ընսանի-
փում, իր սեղում, գնահատված, արժևորված, չգիտեմ, էն ամենա-
լավ բաները, որ մարդ կարող է ինքն իրեն գանկանալ»:*

Խորհրդված հարցազրույց հոգևորականի հետ

Հոգևորականների պարզաբանմամբ՝ Աստվածաշնչի ճշմարիտ ընկալման համաձայն պսակադրվողները խոստանում են հնազանդ լինել իրենց սիրում, այսինքն՝ հավասարապես պատրաստ են զոհաբերել իրենց եսասիրական մղումները հանուն դիմացիների:

«Այնեղ շատ հեռաբխի մի բան է ասվում, եթե զղամարդը սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում, այսինքն՝ փակվեց այդ օղակը»:

Խորհրդված հարցազրույց հոգևորականի հետ

«Տեր ու հնազանդ» կնոջ համար և «Տեր ու ժառանգ» ամուսնու համար: Պատկադրության ժամանակ ամուսինները խոստում են չալիս հնազանդ լինել իրենց սիրում»:

Խորհրդված հարցազրույց հոգևորականի հետ

Ու հետևելով այս մեկնաբանությանը՝ ամուսնանալիս ամուսինը պետք է գիտակցի կնոջ հետ հարաբերությունների սրբությունը, և նոր ընտանիքը կառուցելիս առաջնային տեղ տա իր կնոջ հետ հարաբերություններին՝ չթողնելով այլ մարդկանց միջամտել և ուղղորդել դրանք:

«Ասվածաշունչն ասում է. ամուսինը ղեկ է բողնի իր ծնողներին և հետևի իր կնոջը»:

Խորհրդված հարցազրույց հոգևորականի հետ

*«Տեր ասածն ի՞նչ ա նշանակում, սեր՝ նշանակում ա կյանք
սալ, հոգ չանել: Երբ բերում ա զղամարդկանց ասում ա՝ սեռ,
ոնց որ Քրիստոս իր կյանքը զվեց եկեղեցու համար, Քրիստոս փե-
սան ա, եկեղեցին հարսը, նույն ձևով դու ժառանգորդ ես փ կնոջ*

համար կյանքդ սալ, որ ինքը լինի անարաս, սուրբ և առանց որևէ արափի, հոգևոր առողջ: Էն, որ կինդ լիքի կասարյալ լինի, էդ քո հոգածությունն ու քո լուսնին է քեզ լինելու, ոչ թե հրամանն սալու»:

Խորագրված հարցազրույց հոգևորականի հետ

Մեկնաբանելով այս հասկացությունների թերթմբռնումները հասարակության գիտակցության մեջ՝ հոգևորականները նշում են, որ երիտասարդները հաճախ ամուսնանում են առանց հասկանալու պսակի խորհուրդը: Ամուսին դառնալու ձգտումը շատ անգամ սահմանափակվում է տղայի կողմից «տիրոջ» դեր ստանձնելու պատրաստակամությամբ և ենթակա ձեռք բերելու ակնկալիքով, մինչդեռ այն հեռու է քնտանիքի էության Սուրբգրային ընկալումից:

«Եվ Պողոս առաքյալն ա, չէ, ասում՝ ով իր կնոջը սիրում է, ինք իրեն է սիրում: Էդ թողթը քիչ են կարդում սովորաբար, լուսնի ժամանակ: Ուրեմն սկիզբը գնում ա սենց՝ կանայք, հնազանդ եղեք Ձեռ ամուսիններին, ինչդեռ Տիրոջը կենսական լիքի, որովհետև ամուսինն է իր կնոջ գլուխը, և կանայք ամեն ինչում լիքի ա հնազանդ լինեն իրենց ամուսիններին, էսքանը, երկու-երեք նախադասությամբ: Տառադր՝ այրեք, զղամարդկանց ա դիմում, սիրեք Ձեռ կանանց էսդեռ, ինչդեռ Քրիստոս սիրեց եկեղեցին և իր կյանքը սվեց եկեղեցու համար, ով իր կնոջը սիրում ա, ինքն իրեն ա սիրում, և չկա մարդ, որ ինքն իրեն ասի, ամեն մեկն էլ սնում և խնամում է իր մարմինը: Ավելի մեծ հասկած սրան ա, զղամարդկանց, որ էդ քեզ լինելը գոհաբերություն ա, ոչ թե ինչ-որ մեկը քո համար լիքի գոհաբերվի»:

Խորագրված հարցազրույց հոգևորականի հետ

Չնայած պսակադրության խոստումների խեղաթյուրված մեկնաբանումը շատ տարածված է և հատկապես շահարկվում է տղամարդկանց կողմից, հուսադրող է, որ երիտասարդները փորձում են ճիշտ հասկանալ պսակադրության խոստումների խորհուրդը, այլ ոչ թե աղավաղել դրանք՝ կնոջ նկատմամբ տղամարդու լիիրավ իշխանության հիմք դարձնելով և նույնիսկ բռնություն գործելու ինքնաթույլություն սահմանելով:

«Ղերային բաժխտումը, օրինակ, մեր եկեղեցին սալիս է, որ կինը լիքի է խոնարհ լինի, իսկ զղամարդը սան գլուխը լիքի է լինի, բայց մեր հասարակությունը սա լուսն սխալ ա ընկալում, ավելին, զղամարդը, կորցնելով իր գլուխը, փորձում է բռնի ձևով ենթարկեցնել իրան կնոջը, սա կոչվում ա խոնարհություն, այսդեռ ասած, այսօրվա լեզվով, բայց ինքը վաղուց արդեն կորցրել ա իր կենդանի վիճակը»:

Երիտասարդների խառը ֆոկլոր խոսք

Սակայն, ըստ հոգևորականների, միայն սեռերի մասին կրոնական պատկերացումների աղավաղումից չէ, որ կնոջ և տղամարդու հարաբերություններում խնդիրներ են ծագում, և նշում են դրանց նպաստող մի քանի գործոններ.

1. Տղամարդու Ես-ի կայացված լինել/չլինելու աստիճանը, ինքնահաստատման կարիքը:
2. Ամուսինների ընտանեկան դաստիարակության մոդելը, ընտանիքից ժառանգված արժեհամակարգը, դերերի բաշխման ու պարտականությունների ընկալման տարբերությունները:
3. Ամուսինների միջև առօրյա դրական շփման պակասը և կոնֆլիկտային իրավիճակում երկխոսության բացակայությունը:
4. Ծնողների միջամտությունը, ամուսնու ծնողների հետ վատ հարաբերությունները՝ մի հարկի տակ բնակվելու հետևանքով:
5. Ամուսնու շեղվող վարքը՝ խաղամոլությունը, հարբեցողությունը, թմրամոլությունը:
6. Ամուսիններից մեկի վերարտադրողական առողջական խնդիրները, մասնավորապես՝ անպտղությունը:
7. Ընտանեկան սոցիալական պայմանները՝ սոցիալական անապահովությունը, աշխատանքային միգրացիան:
8. Ամուսինների կրթական մակարդակը, որը, սակայն, ունի երկրորդական դեր, քանի որ առաջնայինն ամուսինների արժեհամակարգի համատեղելիությունն է և ինքնագիտակցության մակարդակը:

«Մարդուն որդեսգի դու հարգես, խելք ունենալ տես՜ չի, էլի, մարդը լիքի մարդ լինի, մարդկային կերպար լինի: Այսինքն՝ էդ կարծրափողերը ավելի շատ գալիս են ներքին արժեքային համակարգի աղավաղումից, երբ որ մարդը չունի վստահություն սեփական ուժերի նկատմամբ, էսօր մեր հասարակության մեջ ամենասարածված երևույթներից մեկը՝ ինքնահաստատվել ուրիշի հաշվին: Ես չափազանց սարածված ու բացասական ու արհեստական երևույթ ամ»:

Իտրուզված հարցազրույց հոգևորականի հետ

Ըստ հոգևորականների, ընտանեկան խնդիրների հիմնական տեսակներն ու պատճառները, որոնց հետ նրանք բախվում են առօրյա քահանայական ծառայության մեջ, երբ գանգատը ներկայացվում է կնոջ կողմից, հետևյալն են.

«Ընսանիքում անսեռված լինելը, ամուսնու կողմից մորը չափից դուրս լսելը, ամուսնու դավաճանությունը, զավակների դաստիարակության հարցի նկատմամբ տղամարդկանց անհարբեռությունը...»:

Իտրուզված հարցազրույց հոգևորականի հետ

«Չայն չունենալը, անուշադրությունը ամուսնու կողմից...
Տղամարդկանց իրենց ավելի արժանավատ լինելու դերի չարժանա-
հումը և կնոջ դերի նվազեցումը...»:

Խոսքոված հարցազրույց հոգևորականի հետ

Ի տարբերություն սրա, տղամարդկանց կողմից ներկայացվող խնդիրնե-
րի ձևակերպումն առավելապես անձնային հարթության մեջ է և արտացո-
լում է նրանց դժգոհությունը սեփական կարգավիճակից.

«Տանը ջերմ վերաբերմունքի տակապ, աղջկա ծնողների
խառնվելը ընտանեկան խնդիրներին, որդես տղամարդ չկայա-
ցած լինելու հանգամանքը՝ աղքատ սահմանափակում, աշխատանք
ունենալու հարցում, ասում են. կինը չի ուզում ինձ ընդունել ինչ-
դիսին ես կամ՝ ուր տուն գալ, անել ինչ ուզում եմ, կինը դիմա-
նքի, հասկանա, հարմարվի»:

Խոսքոված հարցազրույց հոգևորականի հետ

Անդրադառնալով բռնության պատճառներին՝ հոգևորականների կար-
ծիքները հաստատեցին այն իրողությունը, որ ներկայիս սեռադեբալին բա-
ժանումն ընտանիքում ապահովում է տղամարդկանց հոգեբանական հար-
մարավետ վիճակը, այսինքն՝ որպեսզի ընտանիքում խաղաղություն լինի,
կինը պետք է հնարավորինս քիչ հավակնի ամուսնու հետ հավասար իրա-
վունքներ ունենալուն, այլապես վտանգի տակ է դրվում տղամարդու սուբյեկ-
տիվ կարգավիճակն ընտանիքի այլ անդամների կամ ավելի լայն շրջապա-
տի ներկայացուցիչների աչքերում:

«Երևի տղամարդկանց դժվար է ընդունել իրեն հավասար կնոջ
կերպար...»:

«Տղամարդուն ձեռնառնել կնոջը սեռնեմ հավասար իրավունք-
ներով օժտված, քանի որ դա նրան զրկում է որոշ առավելություն-
ներից՝ դաստիարակությանը չմասնակցելու, ազատ ժամանակը
իրեն տրամադրելու, այլ»:

«Կանանց նկատմամբ բռնությունները չեն դադարի այնքան,
քանի դեռ մայրերը իրենց որդիներին դաստիարակում են որդես
իրենց ենթարկվող, անխնայություն, իրենցից բացի այլ կանանց
չհարգող»:

Խոսքոված հարցազրույց հոգևորականի հետ

Այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ բռնության պատճառների
քննարկումից հանգեցնիք այն մտքին, որ գեղեցիկային կարծրատիպերի ազ-
դեցությունից զատ, ընտանիքում կոնֆլիկտների ու բռնության պատճառը
հաճախ ամուսինների միջև հարգալից, այսպես ասած՝ «մարդկային» վերա-
բերմունքի պակասն է, որի նախապայմանն է անձի հասուն արժեհամակար-

գը՝ խարսխված համընդհանուր մարդկային արժեքների՝ հավասարության, հարգանքի, արժանապատվության զգացումների վրա: Ուստի, ընտանեկան բռնության երևույթի դեմ արդյունավետ պայքարի համար գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը զուգահեռ՝ պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ հասարակության մեջ կանանց դերը ընտանիքում չի կարող բարձր լինել, քանի դեռ հասարակության մեջ մարդու արժեքն ընդհանուր առմամբ նվազեցված է, ու ոտնահարված են նրա հիմնարար իրավունքները:

2.2.4. Դաստիարակչական պրակտիկաներ

Դաստիարակչական պրակտիկաներն ամբողջությամբ հիմնվում են գենդերային դերերի մասին պատկերացումների, հիմնական գենդերային կարծրատիպերի վրա և ծառայում են անձի զարգացմանը զուգընթաց նրան այս պատկերացումներին մոտեցնելուն: Այդ պրակտիկաները ճնշում են անձի որոշ կողմեր և խթանում այլ կողմեր՝ ձևավորելով նրան հասարակական պահանջներին համապատասխան: Այսպիսի տարբերակված դաստիարակությունն ուղղված է աղջիկներին դարձնել ենթարկվող ու հոգատար, տղաներին՝ նախաձեռնող ու ուժեղ: Ավելին, երեխաների դաստիարակության մեջ մի շարք պրակտիկաներ կարող են հիմք դառնալ ընտանիքում տարբեր սեռի երեխաների անհավասար կարգավիճակների ձևավորման և հետագայում թե՛ հասարակության մեջ և թե՛ ընտանիքում այս կարգավիճակների ամրագրման համար: Դաստիարակչական մմանատիպ պրակտիկաներն են աղջիկների ու տղաների պարտականությունների անհամաչափ և չհիմնավորված բաշխումը, աղջիկների ու տղաների միևնույն արարքների նկատմամբ ծնողների տարբերակված հակազդումները, տարբեր սեռի երեխաների նկատմամբ թույլատրելիության տարբեր սանդղակի կիրառումը, որը հանգեցնում է «չվաստակած» արտոնությունների ինստիտուտի ձևավորմանը հասարակության մեջ և այլն:

Ստորև առանձնացրել ենք այն դաստիարակչական պրակտիկաները, որոնք առավել ազդեցիկ են կարծրատիպային «արական» և «իգական» անձի ձևավորման գործընթացում, ինչպես նաև հանդիսանում են արական և իգական սեռերի անհավասար սոցիալ-հոգեբանական կարգավիճակների ձևավորմանը նպաստող մեխանիզմներ:

1. Ծնողների կողմից ընտանեկան դաստիարակության ընթացքում արական սեռի զավակների համար հնարավորինս բարձր, արտոնյալ դիրք ստեղծելու ձգտում:

«Ինձ թվում է՝ մի փչե՛ղայի՜ն դե՛ս է ե՛րես տա՛ս որո՛ւակի տա՛րի՜ում»:

Կանանց ֆոկլորս խումբ

«Եթե ֆո սղան ա, ուրեմն ինքը մի՛ս ճի՛ս դէ՛ս աս լինի ֆո աշ-
ֆում, որ դրսում կարողանա իրեն դրսևորի, եթե անգամ վաս էլ ա,
սխալ էլ ա, շատ թույլ, հասարակ, հանգիստ ձևով դէ՛ս ա նախա-
սես, ոչ թե ստորագնես, որ դա իրա համար դառնա սովորություն:
Ու էլ մամաներին մի՛ս դէ՛ս աս ասվի՝ տղու որդես տղա հարգի
սան մեջ, եթե անգամ ինքը մի՛ս չի, որ ճի՛ս ա»:

Խորագրված հարցազրույց ուսուցչի հետ

Տվյալ երևույթը, անկասկած, բխում է «տղան տան պլումն ա» կարծրա-
տիպից, ինչպես նաև դերերի և իշխանության անհավասար գեղեցիկ
բաշխումից, այսինքն, եթե տղամարդն ապագա «տան գլուխն է», նա պետք
է մանկուց ունենա որոշակի իշխանություն, խոսքի որոշակի առավելություն
իզական սեռի ներկայացուցչի՝ մոր և/կամ քրոջ հանդեպ:

2. Թե՛ ուսումնական հաստատություններում, թե՛ ընտանիքում տղաների
նկատելիորեն պակաս պարտականությունների առկայություն, իզական սե-
ռի համեմատ: Տղաների պարտականությունները լավագույն դեպքում սահ-
մանափակվում են ինքնասպասարկման, սեփական իրերի կարգուկանո-
նին հետևելու խնդիրներով, սակայն մույնիսկ այս պարտականությունները
տղաների դեպքում պակաս պարտադիր և անվերապահ են համարվում, քան
աղջիկների դեպքում: Աղջիկներն ունեն պարտականությունների ակնհայ-
տորեն ավելի լայն շրջանակ թե՛ ընտանիքում, թե՛ ուսումնական հաստատու-
թյուններում. նրանց պարտականությունն է համարվում ոչ միայն սեփական
իրերի կարգուկանոնին հետևելը, այլև ընդհանուր առմամբ իրենց բնակու-
թյան, ուսումնառության տարածքի մաքրությունը պահպանելը, մորը կեն-
ցաղային գործերում աջակցելը և արական սեռի հարազատների (եղբայր,
հայր) խնամքը:

«Տիմնականում տղաներին հանձնարարում ենք, օրինակ, սե-
ղանները տեղափոխել, կարգավորել, տեղավորել և այլն, աղջիկ-
ներին հիմնականում հանձնարարում ենք հավաք տալիս, մաքուր
դառնել, նույնիսկ դիտողության ժամանակ. «աղջիկներ, վաս չե՞
զգո՞ւմ, երբ ձեր հարազատ դասարանը թափփված է»:

Խորագրված հարցազրույց ուսուցչի հետ

«...իրա եղբայրը մի բաժակ սուրճ է ուզում, ինքը կարող է զլա-
նալ»:

Կանանց ֆոկլոր խումբ

«Աղջիկները անում են, տղես թափում ա, ֆուրկներն էլ գալիս
են, ճնշում են, ասում են՝ խի ես թափում, խի չես հավաքում, էս
էլ ասում ա՝ դուք հավաքե՛ք, աղջիկներն էլ հավաքում են, դե բնա-
կանաբար»:

Տղամարդկանց ֆոկլոր խումբ

Դաստիարակչական այս պրակտիկան ուղղված է, մի կողմից, աղջկան իր ապագա սոցիալական դերի (որի կարևորագույն բնութագիրն ուրիշներին հոգ տանելն ու պատասխանատվությունն է) լավագույնս նախապատրաստմանը, մյուս կողմից՝ տղայի արտոնյալ, գերադաս վիճակի (կրկին նախապատրաստումն է իր ապագա սոցիալական դերին և կարգավիճակին) ամրագրմանը: Պարտականությունների նման բաշխումը, անկասկած, ունի իր պատմական հիմքերը. մինչև ուրբանիզացիայի ժամանակակից մակարդակին հասնելը, հայկական ընտանիքում մեծահասակների հոգսերը կիսելու համար տղաների և աղջիկների միջև աշխատանքի բաժանում էին անում: Տղաներն աջակցում էին ընտանիքին հողագործական և անասնապահական աշխատանքներում, աղջիկները՝ ընտանիքի անդամների սպասարկման, մաքրության և այլ գործերում (նմանատիպ պարտականությունների բաշխում ներկայումս կարելի է հանդիպել գյուղական մշակույթում): Սակայն, քաղաքային կյանքին անցնելով՝ տղաների պարտականություններն աստիճանաբար նվազել են, իսկ աղջիկներինը՝ հիմնականում պահպանվել:

3. Թե՛ ուսումնական հաստատություններում, թե՛ ընտանիքում աղջիկներին ներկայացվում են ավելի խիստ պահանջներ՝ վարքի, կեցվածքի, հագուստի նկատմամբ, իսկ տղաների նկատմամբ ավելի պակաս խստապահանջ վերաբերմունք կա: Աղջիկների նմանատիպ խիստ դաստիարակությունն ուղղված է մոր և հարսի ապագա դերերին նրանց նախապատրաստելուն: Այստեղ ակնհայտորեն դրսևորվում է «աղջիկը գնացող ա» կարծրատիպը, որն աղջկա վարքի խիստ նորմավորման պահանջներ է ներկայացնում: Ըստ էության, աղջկա դաստիարակությունն ամբողջությամբ ուղղված է ուրիշի ընտանիքում ապրելուն, մայրական գործառույթին, «հարսի» գործառույթին պատրաստվելուն: Հետաքրքիր է, որ «կնոջ (կողակցի)» դերն այնքան չի կարևորվում, որքան «հարսի» և «մոր» դերերը: Իսկ «հարսի» և «մոր» դերերը շատ ավելի խիստ պահանջներ են ներկայացնում կնոջը, ավելի մեծ ինքնանվիրում և ինքնագոհաբերություն են պահանջում: Փաստորեն, ծնողներն աղջկան դաստիարակելիս՝ պատրաստում են նրան որպես պոտենցիալ «հարս» մեկ այլ ընտանիքի համար, պոտենցիալ «մայր» իրենց թոռների համար: Որքան հաջողված լինի այս նախապատրաստությունը, այնքան հավանական է աղջկա ամուսնությունը, ինչը ևս հայաստանյան իրականությունում աղջկա համար պարտադիր է համարվում, քանի որ «տանը մնացած» աղջիկը դժբախտ է համարվում: Այդ պատճառով աղջիկներն ավելի խիստ են վերահսկվում խոսելաձևի, բառապաշարի, կեցվածքի, հագուստի և նույնիսկ համացանցից օգտվելու հարցերում: Աղջիկների ոչ նորմատիվ կամ անկարգապահ վարքը, անկաշկանդությունը, նույնիսկ մեր մշակույթում ընդունված նորմերին չհամապատասխանող կեցվածքն ու նստելաձևը խիստ անհանդուրժելի են, ուստի նշանակալիորեն ավելի խիստ հակազդում

են առաջացնում՝ վրդովմունք, դիտողություն, պատիժ, քան տղաների մնա-
նատիպ վարքը: Ավելին, աղջիկների վարքի վերահսկումը շատ դեպքերում
վստահվում է նաև նրանց եղբայրներին, ինչը նպաստում է ընտանիքում
տղաների կարգավիճակի էլ ավելի բարձրացմանը՝ նրանց ավելի մեծ իշխա-
նություն ընծայելով, իսկ աղջիկներին դնելով կախյալ վիճակում և վաղ տա-
րիքից սահմանափակելով նրանց դրսևորումները:

«Տիմնականում հա, աղջիկներին սաստում են, զղաներին՝
ոչ»:

Խոռագված հարցազրույց ուսուցչի հետ

«Ես դղբոցից խոսեմ. մեր դասղեկը հենց սարբերությունն
ամբողջովին դնում էր ու մեր դիմաց էլ ասում էր, որ ես զղանե-
րին ավելի լավ եմ սիրում, քան աղջիկներին: ...աղջիկներին լավ
էր վերաբերվում զղաների մոտ, չգիտեմ ինչ էր մտածում, որ ինչ
վարվում»:

Երիտասարդների խառն ֆոկլոր խումբ (աղջիկ)

«Պարզ ա, որ իմ արձանություններն ավելի լավ ա, քանի որ մեր
ղայմաններից ելնելով հայկական, հնարավոր չի, էլի, հավա-
սար երկուսին նույն բաները թույլատրվի, դրա համար էլ սարբեր-
ությունը տեսնում են»:

Երիտասարդների խառն ֆոկլոր խումբ (ղա)

Սակայն ստացվում է, որ աղջկան հետագա կյանքին մախապատրաս-
տելիս դուրս է մնում նրա կարևորագույն ընտանեկան դերերից մեկը՝ ամուս-
նական դերը: Հաճախ տղամարդիկ ևս, հատկապես առավել պահպանո-
ղական հայացքներ ունեցողները, ամուսնանալիս ոչ այնքան իրենց համա-
պատասխան կին են ընտրում, որքան իրենց ծնողներին հարմար «հարս»:
Իսկ տղաների դաստիարակության մեջ չի ընդգծվում ոչ հայրական դերը,
ոչ ամուսնական: Սա ևս ընտանեկան հարաբերություններում աններդաշնա-
կության մի գործոն է ամուսինների միջև փոխհասկացման բացակայության,
կնոջ ցանկությունների և հասարակական սպասելիքների անհամապատաս-
խանության առաջացման համար, որոնք էլ կարող են ընտանեկան կոնֆ-
լիկտների և բռնության հիմք դառնալ:

4. Թե՛ ընտանիքում և թե՛ դպրոցում տղաների ջանքերն ու ձեռքբերումնե-
րը սովորաբար ավելի բարձր գնահատականի են արժանանում, ի հակադ-
րություն աղջիկների՝ հաջողությունների հասնելու ճանապարհին ստեղծելով
անհավասար պայմաններ աղջիկների համար:

«Ա՛յ, իսկ երբ զղաներն են խելացի լինում, դաստիարակված,
կարգադաս, նրանք մեր աչքին մի փոքր ավելի են բարձրանում,
քան նմանափող աղջիկը: Գիտեմ, ակնկալիքները զղաներից ու

աղջիկներից արքեր են»:

Խորագլած հարցազրույց ուսուցչի հետ

«Մեր կուրսում հիմնականում գերակշռում են աղջիկները, և ես նկատել եմ, որ զղաներին ավելի լավ են վերաբերվում քե՛զ՝ գնահատականի, քե՛զ՝ ուժադրության, քե՛զ՝ մյուս-մյուս կողմերով»:

Երիտասարդների խառը ֆոկլորս խումբ

5. Ընտանիքում իգականի ստորադասման երևույթը դրսևորվում է երեխաների հագուստի պարագաների ու խաղալիքների սեռային բաշխման գործընթացում: Առաջին հայացքից օրինաչափ և անվտանգ այս հանգամանքը մի կարևոր առանձնահատկություն ունի. իրերի, հագուստի, խաղալիքների սեռային բաշխումն իրականացվում է ոչ համաչափ: Թույլատրելի և նույնիսկ սովորական է համարվում աղջիկներին «արական» հագուստ հագցնելը, եղբոր խաղալիքներով խաղալը, նույնիսկ նրա համար «տղայի» խաղալիքներ գնելը, արական համարվող գույների օգտագործումը, իսկ տղաներին խստիվ արգելվում է որևէ «աղջկական» իրի, պարագայի, խաղալիքի օգտագործումը: Այս երևույթն առաջացնում է ծնողների վրդովմունքը, վախը, և կարող է արժանանալ նախատիքի, նույնիսկ պատժի: Տղայի հետաքրքրությունն աղջիկների համար նախատեսված իրերի նկատմամբ համարվում է շատ ավելի անընդունելի, քան աղջիկների հետաքրքրությունը տղաների համար նախատեսված իրերի նկատմամբ:

«Մեր աղջիկը շատ էր տղայի նման, մենք իրան հագցնում էինք տղայի նման, իրան չէին սագում շորիկներ, դե, տղային փորձել եմ տղայական ինչ-որ բաներ»:

«Ինքը լիվ աղջիկ է, բայց հրացան կուզի եղբայրների հետ խաղա, ես չեմ արգելում»:

«Ինքը (աղջիկը) մեհենա է ուզել, ու ես դաստաստվում եմ գնել, որ ինքը խաղա, չեմ ուզում, որ մանկության երազանք մնա մեհենայով խաղալը»:

«Իմ տղային կտուկ չեմ թույլ տալիս իրենիցներով խաղալ, ոչ մի աղջկա խաղալիքներով խաղալ...»:

Կանանց ֆոկլորս խումբ

«Երբ աղջիկը խաղում է տղայի խաղալիքներով, էլի բարկանում եմ, բայց... Էդան չէ, ինչքան, որ տղան խաղում ա իրենից կով»:

Խորագլած հարցազրույց մանկապարտեզի դաստիարակի հետ

Նման պրակտիկաները հանգեցնում են «իգականի» նկատմամբ բացա-

սակն վերաբերմունքի ձևավորմանը՝ որպես պարսավանքի արժանի վարքագիծ կամ անձնային դրսևորում, միևնույն ժամանակ՝ «արականի» վերաբերյալ որպես ավելի գերադասելի, ավելի նախընտրելի, պատկերացումների կայացմանը: Այսպիսով, տղաներին ավելի «առնական մեծացնելու» ձգտումը կամ նրանց «Ֆեմինիզացիայի վախը» հարկադրում են ծնողներին, ըստ էության, բացասական դիրքորոշումներ փոխանցել իրենց երեխաներին իգական հատկանիշների, վարքաձևերի նկատմամբ: Այս մեխանիզմով «աղջիկ» բառը տղաների համար դառնում է վիրավորական արտահայտություն, քանի որ «այդպես մի՛ արա, դու հո աղջիկ չես» արտահայտությունը մեխանիկորեն ամրագրում է «աղջիկ լինելու» բացասականությունը: Գաղտնիք չէ, որ տղաները միմյանց ստորացնելու համար կիրառում են «աղջիկ», իսկ տղամարդիկ՝ «կնիկ» բառը: Եվ լիովին հակառակ՝ դրական բովանդակություն է կրում կանանց նկատմամբ կիրառվող «տղամարդ կին» արտահայտությունը, որը բնութագրում է բարձր կամային որակներով, նպատակասլաց, առաջնորդ կնոջը:

Այսպիսով, դաստիարակության հիմնական գեղերային տարբերությունները կայանում են աղջկան ավելի խիստ և սահմանափակ պահելու, միաժամանակ պատասխանատու դարձնելու, տղային ավելի ազատ, արտոնյալ, «ոչ կանացի» մեծացնելու շեշտադրումներում: Ի հակադրություն այս մոտեցման, կային քահանաների կողմից հնչեցված գեղերային կարծրատիպերից ազատ դաստիարակության գաղափարներ. **«Տղաներն ու աղջիկները պետք է դաստիարակվեն միևնույն կերպ, պետք է նրանց մեջ խրախուսել ազնիվ ու խիզախ լինելը, հոգեբանորեն ազատ ու լիարժեք մարդ մեծացնել...»**:

2.2.5. Վարքի և դրսևորումների սահմանափակումներ

Դաստիարակության կարևոր պրակտիկաներից մեկն է դրսևորումների սահմանափակումը, որոշակի վարքաձևերի արգելումը, ինչը համապատասխան որակներ է ձևավորում և ուղղորդում է գործունեությունը, կյանքի պլանավորումը և այլն: Ամենասկզբից տարբերությունն այն է, որ իգական սեռին ներկայացվող սահմանափակումներն ավելի բազմաքանակ են և ներգրավում են տարբեր ոլորտներ՝ սկսած արտաքին տեսքից, կեցվածքից, նստելաձևից մինչև սեռական կյանքի և ապագայում ամուսնական ընտանիքում վարքաձևերի պահանջներ:

Սահմանափակումներ, որոնց ենթարկվում են աղջիկները
«Մի՛ արա, դու աղջիկ ես...»

Աղջիկների ավելի խիստ և սահմանափակող դաստիարակությունը նրանց ապագա սոցիալական դերի և բարեկեցության համար անհրաժեշտություն է համարվում: Աղջիկներին ներկայացվող հիմնական սահմանափակումները հետևյալն են.

1. Սեռականության սահմանափակում: Աղջիկների սեռականության սահմանափակումները տարբեր տարիքներում դրսևորվում են տարբեր կերպ.

- հավանության չեն արժանանում պատանեկան տարիքում աղջիկների ռոմանտիկ հարաբերությունները տղաների հետ. **«Հիմա աղջիկների մեծամասնությունը ընկեր է ունենում, ինչ թվում է դա, ընդհանրապես էդ հարցն է, էլի, որ չեն թողնում»** (պատանիների խառը ֆոկլուս խումբ),

- անընդունելի է աղջկան սեռականորեն գրավիչ դարձնող հագուստը՝ կարճ, ընդգծող, մեծ բացվածքներով. **«Շորերի համար են շաք խոսում, որ կարճ է կամ սիրուն չի»** (պատանիների խառը ֆոկլուս խումբ),

- առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում աղջկա նստելաձևին մույնիսկ շատ փոքր տարիքից, աղջկա ոտքերը բացված դիրքով նստելը համարվում է անվայել և դիտողության կամ պատժի է արժանանում թե՛ ծնողների և թե՛ մանկավարժների կողմից: Սա սեռականության սահմանափակման յուրահատուկ դրսևորում է,

- մինչև ամուսնությունը սեռական կյանքով ապրելը, ինչը հակառակ պատկերն է ստանում տղայի դեպքում, քանի որ տղամարդկանց մեծամասնությունը կարծում է, որ անգամ ամուսնությունից հետո տղամարդու համար նորմալ է արտամուսնական կապեր ունենալը. **«Ման եկող էլ պետք ա լինի, տղամարդ ա, չէ՞»**,

- կնոջ ամուսնական դավաճանությունը համարվում է անքննարկելի սարսափելի մեղք, որն արժանի է ամենադաժան պատժի, մույն արարքը տղամարդու դեպքում համարվում է բնական, հատկապես տղամարդկանց շրջանում:

2. Աղջիկների նկատմամբ կիրառվում են հստակ ժամանակային և տարածքային սահմանափակումներ, օրինակ՝ երեկոյան ուշ ժամերի տանից չբացակայելու և որոշակի ժամանցի վայրեր այցելելու արգելքներ, որոնք ընկալվում են նաև որպես նրա բարոյականության պահպանման պայման:

«Աղջիկներին չի կարելի գիշերով տուն գնալ, ուր ժամի տուն գնալ, էն էլ նենց տեղերում, որ գեղեցիկ չի»:

«Կուրբե: Ես ինքն երբևիցե չեմ եղել էսեղ, դրա համար էդ խնդրին երբևիցե չեմ... իմ համար խնդիր չի եղել, ախր ես չի բարկացել»:

«Տղաներին՝ մեզ, ավելի լավ ժամանակ ա թույլատրվում ու

կարելի ա մեկ-մեկ նույնիսկ կեսգիշերին զալ տուն ու, ասեմք,
նույնը աղջիկներին հասսաս չեն թողնի, էլի»:

Երիտասարդների խառը ֆոկլորս խումբ

Պետք է փաստել, որ այս տարածաժամանակային սահմանափակումները գործում են նաև հասուն կնոջ կյանքում, պարզապես փոխվում են դրանց վերահսկող անձինք՝ հայրական ընտանիքում ծնողները և/կամ ավագ եղբայրը, իսկ հետագայում՝ ամուսինը և/կամ նրա ծնողները: Հաճախ փոխվում են նաև սահմանափակումների բնույթը և խստությունը՝ կախված ընտանիքի պահպանողականության աստիճանից: Եթե հայրական ընտանիքը եղել է պակաս պահպանողական, քան ամուսնական ընտանիքը, ապա ամուսնությունից հետո կնոջ տարածաժամանակային սահմանափակումներն ավելանում են, ըստ որում, դրանցում կարող են ներառվել նաև հայրական տուն այցելելու և ծնողների հետ շփվելու սահմանափակումները: Իզական սեռի խիստ տարածաժամանակային սահմանափակումները հիմնականում առաջացել են հայ ժողովրդի պատմության որոշակի ժամանակահատվածներում կանանց գերեվարումից պաշտպանելու անհրաժեշտությունից, այդ սահմանափակումների մի մասը մասնակի փոփոխություններով պահպանվել է մինչ այժմ:

3. Աղջիկների համար անընդունելի է համարվում վրդովմունքի, զայրույթի արտահայտումը: Չնայած աղջիկներին խրախուսում են լինել հուզական, սակայն արգելում են արտահայտել զայրույթը հատկապես տղամարդկանց և իրենցից տարիքով մեծերի նկատմամբ: Նմանապես արգելվում է տղամարդկանց և մեծերի խոսքին հակաճառելը, նրանց կողմից ստացված վիրավորանքներին պատասխանելը, քանի որ այս երևույթներն ընկալվում են որպես չենթարկվողություն: Նմանատիպ սահմանափակումները փոքր տարիքից աղջիկներին սովորեցնում են ենթարկվողություն, սեփական շահերից հրաժարում, ինքնագոհողություն. **«Ինքը (աղջիկը) էդ պահը (սկեսրայրի կողմից հասցված վիրավորանքը) կարա կուլ փա ու ընդունի»** (տղամարդկանց ֆոկլորս խումբ):

4. Աղջիկների խոսքի սահմանափակումները վերաբերում են խոսքի գրեթե բոլոր կողմերին.

- տոնայնությամբ. **«Չեմ սիրում, որ աղջիկները բարձր բղավում են, հիմնականում րենց աղջիկ չեմ ունեցել, որ... աղջիկը պիտի միշտ համեստ լինի, չբղավի, ցածր խոսի, նախ ասածը լսի, էդպիսի բաներ, էլի»** (խորացված հարցազրույց ուսուցչի հետ),

- կիրք և գրագետ ձևակերպմամբ. **«Իմ մաման ահավոր շար ուշադրություն է դարձնում իմ խոսելաձևի վրա, ամեն ոչ րեղին բառի համար ջղախնայում է ինչ վրա...»** (պատանիների խառը ֆոկլորս խումբ),

- անպարկեշտ, վիրավորական, հայիոյական բառերի և արտահայտու-

թյունների օգտագործմանը. **«որ կռիվ է լինում, աղջիկների մեջ վարք բառեր չասեն, որովհետև ինչ բվում է դա աղջկա համար նորմալ չէ»** (պատանիների խառը ֆոկլուս խումբ),

- շատ խոսելուն. **«Շաքախոս չաչանակությունը չեմ սիրում աղջկա մոտ»** (խորացված հարցազրույց ուսուցչի հետ), **«աղջիկը պետք ա քշախոս լինի»** (երիտասարդների խառը ֆոկլուս խումբ),

- ուրիշների, հատկապես իրենց ընկերների մասին չարախոսելուն. **«աղջիկը պետք է չբամբասի սրա-նրա մասին»** (խորացված հարցազրույց ուսուցչի հետ):

Աղջիկների խոսքի տարատեսակ սահմանափակումները մասամբ «հարսների չխոսկանության» ավանդույթի* վերապրուկներ են:

5. Աղջիկների անցանկալի վարք է համարվում վատ սովորություններ ունենալը, հիմնականում ծխախոտի և ալկոհոլի օգտագործումը, ինչն ընդունելի (չնայած վնասակար) է համարվում տղաների դեպքում. **«այնպիսի աղջիկներ եմ տեսել, որ ծխում են, դա թույլատրելի չի, կամ խմելը»**: Սա կրկին մեկնաբանվում է աղջկա ապագա մայր լինելու և նրա արարքների՝ հետագա սերունդների համար ունեցած նշանակության տեսակետից: Իսկ տղաների պատասխանատվությունն ապագա սերունդների համար գրեթե չի գիտակցվում:

6. Ծնողները նաև փորձում են վերահսկել աղջիկներին շրջապատող մարդկանց, նրանց ընկերների ընտրությունը, հիմնականում սահմանափակում են աղջիկների շփումն այն հասակակիցների հետ, որոնք չեն տեղավորվում ընդունված նորմերի սահմաններում և խախտում են աղջիկների համար նախատեսված սահմանափակումներից մեկը կամ մի քանիսը. **«Մայրս շրջապատումս նկատում է ընենց մարդկանց, որ իրեն դուր չեն գալիս, ասում է դրա մասին, և ես իրեն խում եմ»** (պատանիների խառը ֆոկլուս խումբ):

7. Աղջիկներին ներկայացվող հաջորդ սահմանափակումն առնչվում է թափթփվածությանը (որի հակադրությունը՝ մաքրասիրությունը, համարվում է աղջիկների համար պարտադիր որակ), եթե տղայի թափթփվածությունը հաճելի չէ, բայց նորմալ է, ապա աղջկա համար դա համարվում է խիստ անընդունելի և ոչ «աղջկական»: Այս սահմանափակումը ևս աղջիկների ապագա դերի կարևորագույն բաղադրիչներից է:

«Կամ էլ թե չէ, ասենք, փնթի ա, թափթփված ա, մազերը գեղեցիկ չի տառու, անընդհատ ֆանդում ա, հավաքված չի, աթո-

* Ըստ ավանդույթի՝ հարսը չպետք է խոսեր ընտանիքի տղամարդկանց հետ, բացի իր ամուսնուց, որոշակի ժամանակ նաև չպետք է խոսեր սկեսորի հետ (օրինակ, Լեռնային Ղարաբաղում մինչև առաջին երեխայի ծնվելը): Հայաստանի տարբեր բնակավայրերում տարբեր խստության չափանիշներ են կիրառվել «հարսի չխոսկանության» նկատմամբ:

դին գեղեցիկ չի նստում, ինչ ասեմ, սրբիչն իր տեղը չի կախում, դրանք մի՞տք տեսք ա... նու, կոկիկություն լինի, մաքրությունը ավելի շատ ոգևորում եմ, թափափված բան չեսանել, անմիջապես դասավորել ամեն ինչը, ոգևորում եմ, ահա սենց ինչ-որ բաներ»:

Խորացված հարցազրույց մասնկապարտեզի դաստիարակի հետ

8. Ուսուցիչների կողմից աղջիկների անընդունելի վարքաձև են ընկալվում նաև լիդերության ձգտումը, նախաձեռնողականություն ցուցաբերելը, ուժեղ կամքը: Հենց այս հատկանիշներն են դիտարկվում իբրև վտանգավոր, քանի որ կարող են ազդել աղջկա հետագա նորմատիվ վարքի ձևավորման վրա՝ նրան «սուբյեկտի» հատկություններով օժտելով և տղամարդու հետ հարաբերություններում հավասարակից դարձնելով:

«Ուժեղ են աղջիկները, էդ լավ չի: Ու բոլոր ուսուցիչների ցավո՞ս կողմն ա էդ, բոլորը էդ կարծիքն են»:

«Մի՞րում եմ, երբ որ աղջիկները չեն մտածում լիդեր լինել, այլ հավասար են Տեսնում իրենց Երջադասի հետ, անկախ սովորելու աստիճանից: ...Բայց ես էդդեա փոքրիկ հավաքներ եմ անում աղջիկների հետ ու աշխատում եմ, որ էդ հավասարության նշանը լինի անողայման»:

Խորացված հարցազրույց ուսուցչի հետ

Ամփոփելով աղջիկների գեղեցիկ սոցիալականացման գործընթացում սահմանափակումների առկայությունը և դրանց հնարավոր ազդեցությունն աղջկա անձի ձևավորման վրա՝ հավելենք, որ աղջիկներին ավելի խիստ սահմանափակումների ենթարկելը հետազոտության մասնակիցների կողմից մեկնաբանվում է մեր մշակույթում աղջիկներին ավելի սահմանափակ պահելու անհրաժեշտությամբ: Այս անհրաժեշտությունը, ըստ նրանց, բխում է կնոջ սոցիալական և ընտանեկան դերի առանձնահատկություններից, աղջկան «ապագա լավ մայր» դաստիարակելու ձգտումից, իր մտերիմների և սերունդների հանդեպ կնոջ պատասխանատվությունից (կնոջ արարքների հետևանքները տարածվում են ոչ միայն իր, այլ նաև նրա մտերիմ շրջապատի վրա՝ ծնողների, երեխաների, ամուսնու)։

«Աղջիկների հանդեպ ավելի խիստ եմ՝ ղայմանավորված մեր մենթալիտետով, մեր մշակույթով, և մի դրական կողմ եմ դրա մեջ նայում, երբ աղջկան դաստիարակելուց հեռանկարային իրան նայում եմ որդես մայր, ինքը որդես մայր տեսք ա ձևավորվի, դրա համար էդ խստությունն ավելի կենսոնացված ա աղջկա ուղղությամբ: Հայրը իր դասականություններով, էդ առումով չի կարա համատեղվի մոր հետ, դրա համար ավելի խիստ եմ վերաբերվում աղջիկների հետ: Ոչ թե բռնի, այլ ուղղակի շատ հավասարակշիռ

խստությամբ, էլի, այսպես ասած»:

Երիտասարդների խառը ֆոկլորս խումբ

«Աղջիկների նկատմամբ հայրը յուրահասուկ ուժադրություն և սածում, դրա համար բարկացնող լուրերը դեռի աղջիկները կարող և ավելի լուր լինեն, քան տղայի դարազայում, քանի որ բացթողումները աղաքայում լուր լինողների կարող են հանգեցնել... Դուք դասկերացնում ե՞ք՝ հարս և գնում, աղջիկ չի դուրս գալիս ..., դա ինչքան ցավալի և ծնողի համար»:

Տղամարդկանց ֆոկլորս խումբ

Սահմանափակումներ, որոնց ենթարկվում են տղաները

«Մի՛ արա, դու աղջիկ չես...»

Տղաներին ներկայացվող սահմանափակումները թե՛ ավելի քիչ են և թե՛ ավելի մեղմ են արտահայտված, դրանք են.

1. Տղաների ամենաանընդունելի և խիստ պատժվող վարքը բոլոր խմբերի կողմից համարվում է աղջկան, կնոջը բնորոշ գործողություններ կատարելը, աղջկական պահվածքը.

«Չկան բաներ, որ աղջկան կարելի է, տղային ոչ, միայն. ֆավել, բարձր կրունկով կոշիկներ հագնել»:

Պատանիների խառը ֆոկլորս խումբ

«Տղան ֆավում է, ինքը 3 օրեկան երեխա էր, ինքը ֆավում էր, մամայի հետ էր ամբողջ օրը, իր մաման ուզում էր սղանել, այ, դա կարգելեմ, ես էլ կսղանեմ»:

Կանանց ֆոկլորս խումբ

«Արգելում են տղային կուկուով խաղա, խոսի՝ աղջկա սարերով խաղա»:

Տղամարդկանց ֆոկլորս խումբ

«Կանացի չլինելը» տղաների ամենախիստ սահմանափակումն է, որի խախտումը պատժի, դիտողության կամ ծաղրի է արժանանում: Այս սահմանափակման խստությունը պայմանավորված է «կանացի միջավայրում» «տղամարդ» մեծացնելու դժվարությամբ: Փաստ է, որ ընտանիքում, նախադպրոցական հաստատություններում և դպրոցում երեխաների դաստիարակությամբ զբաղվում և նրանց հետ շփվում են հիմնականում կանայք: Հայրերը և այլ տղամարդիկ թե՛ ժամանակային, թե՛ բովանդակային առումով պակաս մասնակցություն են ունենում տղաների կյանքում, ինչը դժվարաց-

նում է տղաների գեղեցիկին նույնականության կայացումը՝ «տղամարդկայնության մոդելի» հարաբերական բացակայության պայմաններում: Այդ պատճառով թե՛ ծնողները և թե՛ մանկավարժները խստորեն վերահսկում են տղաների վարքի «կանացի դրսևորումները»՝ փորձելով այդ կերպ նրանց մեջ «տղամարդկային գծեր» դաստիարակել:

2. Տղաների հաջորդ ամենաարգելվող արարքը համարվում է ագրեսիան, բռնության կիրառումը, թույլերի շահագործումը, հատկապես իգական սեռի նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառումը:

«Մի՛ս բարկանում եմ, երբ որ թեկուզ տղաները իրար հետ ձեռքով կամ ուժով կամ խփում են իրար, այ, դա չեմ խախտում ու անընդհատ բարկանում եմ, երբ որ իրար հետ հարցերը դարձում են ձեռքերով, մի՛ս ասում եմ, որ լեյզեր է խոսենք, զրուցենք, դարձաբանենք»:

Խոնրագված հարցազրույց ուսուցչի հետ

«Տղաներին արգելում եմ աղջիկների հետ կողմիս վարվել, ձեռք բարձրացնել»:

Խոնրագված հարցազրույց ուսուցչի հետ

3. Տղաների համար անընդունելի է համարվում լաց լինելը, հուզականություն դրսևորելը: Սա երրորդ ամենաարգելվող վարքաձևն է ընդհանուր առմամբ, իսկ ծնողների խմբերում երկրորդն է: Տղայի լացը հիմնականում որակվում է որպես սեռին ոչ բնորոշ վարքաձև, որպես «իգական» տիպի հակազդում կամ թուլության դրսևորում, իսկ հաճախ էլ այս երկուսի միջև հավասարության նշան է դրվում. համարվում է, որ լաց լինելը բնորոշ է աղջիկներին, որովհետև իրենք թույլ են:

«Գլխկոթյունը, որ լացում են, չեմ ու չում են անում...»:

Խոնրագված հարցազրույց մանկապարտեզի դաստիարակի հետ

«Լացկան չլինի, եթե նույնիսկ ցավում է, տղայի լացը ավելի ա ինձ ջղայնացնում, քան թե աղջկա լացը»:

Տղամարդկանց ֆոկլորս խումբ

4. Տղայի մեջ անընդունելի են համարվում ամաչկոտությունը, համեստությունը, նախաձեռնողականության բացակայությունը, ընկճվող լինելը, դժվարությունները հաղթահարելու անկարողությունը, բոլորը միասին կարող ենք բնորոշել որպես պասիվություն, թուլություն:

«Երբ որ խեղճանում է տղան, ու ինքը չի կարողանում, փակուղու առաջ է»:

Կանանց ֆոկլորս խումբ

«Չեմ ուզում իմ տղային տեսնեմ նման փողի ամաչկոտ, սենց
բաւվող, չխոսկան»:

Տղամարդկանց ֆոկլորս խումբ

«Փասը ցույց ա տալիս, որ մեր տղաները բացարձակ նախա-
ձեռնող չեն, բացարձակ, էնքան ցավով եմ դա ասում, ազնիվ
խոսք»:

Խոնրացված հարցազրույց ուսուցչի հետ

5. Տղաների սահմանափակումները վերաբերվում են նաև հոգեներ-
գործում նյութերի, ալկոհոլի, ծխախոտի օգտագործմանը, անօրինական
արարքներին, որոնք ավելի շատ նշվում են պատանիների և երիտասարդնե-
րի կողմից որպես իրենց ներկայացվող պահանջներ: Սա միանշանակ թաքու-
չէ, քանի որ տղամարդկանց և տղաների մեծ մասը ծխելը կամ որոշ չափով
ալկոհոլ օգտագործելը տղամարդու համար համարում է նորմալ, սակայն թե՛
հայրերը, թե՛ մայրերը փորձում են սահմանափակել իրենց տղաների կողմից
այդ նյութերի օգտագործումը:

«Տղաների դեղում էլ՝ չծխեն, չխմեն»:

Պատանիների խառը ֆոկլորս խումբ

«Փոքր տղիքում մայրս միշտ ասում էր, որ ուսիկանություն
չընկնեմ ու ավելի մասնավորաբար թմրանյութեր չօգտագործեմ»:

Երիտասարդների խառը ֆոկլորս խումբ

Տղաների մնացած սահմանափակումները չունեն համընդհանուր բնույթ,
այլ ավելի մասնավոր են. մայրերի խմբում անընդունելի է համարվում բամ-
բասկոտությունը, հայրերի խմբում վախկոտությունը, ծնողներին չենթարկ-
վելը, ուսուցիչների խմբում՝ ուսման նկատմամբ անպատասխանատու վե-
րաբերմունքը, մեծահասակներին հակաճառելը, ուսուցիչների և մանկա-
վարժների խմբերում կարգուկանոնին չենթարկվելը և ստելը. **«Եթե սպում
են, տանել չեմ կարող: Եթե սպում են, դա ինչ համար ամենապարծեղի
տարբերակ ա»:**

Պարզ է դառնում, որ տղաների դաստիարակության ընթացքում կիրառ-
վող ամենատեղյական սահմանափակումը, առաջին հերթին, կանացի չլինելն է,
որի մաս կարող ենք համարել նաև թուլությունը, ամաչկոտությունը, լացկա-
նությունը, հուզականությունը, նախաձեռնողականության բացակայությու-
նը, զգայունությունը: Իսկ հաջորդ կարևոր սահմանափակումը՝ բռնություն
չգործելը: Առաջին հայացքից տարօրինակ է թվում այն, որ տղաներին վաղ
մանկությունից սոցիալականացման բոլոր իմաստիտուտներում սովորեցնում
են կանանց, աղջիկների հանդեպ բռնություն չգործել, բայց հասուն տարի-
քում նրանցից շատերը դա անում են: *Իրականում խնդիրն այս երկու սահ-
մանափակումների հակասության մեջ է. երբ տղային պարծում են իրական*

կամ թվացյալ աղջիկական վարքի և դրսևորումների համար, նրա մեջ իզական սեռի հանդեպ բացասական վերաբերմունք, ինչպես նաև «իզականի» պայրժելիության վերաբերյալ դիրքորոշում են սերմանում: Այսպիսով, պատիժն իզական վարքի համար դառնում է ավելի գորեղ գործոն և ավելի ուժեղ է ամրապնդվում տղայի հոգեկանում՝ հետագայում, հնարավոր է, պայմանավորելով կանանց հանդեպ բռնությունը, քան «աղջիկներին չի կարելի խփել» վերացական արտահայտությունը:

Այսպիսով, դաստիարակչական պրակտիկաները, այդ թվում նաև վարքի սահմանափակումներն ուղղված են տղաներին և աղջիկներին իրենց համար նախանշված դերերին նախապատրաստելուն, նրանց մեջ սեռատիպիկ որակներ և վարքաձևեր ձևավորելուն: Տարբերակված դաստիարակությունը միտված է աղջիկներին դարձնելու ենթարկվող, զուսպ, պատասխանատու, հոգատար, արտաքին տեսքը կարևորող, իսկ տղաներին՝ «ոչ կանացի», համարձակ, ազատ, նպատակասլաց, կամային, «աղջիկներին հարգող»: Սակայն դաստիարակչական որոշ պրակտիկաներ ունենում են հակառակ ազդեցություն (տղաներին ավելի մեծ արտոնություններ տալը թուլացնում է տղաների նախաձեռնողականությունը, մեծացնում աղջիկների հաջողության հասնելու ձգտումը) կամ բացասական հետևանքներ (իզական դրսևորումների համար պատիժը հանգեցնում է իզականի ստորադասման, իզական սեռի հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորման):

2.2.6. Սեռադիպիկ վարքի մոդելավորում

Գենդերային սոցիալականացման կարևոր գործընթացներից մեկը սեռատիպիկ վարքի մոդելավորումն է, երեխաները վաղ տարիքից ընդօրինակում են ուրիշների վարքը, սկզբնական շրջանում այդ ընդօրինակումն իրականացվում է առանց գենդերային տարբերակման. թե՛ տղաները, թե՛ աղջիկները ընդօրինակում են այն մարդու վարքը, ով ավելի հասանելի է, ում գործողությունները նրանք առավել հաճախ են տեսնում: Աստիճանաբար, պայմանականացման ազդեցությամբ նրանք սկսում են ընդօրինակման համար ընտրել նույն սեռի վարքային մոդելներ, այս գործընթացը շարունակվում է գրեթե ողջ կյանքի ընթացքում: Յուրաքանչյուր տարիքային փուլում տվյալ մշակույթում կամ խմբում իր վարքը գենդերային առումով ավելի տիպական դարձնելու համար մարդը ներքնայնացնում է իր սեռի այն մարդկանց վարքը, որոնք հեղինակավոր են իր համար: Մեր հետազոտության արդյունքների վերլուծությունից դուրս բերեցինք հետևյալ հիմնական անձանց կամ կերպարներին, որոնք հանդիսանում են սեռատիպիկ վարքի մոդելներ երեխաների, դեռահասների և երիտասարդների համար, դրանք են.

1. Ծնողները: Թե պատանիները, թե երիտասարդները նշում են, որ ձրգ-

տում են ինչ-որ գծերով, վարքով կամ գործունեությամբ մնանվել իրենց ծնող-ներին. **«Իմ նպաստակն է իմ հոր ճանապարհը շարունակելը, ես վստահ եմ ազգային անվտանգություն կրնդունվեմ, կսովորեմ 5 տարի Մոսկվայում, կվերադառնամ ու կշարունակեմ իմ հոր ճանապարհը:»** (Պատանիների խառը ֆոկլուս խումբ): Ծնողները նշում են փոքր տարիքից իրենց երեխաների կողմից նույն սեռի ծնողի գործողությունները, վարքը ընդօրինակելու միտում. **«Տղես հենց տեսնում ա, ես գործիքները հանել եմ, որ մի բան սարքեմ, ինչանից առաջ ա ընկնում... չնայած դեռ 3 տարեկան չկա»** (Տղամարդկանց ֆոկլուս խումբ), **«...դե աղջիկները միշտ էլ չգտնում են մամայի շորերին, կոամեպիկային, էս տարիքից ուզում են կանացի լինել»** (Կանանց ֆոկլուս խումբ): Անգամ ուսուցիչները ընդգծում էին սեփական ծնողների ազդեցությունը իրենց որպես կին ինքնադրստորման, հարաբերությունների կառուցման, մայրական գործառույթի ընկալման վրա. **«Ինչ երբեք չեմ ասել պեպք է համեստ լինես, պեպք է զիջող լինես, պեպք է հանդուրժես... բայց միայն այն, որ ես ունեցել եմ այդպիսի մայր, հերիք էր, որ ես դառնայի զիջող ու երբեմն էլ ի վնաս ինչ հանդուրժող... մտածում եմ, որ եթե մայրս ուրիշ բնավորություն ունենար, ես այսպիսին չէի լինի...»** (Խորացված հարցազրույց ուսուցչի հետ)

2. Հասակակիցները և տարիքով մեծ սիբլինգներն ու ընկերները: Բոլոր խմբերում նշվում է հասակակիցների դերը որպես վարքային մոդելներ, առավել ակնհայտ և անմիջական հասակակիցների ազդեցությունը արտահայտվում է մանկապարտեզում. **«Եթե մեկը մի բան անում ա... մնացածը միանգամից նույնն են անում, էս տղան արոտը վերցնում դռնացնելով սենյակով քշում ա, մեկ էլ տեսնում ես արդեն բոլոր տղաները սկսում են արոտները հրել...»** (Խորացված հարցազրույց մանկապարտեզի դաստիարակի հետ): Ընտանիքում երեխաներն ընդօրինակում են տարիքով մեծ սիբլինգներին, իսկ այն դեպքերում, երբ մեծ սիբլինգը հակառակ սեռի է, երեխայի վարքում հաճախ ի հայտ են գալիս հակառակ սեռին բնորոշ վարքաձևեր. **«Ինքը լրիվ աղջիկ է, բայց հրացան կուզի եղբայրների հետ կիսադա, կամ կարող է էն պես վազի, ասես. դու լրիվ տղա ես»** (Կանանց ֆոկլուս խումբ):

3. Մուլտֆիլմերի և հեռուստասերիալների հերոսները: Երեխաները հակված են ընդօրինակելու մուլտֆիլմերի հերոսներին, տղաները՝ սուպերհերոսներին (ընդգծված առնական կերպարների), աղջիկները՝ տարբեր իգական հերոսուհիների՝ սկսած ծայրահեղ ֆեմինին գծեր ունեցողներից մինչև արտահայտված մասքուլին վարք ցուցաբերողները: Հեռուստասերիալների հերոսները սեռատիպիկ վարքի մոդելներ են հանդիսանում թե՛ երեխաների, թե՛ դեռահասների համար. **«Եթե հիշում եք Ջեյդին** (բրազիլական հեռուստասերիալի հերոսուհի), **իմ աղջիկը էր ժամանակաշրջանի ա, ու ինքը ընդօրինակում էր Ջեյդին, բրազիլացիներ էր դնում արաբական պարեր էր**

պարուն»(Կանանց ֆոկլուս խումբ): Հատկանշական է, որ ընտանեկան դիտման համար նախատեսված հայրենական արտադրության հեռուստատեսիվներում առկա են բազմաթիվ բացասական գեմդերային կարծրատիպեր և «անառողջ» սեռատիպիկ վարքաձևեր, այդ թվում, գեմդերային բռնություն պարունակող վարքային մոդելներ⁸²: Ակնհայտ է, որ նման վարքային մոդելները ձևավորում են կարծրատիպային պատկերացում կնոջ և տղամարդու, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունների վերաբերյալ և խթանում են կարծրատիպային վարքային հակազդումներ տիպական իրավիճակներում, օրինակ կին-տղամարդ տարածայնությունների դեպքում:

Բացի նշյալներից սեռատիպիկ վարքի մոդելներ են հանդիսանում նաև ուսուցիչները, ազգականները, երեխայի ամփոջական շրջապատում գտնվող այլ մարդիկ: Քանի որ ներկայումս կրտսեր սերունդը նախընտրում է հեռուստատեսությունը և համացանցը ընթերցանությունից, գրական հերոսները, այդ թվում և հեքիաթների հերոսները ավելի քիչ նշանակալի են երեխաների, դեռահասների, պատանիների կյանքում և պակաս ազդեցիկ են սեռատիպիկ վարքի մոդելավորման գործընթացում:

2.2.7. Ապագայի ակնկալիքներ

Որպես գեմդերային սոցիալականացման հաջորդ եզրաշերտ մենք վերլուծել ենք նաև այն ակնկալիքները, որ ծնողներն ունեն սեփական երեխաներից, ինչպես նաև պատանիների ու երիտասարդների ակնկալիքները սեփական ապագայից: Ակնկալիքների վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ, թե ինչ կարգավիճակում, ինչ դիրքում, հասարակական կյանքի որ ոլորտում են տեղակայվում հասուն կինը և տղամարդը: Ծնողների ակնկալիքները հստակ ուղերձներ են հանդիսանում երեխաների համար՝ պայմանավորելով նրանց պատկերացումները կնոջ և տղամարդու առաքելության մասին ընդհանրապես և իրենց սեփական առաքելության մասին՝ մասնավորապես:

Վերլուծությունից պարզ է դառնում, որ եթե **«լավ մարդ»** դառնալու ակնկալիքն ընդհանրական է երկու սեռերի համար, ապա կարգավիճակի, ձեռքբերումների, հասարակական դիրքի հետ կապված սպասումները նկատելիորեն տարբերվում են: Ակնհայտ են տղաների նկատմամբ սպասելիքներում նրանց գործունե լինելու, բարձր սոցիալական ձեռքբերումների, ծնողների համար հենարան լինելու արմատավորված գաղափարները հատկապես տղամարդկանց խմբում. **«Տղան, որ արժանավոր փղամարդ դառնա, ասենք՝ մենք մեծ գործերի փեր չենք, որ գործներին շարունակություն ու-**

⁸² **Կոչոյան Ա., Գևորգյան Ա.**, Առնականությունն ու գեմդերային բռնությունը հայկական հեռուստատեսիվներում, Երևան, 2014, <http://www.y-su.am/files/Reserch%20paper%2003.09.2014..pdf/>

նենա, ավելի լավ աշխատանքի, ճակատագրի արժանանա»:

Տղամարդիկ տղաներից ակնկալում են լուրջ ձեռքբերումներ աշխատանքի («...**կոմպյուտերային մասնագետ դառնա կամ էլ բիզնեսմեն**»), սպորտի բնագավառում («**Առնվազն աշխարհի չեմպիոն եմ ուզում երկու տղերքս էլ դառնան**»), «**Ինքն ուզում ա սպորտմեն դառնա, կփորձենք սպորտմեն սարքենք, որ հայ ազգը ներկայացնի ամբողջ աշխարհում**»), ճիշտ ինքնադրսևորում միջանձնային հարաբերություններում: Տղաներին պատկերացնում են ղեկավարող պաշտոններում, ազգի և հասարակության համար կարևորվող գործունեության ոլորտներում:

Ակնհայտ է տղամարդկանց կողմից աղջիկներից ավելի համեստ սպասումներ ունենալը, այդ ակնկալիքներն, առաջին հերթին, վերաբերում են նրանց ընտանեկան դերերին, մայրությանը. «**Մեր բոլոր հայ օջախի աղջիկներին կցանկանամ լավ մայր լինեն, լավ օջախի հարս լինեն, լավ առողջ զավակներ բերեն էս պեղության համար**», «**Աղջկերքիս համար տենց կոնկրետ բան չկա, ցանկություն ունեմ, որ հասարակությանն ու ընտանիքին պիտանի մարդ լինի**», իսկ մասնագիտական սպասելիքները լավագույն դեպքում առնչվում են բժշկության կամ մանկավարժության բնագավառների հետ. «**Մեկը բժշկություն ա սիրում, որ բժիշկ դառնա, փոքրս էլ ավելի շատ միևնույն հիմա ոնց որ ասած՝ մանկավարժ**»:

Եզակի դեպքերում տղամարդկանց շրջանում դրսևորվում է «մասնագիտությունների և ձեռքբերումների իզական կարծրաստիպի» հաղթահարում. «**Իմ համար տարբերություն չկա, հիմա աղջիկս կուզենա ֆուտբոլի աշխարհի չեմպիոն լինի, թող դառնա**»:

Աղջկա վերաբերյալ սպասումները տղամարդկանց խմբում նաև կենտրոնացած են նրա՝ տվյալ մշակույթում ընդունված նորմերի համապատասխանության շուրջ, ըստ որում, այդ համապատասխանությունն աղջկա հոր համար պատվի հարց է համարվում. «**Աղջիկը տղամարդու պատիվն ա՝ ոնց կդաստիարակես, վաղը-մյուս օր ոնց մարդու կտաս, էդքան չափով դու քեզ կտաս արժանավոր մարդ համարես**»:

Տղամարդկանց խմբում տղաների և աղջիկների ապագա ձեռքբերումների, կայացման վերաբերյալ անհավասարությունը լավագույն ձևով բնութագրվում է հետևյալ արտահայտությամբ.

«Տղային տեսնում եմ լավ տաճոսներ, բաճ, թե՛ ուժային ոլորտում, չգիտեմ, թե՛ ղեկավարման ոլորտում, այսինքն՝ լավ գործ, լավ մասնագետ, լավ տաճոս, լավ մարդ, իսկ աղջկան էլ մասնագիտությունները շատ ա, սկսած կարա տարի մասնագետ լինի, կարա երգ լինի, կարա, չգիտեմ, մանկավարժ լինի»:

Կանայք հիմնականում երկու սեռի երեխաներից էլ ակնկալում են լուրջ ձեռքբերումներ, մասնագիտական կայացում, արժեքավոր անձնային որակ-

ներ ապագայում: Եվ այնուամենայնիվ, ակնհայտ է, որ տղաների ապագայից ակնկալիքներն ավելի բարձր սոցիալական, մասնագիտական ձեռքբերումների են վերաբերում.

«Ինքը (աղջիկը) ունենա լավ աշխատանք, ցանկացած աշխատանք, թող ինքը ընտրի: Ուզում էի, որ տղաս բանկիր դառնա...»:

«Ուզում եմ, որ աղջիկս ունենա լավ մասնագիտություն, լավ աշխատանք, բայց ինձ համար առաջինը, որ ինքը լինի լավ տղամայր, լավ կին, ծնողին գնահատող, հարգող լինի, և նույնն էլ տղայիս, իհարկե, կուզենամ, որ ունենա լավ մասնագիտություն, հետագայում լավ, եկամտաբեր աշխատանք, ոնց որ ինքն էլ ասում` ես բանկի կառավարիչ եմ դառնալու, իսկ ես, որդես մայր, ուզում եմ իրենց տեսնեմ կայացած, ինքն էլ լինի ընտանիքի հայր, հարգի մեծերին, հիմնականում ինձ համար կարևոր է, որ լինեն լավ ընտանիքի հայր, մայր»:

«Իմ երագանքն է` աղջիկս դարձնի դառնա, իսկ տղաս` բիզնեսմեն»:

«Գտնում եմ, որ աղջկա համար լավ մասնագիտություն է լեզվաբանը, դու անգամ տանը նստած կարող ես տեսնել վառարան, իսկ տղայիս համար կուզենամ, որ կայուն աշխատանք ունենա, իհարկե, երկուսն էլ, որ բարձրագույն ավարտ լինեն»:

Պատանիների և երիտասարդների խմբերում թե՛ տղաների և թե՛ աղջիկների ապագայի ակնկալիքները վերաբերում են իրենց անձնային հասունության որակներին և մասնագիտական ձեռքբերումներին, որտեղ տարբերությունները պակաս նշանակալի են: Միակ ակնհայտ տարբերությունն այն է, որ աղջիկների սպասումներում, բացի մասնագիտական կայացումից, նաև ապագա ընտանիքի և ընտանեկան դերերի վերաբերյալ ակնկալիքներն են արտացոլված. **«Ինչ թվում է ես պետք է սկզբից կայուն մարդ դառնամ, որպեսզի ընտանիք կազմեմ»** (պատանիների խառը ֆոկլոր խումբ):

Այսպիսով, ծնողների սպասումները և ծրագրերն իրենց երեխաների ապագայի վերաբերյալ կառուցված են «տղան` որպես ընտանիքի բարգավաճման հիմք», «աղջիկը` որպես այլ ընտանիք գնացող և ապագա մայր» ընկալումների վրա: Համապատասխանաբար, տղաների ապագան ավելի պլանավորվում է մասնագիտական ու հասարակական ձեռքբերումների և դիրքի, աղջկանը` ընտանեկան դերերի և հարաբերությունների տեսանկյունից: Ծնողական սպասումներն իրենց արտացոլումն են գտնում երիտասարդների ակնկալիքներում` տղաների ձգտումներին տալով միանշանակություն, աղջիկների ձգտումներին` երկատվածություն: Չնայած աղջիկների շրջանում կայացածություն և ձեռքբերումներ ունենալու ձգտումն առկա է ընտանիք կազմելու ցանկության հետ համատեղ, նրանց մեջ ջանասիրա-

բար սերմանվող նվիրվածությունը, չափավորությունը և կնոջ ընտանեկան
դերի գերակայությունը որպես արժեք հաճախ բերում են ապագայի հեռա-
նկարի և առաջնայնությունների փոփոխության, երբ նա ընտրության առջև
է կանգնում:

Վերջաբան

Գենդերային սոցիալականացման առանձնահատկությունների և գործընթացի հետազոտությունը թույլ տվեց առանձնացել կանանց և տղամարդկանց վերաբերյալ հիմնական պատկերացումներն ու կարծրատիպերը, որոնք պայմանավորում են տարբեր սեռի երեխաների նկատմամբ վերաբերմունքի և դաստիարակչական պրակտիկաների տարբերությունները, ստեղծում են վարքի համապատասխան մոդելներ և ապագայի տարբեր հեռանկարներ:

Հիմնական գենդերային պատկերացումները կառուցվում են դերերի և իշխանության ավանդական բաշխման (կինն ընտանիքի համար է, տղամարդը՝ հասարակության), «աղջիկը գնացող ա», «տղան տան սյունն ա» կարծրատիպերի շուրջ, որոնք առաջացել են պատրիլինիալ գերդաստանի, հայրիշխանական մշակույթի և պատրիլոկալ ընտանիքի մոդելների հետևանքով: Դերերի ավանդական գենդերային բաշխումը պայմանավորում է կնոջ և տղամարդու անհավասար կարգավիճակների ձևավորումը, քանի որ մեր հասարակությունում կնոջ ավանդական դերն ընկալվում է որպես պակաս արժեքավոր՝ տղամարդու ավանդական դերի համեմատ, որը կապված է ռեսուրսների հայթայթման և տնօրինման հետ: Բացի այդ, դերերի նման խիստ տարանջատման հետևանքով արական դերը, այդ թվում և հայրական դերը, սահմանափակվում է «ապրուստի միջոցներ հայթայթողի», իսկ իգական դերը՝ «խնամատարի» գործառույթներով, ինչը ճնշում է տղամարդու հուզականությունը և դնում նրա առջև հասարակական, տնտեսական ոլորտում կայանալու խիստ պահանջներ, սահմանափակում է կնոջ արդյունաբար գործունեությամբ զբաղվելու ձգտումը և նրան դարձնում ընտանիքում հոգատարության ու խնամքի գործառույթների միանձնյա պատասխանատու:

Փոխանցվելով սերնդեսերունդ՝ այս կարծրատիպային պատկերացումներն առաջ են բերում առաջնորդության հատկություններով օժտված տղայի և ենթարկվող, պատասխանատու, հոգատար աղջկա հասարակական պահանջարկ: Այս պահանջարկը բավարարելու համար գենդերային սոցիալականացման բոլոր օղակներում տարբերակված դաստիարակության, թույլատրելիության և բարոյականության տարբեր չափանիշների կիրառման միջոցով ստեղծվում են «իգական» և «արական» ինքնություններ:

Աղջկա դաստիարակության բոլոր եզրաշերտերն ուղղված են նրան

ապագա մոր և «համեստ հարսի» դերին պատրաստելուն: Այս դերերի անբաժան մաս են կազմում ինքնամոլորումն ու պատասխանատվությունը. աղջկա տարածաժամանակային սահմանափակումները, սեռականության, ազատ խոսքի, վարքի սահմանափակումները նպատակ ունեն աղջկա մեջ դաստիարակելու սեփական ձգտումների սահմանափակման և ինքնամորմավորման կարողություն, իսկ ընտանիքում և կրթական հաստատություններում աղջիկներին առաջադրվող բազմաթիվ պարտականությունները, մանկության տարիներից խնամքի և կենցաղային գործերին ներգրավվածությունը նրանց մեջ սերմանում են հոգատարություն և պատասխանատվություն:

Տղայի դաստիարակությունը՝ որպես «տան սյուն», ընձեռում է մի շարք «չվաստակած» արտոնություններ և ամրագրում է տղամարդու գերակա դիրքը հասարակության մեջ: Սակայն գերակա դիրքը պահպանելու և «արական» ինքնությանը համապատասխանելու համար տղային/տղամարդուն ներկայացվում են խիստ պահանջներ. ունենալ նշանակալի ձեռքբերումներ, նյութապես ապահովել ընտանիքը, թույլ, հուզական և կանացի չլինել: «Կանացի չլինելու» պահանջն այնքան խիստ է արտահայտվում տղաների նկատմամբ, որ իգական սեռի հետ առնչություն ունեցող ամեն բանի հանդեպ բացասական վերաբերմունք է սերմանում, ինչպես նաև «իգականի» պատժելիության վերաբերյալ դիրքորոշում է ձևավորում: Մյուս կողմից, պետք է փաստել, որ տղաների՝ առանց ջանքերի արտոնյալ պայմաններ ունենալն նրանց մեջ կարող է բուլացնել մրցակցայնության, նպատակասլացության միտումը:

Այդպես, աղջիկներին ներկայացվում են ընտանիքի ներսում հարաբերությունների հաջողվածության և մտերիմների հանդեպ հոգատարության, տղաներին՝ ընտանիքից դուրս տնտեսական և դիրքային ձեռքբերումների պահանջներ: Գեղեցիկին սոցիալականացման բոլոր ինստիտուտներում նրանք ստանում են այդ պահանջներին համարժեք ուղերձներ: Երկու սեռի դաստիարակության մեջ էլ հիմնականում բացակայում է ամուսնական դերին նախապատրաստումը, ինչը հետագայում մեծացնում է ընտանեկան կոնֆլիկտների և համատեղ կյանքով անբավարարվածության մակարդակը:

Դաստիարակության այս տարբերակված պրակտիկաները, մասնավորապես աղջիկների վարքի, ժամանակային, տարածական, խոսքային, ֆիզիկական և այլ ասպեկտների խիստ վերահսկումը և նկատելի սահմանափակվածությունը, նրանց պարտականությունների բազմազանությունը, իսկ տղաների ազատ և արտոնյալ դաստիարակության պայմաններն ամրապնդում են հասարակությունում առկա անհավասար գեղեցիկին կարգավիճակները և երկու սեռերի պարագայում էլ ստեղծում են դրանց բնականոն տրվածության ընկալում:

Երեխաների ապագայի հանդեպ ակնկալիքները հստակ արտացոլում

են այն պատկերացումները, որոնք հասարակությունը վերագրում է կնոջը և տղամարդուն՝ տղաներից սպասելով բարձր հասարակական ակտիվություն և մասնագիտական ձեռքբերումներ, իսկ աղջիկներից՝ համեստ ձեռքբերումներ և «իգական մասնագիտությունների» յուրացում, «օրինակելի հարսնություն» և ինքնամոռաց մայրություն: Այս սպասելիքները, սկսած վաղ մանկությունից, երեխային մատնանշում են իր ինքնադրսևորման սահմանները և բավական հստակ ծրագիր առաջադրում հետագա ողջ կյանքի համար:

Փաստորեն, գենդերային սոցիալականացումը, միտված լինելով երեխաներին համապատասխանեցնել հասարակությունում առկա գենդերային պատկերացումներին, սահմանափակում է թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց ինքնիրականացման հնարավորությունները, ճնշում է առաջինների ստեղծագործ, երկրորդների էքսպրեսիվ կողմը, նվազեցնում նրանց միջև փոխըմբռնումը, ստեղծում պարտականությունների և պատասխանատվության անհավասար բաշխումից բխող լարվածություն: Այս խնդիրների կանխարգելումն ու լուծումը մենք տեսնում ենք ընտանեկան դաստիարակության և կրթական հաստատություններում որոշակի փոփոխությունների իրականացման մեջ: Մասնավորապես առաջարկում ենք. բարձրացնել ծնողների և կրթության ոլորտի մասնագետների իրազեկվածությունը պահպանողական գենդերային կարծրատիպերի ազդեցության և երեխաներին հավասար և ներդաշնակ պայմաններում դաստիարակելու անհրաժեշտության վերաբերյալ, տրամադրել երեխաների սեռատիպիկ և ոչ սեռատիպիկ դրսևորումների նկատմամբ արդյունավետ հակազդման ձևերի վերաբերյալ տեղեկատվություն, հնարավորինս հավասար համամասնություն ապահովել երեխաների դաստիարակության գործընթացում ներգրավված կանանց և տղամարդկանց շրջանում՝ երեխաների գենդերային սոցիալականացման միջավայրում սեռադերային մոդելների բազմազանություն ստեղծելու և ֆեմինիզացված միջավայրում երեխաների դաստիարակության հետևանքները մեղմելու համար:

GENDER SOCIALIZATION

The Process and Result

Research summary

In general, the society uses two major channels to shape gender status and maintenance thereof. From one perspective, it either continuously promotes or hampers the self-socialization in men, as well as their accomplishments and integration in social processes. From the other standpoint, being nurtured by actual gender stereotypes and conservative views, gender socialization for that particular society promotes formation of modest ambitions in women and their little interest in obtaining high societal status or professional achievements as part of their gender role.

The stereotypes and attitudes, which children receive during gender socialization process, create illusions of being pre-defined realities of gender roles and status both in men and women. This creates a psychological need to cope with those roles and excludes any subjective possibility for change. For this, it is crucial to understand the forms and ways by which gender attitudes and stereotypes transmit, also how these contribute to the downgrading of girls and women in families and society, as well as how these stereotypes contribute to the formation and continuation of their unequal status.

The current study explores main psychological causes of gender discrimination because of unproductive gender socialization process in families and Armenian society at large. Based on the desk review of research on gender socialization in various societies around the globe this study attempted to see the root causes of these problems and come up with the analysis of main gender socialization channels affecting status of boys and girls in Armenian society. Interviews with main problem actors have provided for necessary evidence to draw conclusions on flaws and gaps in socialization process of children in families.

The goal of this study is to *reveal the main characteristics of male and female gender socialization in current socio-economic conditions that contribute to and determine the unequal status of men and women in their families.*

In this respect the study attempted to:

1. Explore and define the gender attitudes of the main socialization agents to include parents, teachers, clergy as well as to examine those among

- teenagers and youth as the latter in their turn become gender socialization agents for their peers.
2. Examine and outline the channels through which gender attitudes pass across generations: differentiated upbringing approaches, different scales of delegation of rights/ privileges, differentiated expectations from boys and girls, nurturing and reinforcement of different personal and individual qualities in boys and girls.

Research methodology

1. **Desk review** of existing research body about gender specific socialization of males and females in different societies in order to reveal: 1) main patterns and factors which may contribute to male/boy favoritism in the society; 2) understanding specifics of male/female socialization in society and main determinants of their social inequality, including main constraints for women's utmost efficient self-realization in family and career.
2. **Qualitative study** with using the method of focus-group discussions (FGD) and deep interviews (DI). There have been 4 FGDs conducted and 23 DI carried out with target groups described above.

Research sample: Men (fathers), women (mothers), youth, pre-school and school facility teachers, and clergymen. Overall, 63 persons were engaged in the study, 10 participant in each FGD and 23 DI participant (8 teachers, 8 pre-school teacher, 7 clergymen).

Research findings:

1. The main gender attitudes are constructed around traditional roles and power distribution among men and women, whereas men are mostly for the society and women are generally for the family; the current gender discourse is very much shaped by the long-existing patrilineal clan, patriarchal culture and patrilocal family models in Armenia;
2. The church ceremony of wedding with its ritual of exchanging vows of the master (protector) and the one who honors (obedient) is being largely misinterpreted in the society thus creating grounds for abusing power in family and upholding the dominant status of men. At the same time, the ideas of mutual love, humility and honor laid in the essence of the rite, stress the importance of complementarity of spousal roles for harmonic family rather than differences thereof.
3. Passed through generations these images of man and woman create demand for boys who are display features of leaders and girls loaded with traits of submissiveness, ready to self- limitation. Supported by the

practices of differentiated upbringing in all circles of socialization this lays grounds for developing double standard culture in boys and girls based on application of gender-biased morality and permissibility (i.e. what is good or bad for him and for her).

4. The various practices of discerned upbringing, especially the high control and restrictions that apply to girls' behavior with regard to time, space, verbal and physical activity, the variety of their duties also contribute to the shaping of stereotypical images of men and women. Notably, the freedom and high level of permissibility in upbringing of boys sustain the existing gender inequality and create an illusion of the pre-defined nature of things.
5. The prevailing aspects of rearing girls are based on the assumption of her "to leave the household soon" and directed at raising them as future mothers and humble daughters-in-law, where self-sacrifice and responsibility are crucial for these roles. All restrictions of the time-and-space activity, sexuality, verbal activity and behavior are aimed at nurturing high sense of responsibility in girls and ability for self-limitation in personal desires and self-norming. Eventually, these qualities make girls "easy-to-adapt" for living in another family and become important prerequisites for the wellbeing of the people in their environment (husband, children, parents-in-law).
6. The upbringing of boys is built on the presumption of becoming a "pillar of the household" that gives a list of not-earned privileges and benefits to them in the family and society. These not only determine the male dominant position in society but also often limit boys' pro-activeness and hinder their motivation for achievement. Since boys enjoy many "gender benefits" without high efforts (e.g, easier schooling, higher salary), they become less motivated to aspire and less determined to achieve.
7. At the same time, the same circumstance creates additional motivation for high level of activity in women that is mostly expressed by better school performance, and later, as a result of frustration and limitations, may transform into aspiration to excel in carrying out mother's and housewife's role. However, this model leaves no space for developing girls' competence to become a helpmate/better half for their spouses that creates additional risk for the family conflicts and increased level of family dissatisfaction and psychological isolation.
8. The pre-condition of being/acting non-feminine for boys' socialization infuses negative attitude in them towards everything that is considered feminine as well as creates distorted perception of the femininity as inferior.

9. The expectations that parents have in relation to their boys and girls clearly reflect the notion that society prescribes to men and women: anticipation of high level of social activity and career achievements from boys and modest achievements from girls, acquisition of “feminine professions”, coupled with “being an exemplary daughter-in-law” and zealous motherhood. Starting from early childhood, these expectations define the scope of self-realization for children and provide the early plan for their entire life.

In fact, gender socialization, being intended to suit children to gender perceptions prevailing in society, limits both women and men opportunities for self-actualization, suppressed the creativity of woman, and the expressiveness of man, reduces the mutual understanding between them by determining the stress raised from the unequal distribution of duties and responsibilities. Prevention and resolution of these problems is possible by making some changes in family upbringing and educational system. In particular we offer. raising awareness of parents and educators about the impact of conservative gender stereotypes and the need to educate children on an equal and harmonious conditions, and provide information on effective responses to children’s gender specific and unspecific behaviors, to ensure equal proportion of women and men involved in child raising process to reduce the negative effects of bringing up children in mainly feminized environment.

Գրականության ցանկ

1. Բարխուդարյան Ս. Գ., Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում.– ՊԲՀ, N 2, 1966, էջ 25-40:
2. Գարգրցյան Լ., Հայաստանում արու զավակի նախապատվության պատճառները: - Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու.- Եր.: ԵՊՀ հրատ., 2014., էջ 255-258:
3. Գիլմոտ Բ. Ջ., Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. Ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն: - Երևան, 2013:
4. Գոշ Մխիթար, Դատաստանագիրք, Թարգմ. Մաքսիմ Ոսկանյանի.- Երեւան, 2001:
5. Գևորգյան Գ. Գ., Ղզար, ՀԱԲ, Հ. 10.- Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:
6. Թեմուրճյան Վ. Ս., Գամիրքի հայերը, ՀԱԲ, Հ. 1.- Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970:
7. Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, Հ. 12 .- Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981:
8. Լիսիցյան Ստ., Ձանգեգուրի հայերը.- Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969:
9. Ծատուրյան Ռ., Գեոդերային դերերը ՀՀ տարրական դպրոցի դասագրքերում, Երևան, 2014, http://www.osf.am/wp-content/uploads/2014/01/Gender_roles_in_primary_school_textbooks-2012.pdf
10. Կոչոյան Ա., Գևորգյան Ա., Առնականությունն ու գեոդերային բռնությունը հայկական հեռուստատեսիայում, Երևան, 2014, <http://www.yasu.am/files/Reserch%20paper%2003.09.2014..pdf>
11. Նահապետյան Ռ. Ա., Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ): Պատմաազգագրական ուսումնասիրություն. - Եր.: ԵՊՀ հրատ., 2012:
12. Նահապետյան Ռ. Ա., Կինը հայոց ավանդական ընտանիքում (ըստ սասունցիների ազգագրական սովորույթների), ՊԲՀ, 2009, 1(180), էջ 71-78:
13. Սեդրոսյան Կ. Վ., Արիեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լեռնականացիների կենցաղում. ՀԱԲ, Հ. 6 - Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974:
14. Վարդանյան Լ. Մ., Տղամարդկանց տարիքային խմբերի ավանդույթները հայերի մեջ, ՀԱԲ, Հ. 12. - Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981:
15. UNFPA Հայաստան. Մեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում, Ջեկույց. Երևան: UNFPA, Առողջապահության նախարարություն, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ, Երևան, 2011:

16. Бадентэр Э., Мужская сущность. — М.: АО «Изд-во «Новости»», 1995.
17. Бергер П., Лукман Т., Идентичность. В кн. Психология самосознания. /Под ред. Д.Я. Райгородского. Самара, БАХРАХ-М, 2000, (стр.567-588).
18. Клецина И., Гендерная социализация. Учебное пособие.-СПб.: Издательство РГПУ им. А.И. Герцена, 1998.
19. Кон И. С., Ребенок и общество. М., «Академия», 2003.
20. Кон И. С., Гегемонная маскулинность как фактор мужского (не)здоровья / Социология: теория, методы, маркетинг, 2008, 4, стр. 5-16.
21. Попова Л. В., Проблемы самореализации одаренных женщин // Вопросы психологии. 1996. № 2., стр. 31-39.
22. Репина, Т. А.. Проблема полоролевой социализации детей / Т. А. Репина. Москва – Воронеж, 2004.
23. Рубин Г., 2000. Обмен женщинами: заметки о “политической экономии” пола // Хрестоматия феминистских текстов. Переводы / Под ред. Е. Здравомысловой и А.Темкиной. СПб.: Д.Буланин. (стр. 89-139).
24. Уэст К., Зиммерман Д., (1997). Создание гендера // Гендерные тетради. Труды СПб филиала ИС РАН. СС. 94 – 124.
25. Фрейд З., Введение в психоанализ. Лекции. М., Наука, 1989,
26. Чодорой Н., Воспроизводство материнства: Психоанализ и социология гендера.-М. РОССПЭН, 2006.
27. Armstrong C., Squires J., (2002). Beyond the Public/Private Dichotomy // Contemporary Political Theory N1, (pp. 261-283).
28. Bandura, A. (1989). Social cognitive theory. In R. Vasta (Ed.), Annals of child development. Vol. 6. Six theories of child development (pp. 1-60). Greenwich, CT: JAI Press.
29. Bandura A., (2001). Social Cognitive Theory: An Agentic Perspective. Annual Review of Psychology N52, (pp.1-26).
30. Barker, G., Contreras, J.M., Heilman, B., Singh, A.K., Verma, R.K., and Nascimento, M., (2011). Evolving Men: Initial Results from the International Men and Gender Equality Survey (IMAGES). Washington, D.C.: International Center for Research on Women (ICRW) and Rio de Janeiro: Instituto Promundo.
31. Barry H.III, Bacon M., Child I., (1962). A Cross-Cultural Survey of Some Sex Differences in Socialization. In J.F. Rosenblith and W. Allinsmith (Eds.). The Causes of Behavior: Reading in Child Development and Educational Psychology. Boston MA, Allyn and Bacon Inc., (pp.253-258).
32. Bem S., (1981). Gender Schema Theory: A Cognitive Account of Sex Typing. Psychological Review N88, (pp.354-364).
33. Brannon R., (1976). The Male Sex Role: Our culture’s blueprint for manhood, what it’s done for us lately // The Forty-Nine Percent Majority: The Male Sex Role Reading / Ed. By D.David, R.Brannon. . MA: Addison-Wesley, (pp. 1-48).
34. Chodorow N., (1978). Reproduction of Mothering. Psychoanalysis and the sociology of gender. Berkeley, University of California Press.
35. Connell R., (1987). Gender and Power: Society, the Person, and Sexual Politics, Satnford, Stanford University Press.
36. Connell R., (2002). Gender. Cambridge, U.K.: Polity Press.
37. Connell R., (2005). Masculinities (2nd ed.). Sydney: Allen & Unwin Australia.

38. Corman W.C., (2013). Sexual and Gender-Based Violence: What is the World Bank Doing, and What have We Learned? A Strategic Review. World Bank: SocialDevelopment. Washington.
39. Doyle J. A., (1989). The male Experience (2nd ed.) Dubuque, IA, William C. Brown Co.
40. Fleming P. Barker G. McCleary-Sills J. Morton M. (2013). Engaging men and boys in advancing women's agency: Where we stand and new directions. Women's Voice, Agency, & Participation Research Series No.1
41. Friedl E., (1978). Society and Sex Roles.// Human Nature. April (pp.149-158).
42. Garcia-Moreno, C., Pallitto, C., Devries, K., Stockl, H., Watts, C., & Abrahams, N. (2013). Global and regional estimates of violence against women: prevalence and health effects of intimate partner violence and non-partner sexual violence. Geneva: World Health Organization.
43. Godelier M., (1981). The origins of male domination. – New Left Review, 127, 17.
44. Goffman E., (1979). Gender Advertisements. New York: Harper and Row.
45. Golombok S., Fivush R., (1994). Gender Development, Cambridge University Press, New York & Cambridge.
46. Heise L., (2011). What works to prevent partner violence? An Evidence Overview: London: London School of Hygiene and Tropical Medicine.
47. Howard J. A., Jocelyn H. A. (1997). Gendered Situations, Gendered Selves. Thousand Oaks, CA: Sage
48. Kohlberg L., Ullian D.Z., (1974). Stages in the development of psychosexual concepts and attitudes. In R.C. Friendman, R.M. Richart, R.L. Vande Wiele (Eds.), Sex differences in behavior, New York. Wiley. (pp. 249-261).
49. Parsons T., (1964) Social Structure and Personality. New York: Free Press.
50. Ricardo, C., Eads M., & Barker G., (2011). Engaging boys and young men in the prevention of sexual violence: A systematic and global review of evaluated interventions. Pretoria: South Africa: Oak Foundation
51. Smith S., Cook C., (2008). Gender Stereotypes: An Analysis of Popular films and TV, Conference 2008, The Geena Davis Institute on Gender in Media, http://seejane.org/wp-content/uploads/GDIGM_Gender_Stereotypes.pdf
52. Stockard J., Johnson M.,(1980). Sex Roles: Sex Inequality and Sex Role Development, Prentice Hall.
53. The European Institute for Gender Equality (EIGE)., (2013). Gender Equality Index Report. Italy.
54. Wood J., (2015). Gendered Lives: Communication, Gender and Culture. 11th ed., Cengage Learning.
55. UNFPA (2012). Sex Imbalances at Birth. Current Trends, Consequences and Policy Implications. – Bangkok.
56. Unger R. K., (1990). Imperfect reflections of reality: Psychology and the construction of gender. In R. Hare-Mustin & J. Marecek (Eds.). Making a difference: Representations of gender in psychology. New Haven: Yale University Press, (pp. 102 - 149).

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Լիլիթ Գարգրցյան, Ինգա Հարությունյան

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ

Գործընթացն ու արդյունքը

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Չափսը՝ 70x100 $\frac{1}{16}$: Տպ. մամուլը՝ 5.875:
Տպաքանակը՝ :

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1